

5801

Հեռանկար

Հեռ. գաղտնի պայմաններ
կոմպյուտեր

3knt/48.92/

2-51

3
34

Ա. ՅԵՆՈՒԿԻԶԵ

**ՄԵՐ ԳԱՂՏՆԻ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ
ԿՈՎԿԱՍՈՒՄ**

ՅԿՊ(47.925)
Ե-51

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1927

3KPI(47.925)


6-51

Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ

25 AUG 2005

14 NOV 2000

329



ՄԵՐ ԳԱՂՏՆԻ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՍԻՍԻՍԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ-ՅԵՐԵՎԱՆ. 1927



72740.63

Ռ. Ս. Դ. Բ. Կ. ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆԼԵԳԱԼ ՏՊԱՐԱՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊԵԼՈՒ ՅԵՎ ԲԱՆԵՑՆԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ 1900-1906 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ*

Մեր կուսակցության կյանքի և գործունեության ընթացքում տեղի ունեցած այն դեպքերը, վորոնց մասին ուզում եմ այժմ ձեզ պատմել՝ հիմնվելով իմ հիշողությանս վրա, անկասկած մեր կուսակցության ապագա խաղաղար պատմության լավագույն եջերը պիտի կազմեն։ Այդ դեպքերն ընդգրկում են 5—6 տարիների մի շրջան։ Չնայելով դրան՝ շատ մոմենտներ հիշողությանս մեջ մնացել են չափազանց պարզ և ցայտուն։

Ընդհանրապես մեր կուսակցությունը չափազանց հարուստ է բովանդակությամբ և աշխատանքի լեզու թե անլեզու շրջաններում նա իր կատարած կազմակերպական շինարարությամբ, անկասկած, ամենաուժեղ կուսակցությունն է՝ համաշխարհային բանվորական շարժման մեջ։ Մասնավորապես անլեզու կուսակցական տպարաններ կազմակերպելու գործում, վորի մասին պիտի լինի խոսքս. մեր կուսակցությունը՝ Ռուսաստանի և Արևմտյան Յևփոսյան բոլոր հեղափոխական կուսակցությունների մեջ առաջին տեղն է բռնում։ Վոչ մի հեղափոխական կուսակցություն, նույնիսկ նարոդովոլցիները, չի ունեցել այն քանակով, այն արտադրողականությամբ, արտաքին ու ներքին այնպիսի կազմակերպությամբ կուսակցական անլեզու տպարաններ, ինչպիսիք ունեցել է հին Ռ. Ս. Դ. Բ. Կ.։

Յես պետք է շատանամ միայն այն պատմությամբ, վոր վերաբերում է այդ տպարանների աշխատանքների կազմակերպման, սակայն ստիպված պետք է լինեմ դրան համընթաց, կողմնակի կերպով, իհարկե, շոշափել համակուսակցական կյանքի այս կամ այն յերևույթները։ Հարկավոր եմ համարում այստեղ ևեթ ասել. վորովհետև յես հաճախ ստիպված պիտի լինեմ առաջին դեմքով խոսելու և պիտի պատմեմ շատ լավ կողմերը մեր այն ընկերների, վորոնք աշխատել են այդ տպարաններում, են գլխից հայտնում եմ, վոր այս ամբողջ պատմության մեջ անձնապես ինձ պատկանում է յեթե վոչ յերկրորդական, հաճենայն դեպս վոչ առաջին տեղը. այդ տպարանները կազմակերպելու գործը կատարել են ուրիշ ընկերներ, վորոնց մասին խոսք կլինի հետո։

Այդ բնագավառում ամենից գլխավոր աշխատողը և կովկասում մեր կուսակցության անլեզու տպարանական գործի առաջին կազմակերպողն ու հիմնադիրը յեղել է հանդուրժյալ ընկեր Վլադիմիր Կեցխովելին։ Նա վոչ

* Այս նյութն ընկ. Յենուկիձեն ղեկուցել է 1923 թ. հունվարի 14-ին հին բայլեն-վիկների ակումբում։
Տպվում է միջանի աննշան հապավումներով։

միայն հիմնել ու կազմակերպել ե առաջին անլիգալ տպարանը, այլև նրա արտակարգ յեռանդի, նրա արտակարգ կազմակերպչական ընդունակությունների շնորհիվ՝ նրա ազդեցության տակ և նրա միջնորդութեամբ առաջ ե յեկել ընկերների մի ամբողջ սերունդ, վորոնք հետագայում աչքի յեն ընկել իրանց գործունեությունումը այդ ասպարիզում:

Վլադիմիր Կեցխովիչն, վորը Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի նախկին սաներիցն էր, 1895—1897 թվականներին անլիգալ խմբակներում մեր ավագ ընկերն էր, և մասնավորապես ավագն էր սեմինարիայի խմբակի, վորի մեջ, իմիջի այլոց, մասնակցում էր նաև Զուգաշվիլի—Ստալինը՝ Հաս. Կ. Կ. Կ. Կ. ներկա քարտուղարը: Յես բախտ եմ ունեցել յերկու տարուց ավելի ընկ. Կեցխովիչու հետ գաղտնի աշխատելու, ինչպես նրա ամենամտերիմը, և 1902 թ. ձերբակալվելուց հետո՝ նրա հետ Մետեխի բանտում նստելու, վորտեղ և նա ընկավ պահակի գնդակից 1903 թ. ոգոստոսի 17-ին: 1898 թ. վերջին յես Թիֆլիսի յերկաթուղու գլխավոր արհեստանոցից տեղափոխվեցի Բագվի յերկաթուղային դեպոն՝ մեքենավարի ոգնականի պաշտոնով:

Այն ժամանակ Բագվում վոչ մի բանվորական կուսակցական կազմակերպություն, նույնիսկ խմբակ, գոյություն չուներ (խոսքս վերաբերում է 1898 թ. աշնան), այլ կային միայն հատ-հատ ընկերներ, վորոնց մի մասն աքսորականներ էին՝ Ռուսաստանից յեկած (մեծ մասը Մոսկվայից՝ Զուբատովի ձեռքով աքսորված), մի մասն էլ արտասահմանյան տարագրությունից վերադարձած: Թիֆլիսի ընկերներն այդ ընկերներից միջանիսների հետ կապ ունեյին: Յես Բագու գնացի այդ ընկերների հասցեները ծոցումս: Շուտով այդ հասցեների շնորհիվ մոտեցա դրանց, սակայն համոզվեցի, վոր շատ պատճառներով այդ ժամանակներում այդ ընկերների ոգնությունը չպիտի աջողվի Թիֆլիսի անլիգալ խմբակների տիպարով՝ բանվորական խմբակներ կազմակերպել Բագվում, և այդ ընկերներից մեր ստացած ոգնությունը կարող է լինել միայն՝ մասամբ դրամ՝ կազմակերպության համար, մասամբ էլ գրականություն ու խորհուրդ:

1899 թ. սկզբին ինձ և յերկու ընկեր-յերկաթուղայինների, վորոնց հետ ծանոթ էյի դեռ Թիֆլիսում յեղած ժամանակ, աջողվեց կազմակերպել առաջին խմբակները վոչ միայն յերկաթուղու շրջանում, այլև այդ շրջանին մոտ գործարաններում և արհեստանոցներում: Այդ միևնույն թվին մեզ աջողվեց յերկու խմբակ կազմակերպել նավթարդյունաբերական շրջանում (Սաբունչի): Այդ խմբակները յեղան հիմնական բլիջները Բագվի կազմակերպության, վորին վիճակված էր հսկայական դեր խաղալ համայն Ռուսաստանի մասշտաբով:

1899 թ. վերջին Վլադիմիր Կեցխովիչն ստիպված էր Թիֆլիսից Բագու տեղափոխվել: Նա աշխատում էր Թիֆլիսի կազմակերպության մեջ՝ Նս տրամվայի բանվորների առաջին գործադուլի ղեկավարն էր յեղել, և ինչպես աչքի ընկնող կուսակցական գործող, այլևս անկարելի յեր նրան մնալ Թիֆլիսում: Բացի դրանից հայտնվել էր, վոր նրա հնարադիտությունը, շնորհիվ այն հանգամանքի, վոր առաջներում աշխատել և լիգալ տպարանների տպագրիչներին շրջանում, աջողվել է տպել թերթեր, կոչեր և թուղթիկներ՝ Թիֆլիսի կազմակերպության անունով:

Նրա գործունեությունը, իհարկե, չէր կարող ժանդարմների հսկողությունից վրիպել, և նա ստիպված յեղավ հեռանալ Բագու ուրիշ անունով:

Յեվ ահա մի ուր, 1899 թ. աշնան, Կեցխովիչին հայտնվում է ինձ մոտ և իրան հատուկ յեռանդով ու անխոնջ աշխատասիրությամբ ձեռք է զարկում գործին: Խմբակային աշխատանքների գլխավոր ծանուցությունը այդ աշխատանքներն աշխուժացնելու և ծավալելու պարտականությունը, ինչպես նավթային շրջանում, նույնպես և Սև ու Սպիտակ քաղաքներում, ընկնում էր ընկ. Կեցխովիչու վրա, ըստ վորում նա, անկասկած, թե իր կազմակերպչական ունակություններով և թե իր մտավոր պաշարով շատ բարձր էր կանգնած մեղանից՝ ինձանից և մյուս ընկերներից, թե և մենք մինչև նրա Բագու գալն արդեն սկսել էյինք կուսակցական աշխատանքը:

Ինչքան բանվորական մասսաների մեջ աշխատանքները ծավալվում էյին, ընկ. Կեցխովիչին այնքան էլ համառությամբ էր կրկնում միևնույն միտքն ամեն մի խոսակցության ժամանակ, թե անհրաժեշտ է կազմակերպել մի փոքրիկ անլիգալ տպարան կամ տպագրիչ մամուլ: Նա շարունակ պընդում էր, վոր լիգալ մարքսիստական գրականությունը, մասնավոր թերթը (լրագիրը), (իդեալ է ասել, այդ ժամանակ Թիֆլիսում վրացերեն թերթը (լրագիրը), (իդեալ է ասել, այդ ժամանակ Թիֆլիսում վրացերեն թերթը) չէր կարող բավարարել Բագվի և Ռուսաստանի հիմքերի վրա յեր դրված), չի կարող բավարարել կուսակցական տանի այլ տեղերի այդ ժամանակվա բանվորական շարժման կուսակցական պահանջներին. և խնդիրներին, ուստի և նա պընդում էր, վոր մեր բոլոր ուժերը գործ դենք կազմակերպելու թեկուզ մի հենց ամենահասարակ անլիգալ հրատարակչություն: Սակայն գլխավոր արգելքն այն էր, վոր մենք վոչ մի միջոց չուներինք: Անդամական մուծումները, վոր մենք սահմանում էյինք բանվորական խմբակների կազմակերպման հենց առաջին օրերից, պարզ է, չէյին կարող բավական լինել տպարան կազմակերպելու համար:

Անդամակցական մուծումները հազիվ էյին բավականանում խմբակներին ամենաանհրաժեշտ ծախսերը հոգալու: Յեվ ահա ընկ. Կեցխովիչն սկսում է աշխատել այդ միջոցները ձեռք բերելու համար: Այդ միջոցների մի մասը նա ձեռք բերավ իր յեղբորից, վորը, յեթե չեմ սխալվում, Պարսկաստանի սահմանի վրա այդ ժամանակ անտառի փոքրիկ կապաններ ուներ: Ընկեր Կեցխովիչն յեղբորը նամակ գրեց, այստեղ մի փոքրիկ խորամանկություն բանեցնելով, վոր ինքը ցանկանում է ուսումը շարունակել, մտադիր է թողնել ամեն մի հեղափոխական աշխատանք և դիմում է նրա՝ յեղբոր, ոգնություն: Շուտով նա 200 ուրբ. փող ստացավ մի նամակի հետ, վորով յեղբայրն իր գոհունակությունն էր հայտնում, վոր Վլադիմիրը «խելքի յե յեկել»: Այն ժամանակ 200 ուրբ. մեր կազմակերպության համար մի ամբողջ կարողություն էր: Մենք կարծում էյինք, վոր այդ 200 ուրբով պիտի կարողանանք մեր բաղձալի գործը կազմակերպել: Փողն ստանալուց հետո՝ Լադո (Վլադիմիր) Կեցխովիչն տաք-տաք գործի կապահարկավոր էր կազմակերպել ձեռքի փոքրիկ տպագրիչ մամուլ: Մենք կապ ունեյինք Թիֆլիսի կազմակերպության հետ, այս գործի առթիվ Թիֆլիսի հետ հարաբերության մեջ մտանք. սակայն պարզվեց, վոր բացի փոքրիկ նյութական ոգնությունից և տառերից ու այլ տպարանական պարագաներից, Թիֆլիսն անկարող է մեզ ոգնություն հասցնել: Ուստի և ստիպված

Տպարանի կառավարիչը դուրս յեկավ մի շատ սիրալիւր մարդ. նա ամբողջ տպարանը մեղ մեկ-մեկ ցույց տվավ: Մենք հրաժեշտ տվինք և դուռն յեկանք: Պարզ է, այցետոմսերի համար նորից տպարան չգնացինք, թող վոր տոմսերն ել պատվիրել էյինք մտացածին անուններով: Ընկ. Կեցխովնիչին՝ առաջարկեց, վոր տպագրական մամուլը, հարթակը (պլիտան), գլանը և ժամուլի ուրիշ մասերը գծագրեմ: Առանձին մասերը պատվիրեցինք ջուկ-ջուկ գործարաններում: Լավ հիշում եմ՝ պլիտան և միքանի ուրիշ մասեր պատվիրեցինք Ռեխսի գործարանում (կարծեմ՝ այդ գործարանը մինչև այսօր ել գոյութիւն ունի Բագվում, իսկ գլանը՝ Նյգենշմիդտի Սեքադաքի գործարանում: Ռեխսի գործարանում մեղ վրա վոշվոք ուշադրութիւն չդարձրեց Կանխավճարն ստանալով, խոստացան մինչև մի ամիսը պատվիրը կատարել ու հանձնել մեղ: Նյգենշմիդտի գործարանում, յերբ մենք խոսում էյինք արհեստանոցի կառավարչի հետ, մոտեցավ մի խորամանկ պարոն և ասաց. «Ա, գիտեմ, դա հավանորեն տպագրական մամուլի համար է»: Ընկեր Կեցխովնիչն դրան հանգիստ պատասխանեց. «Այո, տպագրական մամուլի համար է: Դուք շատ ուշիմ մարդ եք, շատ առաջ կգնաք, յերիտասարդ, սակայն՝ ձեզ խորհուրդ եմ տալիս՝ յերբ ձեզ չեն հարցնում, ձեր մտքերը դուր մի վատնեք»: Իսկ կառավարիչը «յերիտասարդ պարոնին» խիստ նկատեց, վոր ուրիշի գործերին չխառնվի»: Մեկ թե մեկուկես ամսից հետո, ինչպես պայմանավորվել էյինք, պետք է մեր պատվերների գինը վճարեյինք: Մենք պետք է շտապեյինք և հոգ տանեյինք նախ՝ տպարանի շինքի համար, ու յերկրորդ՝ տառերի և այլ պարագաների համար, ինչպես՝ տպագրական մուրի, գլանակների և այլն: Հավանորեն ձեզանից շատերը ծանօթ են տպագրական մամուլին և գիտեն, թե դրա համար ինչ է պահանջվում: Յերբ հաշվեցինք, թե ինչքան կնստի այդ բոլորը, պարզվեց, վոր 200 ուրբ. բավական չպետք է լինի մամուլի արժեքը վճարելու: Ուստի և ինձ ուղարկեցին Թիֆլիս, վոր միջոցների մասին մեր այնտեղի ընկերներին հետ բանակցեմ: Յես լավ հիշում եմ, թե ինչպես հանդիպեցի յերկու ընկերների: Դրանցից մեկը՝ ամբողջ վերաստանում հայտնի Սիլվեստր Զիբլաձե

եր, այն ժամանակվա կազմակերպութեան պարագլուխը, իսկ մյուսը՝ այն
 ժամանակ կուսակցութեան յերիտասարդ անդամ, ընկեր Ստալին-Կոբա-
 կամ Սոսոն եր, ինչպես այն ժամանակ նա կոչվում եր։ Յես նրանց հան-
 դիպեցի թիֆլիսի կայարանի մոտ՝ մի պանդոկում։ Նրանք նախ մերժեցին
 ինձ միջոցներ տալ այն հիման վրա, վոր թիֆլիսի կազմակերպութունը
 ցանկանում եր, վորպեսզի տպագրական ամբողջ գործն իր հսկողու-
 թեան ու ղեկավարութեան տակ լինի։ Այլապես, ասացին նրանք, ան-
 կարելի յե թիֆլիսի կոմիտեի խղճուկ միջոցներէց 100 կամ 150 ուրբ.
 վտանգի յենթարկել։ Այդքան եր մեր խնդրած գումարը։ Վորովհետեւ
 ինձ առաջարկված պայմանների նկատմամբ ընկ. Կեցխովելուց վորոշ
 և պարզ ցուցմունքներ հունենէի, յես նրանց վոչինչ չկարողացա պատասխա-
 նել, և մենք իրար հրաժեշտ տվինք։ Սակայն մինչև Բագու վերադառնալս
 փորձեցի մի բան ստանալ տպարանական բանվորներից՝ Լադո Կեցխո-
 վելու խմբակի նախկին անդամներից։ Նրանք ինձ խոստացան, վոր յերեկո-
 յան դեմ—յերեկոյան յես պետք ե Բագու վերադառնալի—մինչև յերեք փութ
 տառ և մամուլի համար այլ նյութիւր կհասցնեն ինձ։ Փողի համար ել ասա-
 ցին, վոր կաշխատեն իրենց ընկերներէր շրջանում հավաքել և մինչև մի շա-
 բաթ այդ մասին ինձ տեղեկութիւն կտան։ Մի գրաշար ցանկութիւն հայտ-
 նեց ինձ հետ Բագու գնալու, վոր անձամբ մեզ ոգնե տպարանը սարքա-
 վորելու։ Յես այդ առաջարկութիւնը մերժեցի, վորովհետեւ Բագվում մեր
 մշտական աշխատանքների համար դեռ մի հուսալի, ապահով շէնք հունենէինք։
 Յերեկոյան Բագու մեկնեցի, տանելով ինձ հետ տառեր։ Այդ տառերն
 ուղղակի ածել եյինք խուրջինի մեջ. այն ժամանակ յես յերիտասարդ եյի
 և առողջ, և յերեք փթանոց ծանրոցը, վոր փոքր ծավալ ունեւ, հեշտութեամբ
 տարա վագոն և դրի վերեւի դարակի վրա, վորտեղ ինքս ել պառկեցի։ Պարզ
 ինձ վրա վոչվոր ուղադրութիւն չդարձրեց, բայց ինձ շարունակ թվում եր,
 ո՞ր անփորձութիւն, մի բանի համար ինձ վրա կասկած են տանում։ Բագու
 կայարանում ինձ դիմավորեց ընկ. Կեցխովելին. նա հեռվից ինձ աչքով
 նշան արավ, վոր իրեն հետեւում։ Մենք անցանք Բախանսկայա փողոցը,
 վորտեղ, կայարանից վոչ հեռու, սենյակ ունենայինք. մեր փոքրիկ տպա-
 րանը նախ պետք ե այդտեղ հավաքեյինք, դրա համար ել վարձել եյինք սենյակը։
 Յիրբ ընկ. Կեցխովելուն ցույց տվի, թե ինչ ձևով եմ բերել տառերը, նա
 սկսեց հայհոյել, ասելով, վոր մեզ շատ գիշերներ են հարկավոր, մինչև վոր
 տառերն իրարից ջոկենք և տեսակավորենք։ Մենք տառերի համար կասսա
 դեռ հունենայինք, դրա համար ել ամեն մի տառ ջոկում եյինք և առանձին
 թղթի մեջ փաթաթում։ Ամբողջ գիշերներ նստում եյինք այդ գործի համար.
 դժվարութեամբ եյինք ջոկում տառերը, ձուլածի վրա տառի պատկերը
 հակառակ (թարս) ե լինում։ Յերբ Կեցխովելուն հայտնեց թիֆլիսի
 ընկերների պայմանները, վորոնց ընդունելով մենք կարող եյինք նրանցից
 փող ստանալ, նա այդ պայմանները կտրուկ մերժեց, ասելով, վոր թիֆլիսի
 կազմակերպութեան կողմից վոչ մի հսկողութիւն չպետք ե լինի. յեթե նրանք
 վստահանում են, թող միջոց տան, իսկ յեթե վոչ, մենք առանց նրանց
 ել յողա կգնանք։ Մամուլի համար վճարելու ժամկետը հասավ, և մենք
 մինչ այդ չկարողացանք Բագվում փող ձգրել. ստիպված յեղանք նորից թիֆլիս
 գնալ, և այս անգամ նույն ընկերներս առանց այլևայլութեան տվին 100 ու.
 և մի պրոկլամացիա՝ ձեռագիր՝ տպագրելու համար։ Փողը գրպանուս, մի

գրաշար ընկերոջ հետ—Վաստ Յուլիան—Բագու վերադարձաւ։ Վերջապես մամուլի փողը վճարեցինք, մամուլն ստացանք և սարքեցինք, և ի մեծ ուրախություն մեր՝ առաջին թերթիկը, վոր տպագրւած էր ռուսերեն և վրացերեն, դուրս յեկավ շատ հաջող։ Իհարկե, մեծամեծ դժվարութիւններ կ'ընդունէր, վոր այդ գործը գլուխ յեկավ։ Աշխատում էինք սովորաբար գիշերը խմբակային պարապմունքներէջ հետո, փոքրիկ խնդրով սենյակում՝ առանց վառարանի, ծածկած փեղկերով։ Մակուլատուրան հատկապես տանում էինք մի ընկերոջ սենյակը, վորտեղ վառարան կար, և այնտեղ այրում։ Վճռվեց, վոր մեր ձեռքով տպագրւած բոլոր նյութերը պետք է ուղարկվին Թիֆլիս՝ Բագովում մեր մամուլի հետքը ծածկելու նպատակով։ Ընկ. Կեցխովիին այնպիսի բնավորութեան տեր մարդ էր, վոր յերեք գոհ չէր մնում ձեռք բերած արդունքներով։ Կարճ ժամանակից հետո մեր մամուլը նրան այլևս չէր գոհացնում իր քիչ արտադրողականութեամբ։ Նա ասում էր. «Յես չեմ կարող հանգիստ մնալ. յերազում տեսնում եմ, թե ինչպես են թափվում թերթիկներն ու գրքուկները, թափվում են և տարածվում հարյուրավոր և հազարավոր որինակներով»։ Շուտով յերևան յեկան այնպիսի չարագուշակ նշաններ, վոր անհրաժեշտ էր տպագրական մամուլը հալածել։ Մեր գիշերային աշխատանքը և ցերեկներն անհետանալը մեր հարևանների ուշադրութեանը մեղ վրա դարձրին։ Ընկ. Կեցխովիու ուղեղում հասունացել էր մի ծրագիր, այն է՝ ինչպես ել լինի ձարել միջոցներ և գնել իսկական տպագրական մեքենա կամ ամերիկյան մամուլ (ամերիկական)։ Այդ բոլորը կշռադատելուց հետո՝ ընկեր Կեցխովիուն ազատեցինք կազմակերպութեան ամեն տեսակ աշխատանքներէջ։ Իրանից հետո նա սկսեց հաճախ այցելել Բագվի տպարանները, աշխատում էր ծանոթութեաններ հաստատել։ Հասկանալի չէ՝ նա ապրում էր ուրիշ անունով (թղթերով) և մինչև անգամ ձեռք բերավ Թիֆլիսի մի տպարանատիրոջ անունով դոկումենտներ։ Այդ բոլոր ձևականութիւնները նա շատ լավ գիտեր։ Տպագրական մեքենա գնելու համար այն ժամանակվա որենքներով պահանջվում էր նահանգապետից թույլտվութիւն։ Նա գնաց Թիֆլիս և իր ծանոթ տպարանատերերից իմացավ այդ թույլտվութեան ձեռքը և վերցրեց նրանց պատճենները։

Պատվիրված էր արդեն շինելու Բագվի նահանգապետի կնիքը, նույնպես և հատուկ ձեռք էր բերված նահանգապետի ստորագրութիւնը՝ թափանցիկ թղթի վրա հանած։ Այս բոլորը սարքվել էր Թիֆլիսում։ Յեւ ահա Դավիթ Յոսիֆովիչ Դեմետրաշվիլու—այդ անունով նա ապրում էր,—նա ձեռք բերավ թույլտվութիւն՝ այն ժամանակվա Բագվի նահանգապետ Սվիզինի ստորագրութեամբ, վոր նա, Դեմետրաշվիլին, իրավունք ունի Կովկասի վոր քաղաքում ասես տպարան բաց անելու։ Ձեռքին ունենալով այդպիսի թղթեր, նա շուտով սակարկութեան մտով Բագվի տպարանատեր Պրոմիշլանսկու հետ և 900 ռուբ. գնեց նրա հին տպագրական մեքենան, վոր կարող էր տպել գրելու թղթի ֆորմատով։ Գործն արդեն արված էր, բայց միայն փող չկար, ինչպես սովորական էր այն ժամանակ մեր բոլոր կազմակերպութիւնների համար։ Ընկ. Կեցխովիին Բագվում դիմեց միջանի ընկերներէ, վորոնք այն ժամանակ այս կամ այն պաշտոնական դիրքն ունեւին, և Լեոնիդ Բորիսովիչ Կրասինի, Նիկոլայ Պետրովիչ Կազերենկոյի և Յեկատերինա Ալեքսանդրովնա Կիցի ոգնութեամբ մինչև 800 ռուբ. փող ձեռք բերավ, բայց և այնպես այդ գումարը բավական չէր մեքենան գնելու հա-

մար։ Այն ժամանակ կազմակերպութեան կողմից ինձ առաջարկեց, վոր յերկաթուղում պաշտոնս թողեմ և անցնեմ այնպիսի գործի, վոր ինձ ավելի հնարավորութիւն տար կուսակցական աշխատանքներով զբաղվելու և ժամանակուրապես ավելի շատ ժամանակ հատկացնելու տպարանի աշխատանքներին։ Յերկաթուղու հետ վերջնական հաշիվներս վերջացնելով, իբրև մրցանակ ստացա մի գումար (շոգեկառքի նորոգութեան և անցած տարածութեան համար), վոր սկզբում բավական էր մեքենան գնելու և սարքելու հետ կապված բոլոր ծախքերը հոգալու համար։

Յեւ ահա մեզ համար մի հանդիսավոր և ուրախալի որ մենք գնեցինք մեքենան և փոխադրեցինք մեր նոր բնակարանը։ Հիշում եմ՝ այդ բնակարանը գտնվում էր Վրոնցովսկայա փողոցի վրա՝ մի թուրքի տան։ Այդ թուրքի ու ընկ. Կեցխովիու միջև այնպիսի մտերմական հարաբերութիւններ հաստատվեցին, վոր ծերունի թուրքը միշտ գալիս, յերկար նստում էր տպարանում՝ այդ մեքենայի մոտ, և այդ բոլորը նրան այնքան էր դուր յեկել, վոր ուզում էր իր փոքրիկ Նուրիին (տղան) մեզ աչկերտ տալ։ Նա կրկնում էր, թե «գիրք չինել» ամենալավ պարապմունքն է։ «Նուրի»-ին սովորեցրու, խնդրում եմ, ընդունիր նրան քեզ մոտ, թող քեզ մոտ հինգ տարի աշխատե առանց ռոճկի»։ Նուրին դեռ փոքր էր, և նրա «աշխատանքը» սահմանափակվում էր դեռ մեղանից դանազան նվերներ ստանալով. մենք նրան յերես էինք տալիս։ Ինքը թուրքը յերեկոները մտնում էր մեզ մոտ և ժամանակ էր անցկացնում մեր ընկերակցութեան մեջ։ Նա առհասարակ միշտ տանն էր լինում, վոչ մի տեղ չէր գնում և շարունակ պտտում էր մեր շուրջը։ Ինչ վերաբերում է բերանբացութեան, պետք է ասել, վոր առհասարակ Բագվի ադրբեջանցիներն աչքի յեն ընկնում իրանց լուսկեցութեամբ, յերեք վոչվոքի վոչինչ չեն ասում։ Գլխավորն այն է, վոր մեր ծերունի Ալի-Բաբան չնչին կասկած անգամ չունէր, վոր մի այնպիսի պատվավոր, բարի, առատաձեռն, զարմանալի պարզ մարդ, և սիրալի ինչպիսին էր Դավիթ Դեմետրաշվիլին (Կեցխովիին), կարող է պարապել անլեզալ գործով։

Ընկերների այն հարցերին, թե ինչպես կարող էին կողմնակի մարդիկ մտնել անլեզալ տպարանը, ինչպես անում էին տան տերը և նրա փոքրիկ վորդին, յես պետք է պատասխանեմ, վոր Բագվի ադրբեջանցիների կյանքի պայմաններին անձանթ ընկերների համար՝ իրերի այդպիսի դրութիւնը, հիրավի, կարող և թվալ միանգամայն անհասկանալի։

Բագվի մուսուլմանական մասի ամեն մի տուն կամ բակ ապրում է միանգամայն կղզիացած և առանձնացած։ Տներն մեծ մասը պարփակված են բարձր պարիսպներով, ամեն մի տուն ունի փոքրիկ բակ։ Ադրբեջանցիները միմյանց մոտ գնում են միմիայն հրավերով, այն ել բացառապես տան տղամարդկանց բաժանմունքը։ Յեթե թուրքի տանն ապրում է մի այլակրոն, կողմնակի մուսուլմաններից վոչվոք առանց հատուկ հրավերի նրա մօտ չի գնալ։

Բացի դրանից, Բագվի մուսուլմանների մեծամասնութիւնը ռուսերեն չգիտի, վոստիկանութեան և կառավարական գանազան պաշտոնյաների հետ վոչ մի շփումն չունի և, լինելով քաղաքականապես բոլորովին անազարգացած, չնչին հասկացողութիւն անգամ չունի, վոր առանձին քաղա-

քացիներ կարող են զբաղվել հակառիշակա և հակահաճախարակա գործերով, առավել ևս տպագիր գրականություն ընադաժանում:

Բազմում խոշոր անլեզու տպարաններ պահելու հնարավորությունը պետք է վերագրել, բացի արտաքուստ լավ կազմակերպելուց և բացարձակ հաստատուն կարգապահությունից, քաղաքի մուսուլմանական թաղերի կյանքի իմ մատնանշած առանձնահատուկ պայմաններին: Որինակի համար մի գեղեցիկ օրինակ է: Այն տունը, վորտեղ գտնվում էր կենտրոնական մեծ անլեզու տպարանը, տան տիրոջ Մեկկա ուխտ գնալու պատճառով ծախվում է: Նոր տնատերը մի խումբ մուսուլմանների հետ մի որ յեկավ իր նոր գնած տունը դիտելու: Այցելուներին դիմավորեց ընկ. Սեմյոնը, վորը ցույց տվավ բոլոր սենյակները: Մենք, տպարանում բոլոր աշխատողներս, փակվեցինք այն սենյակում, վորտեղ գրված էր մեքենան և գրաշարանոցի կասսան: Յերբ այցելուները մոտեցան այդ սենյակին, Սեմյոնը հայտնեց, վոր այդ սենյակում են գտնվում իր մայրն ու քույրը, և յեթե ուզում են այդ սենյակն ել նայել, իր մորն ու քույրն ուրիշ սենյակ տեղափոխե: Մենք, սենյակում փակվածներս, լսեցինք, թե ինչպես ամբողջ կոմիսսիան միաձայն հրաժարվեց այդ մտքից և ներողություն խնդրելով՝ հեռացավ այդտեղից: Սեմյոնը հայտնեց, կատարելապես հավատացած լինելով, վոր մուսուլմանները բաղկացած կոմիսսիան վոչ մի դեպքում չպիտի ցանկանա մտնել այն սենյակը, վոր պատկանում է կանանց բաժանմունքին:

Գետնի յերեսին գտնվող բաց շենքերում անլեզու մեծ տպարան պահելը վորոշ չափով վտանգավոր էր, իհարկե, սակայն անլեզու տպարաններ կազմակերպելու առաջին շրջանում մենք բավականաչափ միջոցներ չունեինք, վոր կարողանայինք մեր աշխատանքների համար ընդհատակյա, բառիս տառացի իմաստով, պայմաններ ստեղծել: այդ հնարավոր յեղավ տպարանական աշխատանքների կազմակերպման յերկրորդ շրջանում:

Յերբ վերջապես մեզ հաջողվեց առաջին մեծ տպարանում տպագրել միջանի նյութեր և առաջին անգամ տպագրած նյութերը ցուցահանել թիֆլիսի կազմակերպության առաջ, վորը, պետք է ասել, շատ անվստահ էր վերաբերվում՝ մեծ մասշտաբով սկսած մեր ձեռնարկումներին, տպավորությունը չափազանց մեծ յեղավ: Յեվ հենց այս ժամանակ վճռվեց՝ ոգնել և աջակցել մեզ մարդկային ուժերով և նյութերով: Թիֆլիսի կազմակերպությունը մեր տրամադրության տակ զրավ գրաշարներ, բավականաչափ քանակությամբ տառեր, տվավ նաև փող՝ թուղթ, տպարանական մուր, ներկեր և ուրիշ նյութեր գնելու համար:

Այս բոլորը, ինչպես արդեն ասացի, տեղի յեր ունենում 1901 թվականի վերջին շրջանում: Այդ միևնույն ժամանակ արդեն կազմակերպված էր Բազմի կոմիտեն: Բազմի կոմիտեն անվանվում էր Ռուսաստանի Սոց. դեմոկրատական Բանվորական կուսակցության կոմիտե այնպես, ինչպես վոր թիֆլիսի կոմիտեն էր անվանվում՝ Ռ. Ս. Դ. Բ. Կ. առաջին համագումարից հետո (տեղի ունեցավ 1898 թ. մարտին): Մենք կապ ունեցինք վոչ միայն կովկասյան կազմակերպությունների հետ (այն ժամանակ կոմիտեներ կային թիֆլիսում, Բաթումում, Քութայիսում և Զիաթուրիում), այլ կապ ունեցինք նաև Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարի միու-

* Պատմվածքի ընթացքում այս դեպքը առաջ է բերվում իր տեղն ավելի մանրամասն:

թյան» հետ: Մենք կապ ունեցինք նաև Յեկատերինոսլավի «Յուժնիյ Բաբոչիյ» թերթի խմբակի հետ: Սակայն ամենից գլխավոր և ամենից վճռական նշանակություն ունեցող կապը, իհարկե, «Իսկրայի» հետ ունեցած կապն էր:

Բազմի կոմիտեն, վորի կազմի մեջ մտնում էին յես, և տպարանական կազմակերպության մեր խումբը, պատկանում էր իսկրայական գրողականներին, վորոնք այն ժամանակ ծնունդ էին առնում Ռուսաստանում: Մեր բոլոր աշխատանքները, ինչպես Բազմի կոմիտեում, այնպես ել ֆնացած անլեզու կազմակերպություններում, տարվում էին «Իսկրայի» գրողակի տակ ու նրա ներկայացուցիչներին հետ սերտ հարաբերություն պահպանելով: Այսպես շարունակվում էր մինչև կուսակցության յերկրորդ համագումարը, թեև մեզանում այն ժամանակ կազմակերպության մեջ նկատվում էին նաև ուրիշ հոսանքներ, վոմանք՝ հակվում էին Բուժնդի կողմը, վոմանք «եկոնոմիստների» կողմը, իսկ վոմանք ել՝ «Յուժնիյ Բաբոչիյի» կողմը, սակայն Բազմի կոմիտեի աշխատողների գլխավոր կազմը և մի առաջին խումբ՝ ընկեր Կեյսլովելու գլխավորությամբ ամեն ժամանակ ու շարունակ հարած էին «Իսկրային»:

Նոր տպարանը կազմակերպելուց հետո մենք շուտով գրագրություն սկսեցինք «Իսկրայի» հետ: Դեռ այն ժամանակ գիտեցինք, վոր կապ և գրագրություն ունենալով «Իսկրայի» հետ, հենց դրանով ել գրագրություն էինք ունենում ընկ. Լենինի հետ: Այն ժամանակ մենք նրան հաղորդեցինք, վոր ունենք տպարան, վորը կարող ել լավ, մաքուր ու մեծ քանակությամբ նյութեր տպագրել: Յեվ այն ժամանակ մեզ առաջարկ յեղավ՝ կապ պահպանել «Իսկրայի» հետ: Արտասահմանից շարունակ նամակներ էինք ստանում, «Իսկրայի» հետ: Արտասահմանից շարունակ նաև «Իսկրայի» «պոստ-արկղում» մեր առաստանում էինք պատասխաններ նաև «Իսկրայի» «պոստ-արկղում» մեր առաջարկած միջանի հարցերին: մեր հասցեն եր կամ ТВЕРДЫЙ ЗНАК կամ «Նինա»: ջարկած միջանի հարցերին: մեր հասցեն եր կամ ТВЕРДЫЙ ЗНАК կամ «Նինա»: յեր կոչվում Բազմի տպարանը: Մեզ առաջարկվեց շատանալ բացառապես այն տպագրական պատվերներով, վորոնք նշանակված էին Ռուսաստանի իսկրայական խմբերի համար: մեզ առաջարկվեց նույնպես՝ խզել կապը «Յուժնիյ Բաբոչիյի» հետ (կարծեմ՝ այդ թերթի 5, 7, 8 համարները տպագրվել են մեր տպարանում): Այս գործերին համընթաց մենք տպում էինք նաև «Իսկրան» փոքրացրած ծավալով: Արտասահմանից մեզ մայրեր (տառեր ձուլելու համար) էին ուղարկում՝ փոքրացրած ձևով: Այդ մայրերով մենք ստերեոտիպներ թափեցինք և այդ յեղանակով «Իսկրայի» չորս համարները (7—11) տպեցինք: Յերբ մենք արտասահման ուղարկեցինք մեր տպարանում տպված «Իսկրայի» մի որինակը, այնտեղից վորոշ առաջարկություն ստացանք՝ տպարանն ամբողջովին հատկացնել «Իսկրայի» տպաստվորության՝ այնքան գերազանց եր մեր տպագրությունը:

Յես հիշում եմ, վոր մի նամակում մեզ ուղղակի հանձնարարվում էր. «Մենք «Նինային» (մեր տպարանի անունը) խորհուրդ ենք տալիս՝ կտրել ամեն մի հարաբերություն «Ժենիայի» հետ («Յուժնիյ Բաբոչիյ») և ամուր կապվել «Կատիայի» («Իսկրա») հետ: Մենք այդպես ել արինք, ըստ վորում մեր բոլոր համակրանքներն «Իսկրայի» կողմն էին:

Յեվ, ի մեծ դժգոհություն Յեկատերինոսլավի և ուրիշ ընկերների, մենք ուղղակի նրանց մերժեցինք «Յուժնիյ Բաբոչիյ» տպագրել մեր տպարանում և սկսեցինք կատարել արտասահմանի իսկրայական կազմակերպության պատվերները, նույնպես և թիֆլիսի կոմիտեի պատվերները, գլխավորապես

վրացերեն: Բացի «Իսկրայից»՝ մենք տպում և տարածում եյինք նաև «Լիստոկ Բաբոտնիկա» թերթը: Այն ժամանակ «Բաբոտնիկը» լույս եր տեսնում արտասահմանում, նրան կից հրատարակվում եր «Լիստոկի»: Վրաստանի համար դրանք թարգմանվում եյին վրացերեն և տպվում: Բացի դրանից, Կեցխովելին վերամշակեց «Անտառի յեղբայրները» հայտնի հեքիաթը և տպագրեց վրացերեն:

Այդ ժամանակ արդեն կամպանիա յեր տարվում կուսակցության յերբորդ համագումար հրավիրելու համար: Յեվ ահա արտասահմանից գալիս են ընկերներ, վորոնք իրենց անվանում եյին, յեթե չեմ սխալվում, «Իսկրայի» գործակալներ: Այդ ընկերները մեկն ել յեկավ մեզ մոտ և գործոն մասնակցություն ունեցավ վոչ միայն Բագվի կազմակերպության աշխատանքներին մեջ, այլև մտավ այն խմբադրական փոքրիկ խմբակը, վորի կազմին մեջ եյին՝ ընկ. Կեցխովելին, Բոխլի Ֆայնբերգը, Գալպերինը և յես: Գալպերինը լավ կազմակերպիչ եր, շատ գիտուն և միանգամայն կողմնակից եր «Իսկրայի» տեսակետին: Այն ժամանակ «Իսկրայի» ազդեցության տակ (սկսել եյինք ստանալ) մենք մտադրվեցինք վրացերեն մի որդան հրատարակել և դրա համար բանակցություններ սկսեցինք Թիֆլիսի կազմակերպության հետ, վորտեղ այն ժամանակ իշխում եյին այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք եյին Ժորդանիա, Ջիրլաձե և ուրիշները: Ժորդանիան աշխատում եր Թիֆլիսում: Նա հրատարակում եր «Կվալի» լեզու թերթը, վորը Վրաստանում հսկայական ազդեցություն ունի: Յերբ մեզ հաջողվեց «Կվալին» համեմատել «Իսկրայի» հետ, մեզ համար պարզ յեղավ, վոր արդեն հասել ե ժամանակը, յերբ այլևս անկարելի յե լեզու մամուլի եջերում պնդել ու պաշտպանել մեր լոգոնդները: «Իսկրայի» և նրա ներկայացուցիչ Գալպերինի համաձայնությամբ վճույթ եր հրատարակել անլեզու թերթ: Այդ թերթի անունն եր «Բրձոլա» (Պայքար): Թիֆլիսի կազմակերպությունը, իդեմս ընկ. Ժորդանիայի և միջանի գրականագետների («Կվալի» աշխատակիցներ), շատ բացասաբար վերաբերվեցին անլեզու թերթի հրատարակության գործին: Նրանք ասում եյին՝ մենք այդ գործում կկորցնենք մեր միջոցները, թերևս նաև մարդկանց: Ինչ վերաբերում ե վրացական մասսաներին սպասավորելու գործին, «Կվալի» լեզու թերթի միջոցով ել այդ սպասավորությունը լիովին կատարվում ե: Այդ ուղղությամբ Թիֆլիսի ու Բագվի մեջ մի ամբողջ պայքար տեղի ունեցավ: Գործը հասավ մինչև անգամ մի փոքրիկ կոնֆերանսի՝ ընկ. Կեցխովելու վրա ազդելու նպատակով, վորը պնդում եր, թե անհրաժեշտ ե ստեղծել անլեզու որդան, պատճառաբանելով, թե «լեզու մարքսիզմը ապականում ե մասսաներին, չի կռում-կոփում պայքարի համար, վորովհետև նրանց հրամցվում ե «Ջրիկ» մարքսիզմ: Այդ կշռադատումներով ել նա պնդում եր, թե անհրաժեշտ ե անլեզու որդանի հրատարակությունը: Կեցխովելու վրա ազդելու նպատակով՝ Թիֆլիսի գլխավոր ձեռնարկությունների բանվորներից կազմում են մի խումբ և ուղարկում Բագու: Յես լավ հիշում եմ մեր հանդիպումը այդ բանվորների հետ, վորոնց հետ մենք ծանոթ եյինք 1896—1897 թ. թ. Թիֆլիսի խմբակներից: Այդ բանվորներն ուժեղ կերպով մեզ համոզում եյին, վոր վոչ միոցներ վատենք, վոչ ուժ՝ վրացերեն անլեզու թերթի հրատարակության համար, այլ խորհուրդ եյին տալիս մեզ՝ գրքույկներ ու թուղթիկներ հրատարակել և դրանով ել շատանալ:

«Քաղաքական որդանը,—ասում եյին նրանք,—մեզ հարկավոր չե, քանի վոր մենք ունենք «Կվալի» նման թերթ»: Բազմաթիվ որինակների, ցուցմունքների և «Իսկրայի» միջանի հողվածների քաղվածքների միջոցով Կեցխովելուն հաջողվեց համոզել այդ բանվորներին, վոր այդպիսի մի որդան, հիրավի, անհրաժեշտ ե: Մի ամբողջ որ վիճաբանելուց հետո, վերջապես, նրանք համոզվեցին, վոր անլեզու որդան անհրաժեշտ ե. նրանք խոստացան, վոր վերադառնալով Թիֆլիս՝ ամեն կերպ պիտի պնդեն, վոր Թիֆլիսի կազմակերպությունը, վոր այդ ժամանակ բավականաչափ հարուստ եր թե մարդկային ուժերով ու թե միջոցներով, աչակցե մեզ: Յեվ հիրավի, նրանք վերադառնալով Թիֆլիս՝ մեծ ազդեցություն գործեցին այն ժամանակվա կուսակցական կոմիտեյի վրա:

Վերջին տարիներս հաճախ եր պատահում ընկեր Ստալինի հետ, վոր այն ժամանակ Թիֆլիսի կազմակերպության անդամ եր, հիշել այն վիճաբանությունները, վորոնք տեղի եյին ունենում Բագվի և Թիֆլիսի միջև և վորոնք վերաբերում եյին մեր բանվորական շարժման համար՝ անլեզու մամուլի նշանակության մասին: Ընկեր Ստալինը շատ անգամ զարմացրով ընդգծում եր աչքի ընկնող ընդունակությունները հանդուցյալ ընկեր Կեցխովելու, վորը դեռ այն ժամանակ կարողանում եր հարցերն ուղիղ դնել՝ հեղափոխական մարքսիզմի վողու համաձայն: Ստալինը հաճախ հիշում ե, վոր ընկ. Կեցխովելին դեռ այն ժամանակ կանգնած եր ուղիղ բայլելիկության տեսակետի վրա: Յես ու ընկ. Ստալինը կասկած չունեյինք, վոր յեթե Կեցխովելին ապրեր մինչև այն մոմենտը, յերբ տեղի ունեցավ Ռ. Ս. Գ. Կ. յերկպառակումը, նա անկասկած կլիներ բայլելիկների շարքերում և մեկը՝ մեր կուսակցության ամենաազդեցիկ ու ամենաուժեղ աշխատակիցներից:

Յերբ Թիֆլիսի կազմակերպությունը համաձայնեց իր միջոցներով աշակցել Բագվի անլեզու որդանի հրատարակության գործին, մի ուրիշ վիճակի հարց ծագեց մեր ու Թիֆլիսի կազմակերպության միջև: Թիֆլիսի կազմակերպությունը պնդում եր, վոր թերթի խմբագրությունն ամբողջովին գտնվի Թիֆլիսում, իսկ Բագվի խմբին առաջարկվում եր տեխնիկաբար կատարել այն բոլորը, ինչ վոր կորոշե Թիֆլիսը: Այդ առաջարկը վճռապես դրվեց թե ընկ. Կեցխովելու և թե մեր ամբողջ խմբագրական գրուպայի կողմից: Կեցխովելուն համոզելու համար՝ Թիֆլիսցիները Բագու յեն ուղարկում իրանց ազդեցիկ անդամներից մեկին՝ Կեցխովելու անձնական բարեկամին, Պետական Դումայի ապագա անդամ Սևերիան Ջուդելուն: Ջուդելու և մեր խմբի միջև տեղի ունեցող բանակցությունները վոչ մի հետեվանք չեն տալիս, և բանը հասնում ե այնտեղ, վոր Կեցխովելին շատ սուր վաճառ չեն տալիս, և բանը հասնում ե իրավունքների բոլոր լեզու առաջարկները և առաջարկում ե Ջուդելուն անհապաղ վերադառնալ Թիֆլիս և հաղորդել այնտեղի ընկերներին, վոր ինքը՝ Կեցխովելին մերժում ե ամեն մի աշակցություն, վոր կլինի նրանց կողմից, և յեթե նրանք կշարունակեն պնդել և այդպես կտրուկ կզնեն խմբագրության տեղի հարցերը,—հրաժարվում ե նրանց հետ նաև վարեն հաղորդակցություն ունենալուց: Մեր խմբագրական գրուպայան, վորը Գալպերինի միջոցով կապ եր պահպանում «Իսկրայի» հետ, նույնպես պնդում եր, վոր ինքը ցանկանում ե Թիֆլիսի կազմակերպությունից անկախ

գոյութիւնն ունենալ և հպատակւում ե նախահամագումարյան հին «Իսկրայի» հրահանգներին:

Վրացիներն թերթը մենք հրատարակեցինք: Վրաստանում չկա և վոչ մի բանվոր՝ Վրաստանի հեղափոխական շարժման մասնակից, վորը «Բրձուլա» թերթը կարգացած չլինի: Այդ թերթը հսկայական դեր կատարեց վրացի բանվորներին հեղափոխականացնելու գործում, և վրացի ընթերցողներն այստեղ առաջին անգամ տեսան լեզալ և անլեզալ մարքսիստական որդաններն միջև յեղած տարբերութիւնը: Մեր այդ փորձը Թիֆլիսի կազմակերպութեան համար լավ որինակ յեղավ. չնայելով համեմատական լայն լեզալ հնարավորութիւններին, իր բոլոր ձեռքերը թափում եր, վոր լեզալ թերթերի կողքին հիմնե կուսակցական անլեզալ որդան:

Այդպիսի մի փորձ չէր կարող բեֆովը լինել այն վրացական մարքսիստ լեզալ գրականագետներին, վորոնք հետագայում վրացական մենշեկիստի հեռարանը դարձան:

Այստեղ յես, իդեպ, պետք ե ասեմ, վոր վրացի բանվոր մասսաներն իրանց հեղափոխական վորդով միշտ յեղել են ավելի շատ առաջ, քան վրացական ինտելիգենցիայից յելած իրանց առաջնորդները:

1901 թվականի ամենավերջին օրերում մեր աշխատանքների մեջ տեղի ունեցավ մի փոքր խոչընդոտ: Բանն այն ե, վոր «Իսկրայից» մայրիք ու գրագրութիւնն մենք ստանում եյինք զանազան հուսալի հասցեներով: Ատամնարույժ Սոֆիա Դինգբուրգի հասցեյով մենք ստացանք մայրերը՝ ծրարած նուրբ տախտակի արկղների մեջ: Այդ արկղներից մեկը բանալիս սաքսատանը պատահաբար շարդվում ե. մաքսատան պաշտոնյաները վոչ սի կերպ չկարողացան հասկանալ, թե ինչ բան ե արկղի պարունակածը: Նրանք ստիպված յեղան դիմելու ժանդարմական վարչութեան, վորը, ինչպես մենք հետո իմացանք, հատուկ հանձնաժողով ե հրավիրում՝ վորոշելու արկղի խորհրդավոր պարունակութիւնը:

Ատամնարույժ Դինգբուրգը ձերբակալվում ե 1902 թ. հունվարի լույս 1-ի գիշերը, և այդ հանգամանքը մեզ ու մեր տպարանը դնում ե վտանգավոր դրութեան մեջ: Սոֆիա Դինգբուրգին յերկար հարցաքննում են՝ նրա անունով ստացված փաթեթի համար, սակայն նա, անկեղծորեն, չի կարողանում բացատրել, թե այդ մայրերն ինչ բան են: Նա միայն մի բան գիտեր, վոր մեր խմբի անդամներից մեկն արտասահմանից ստանում ե անլեզալ ծրարներ. թե ինչ ե ու ինչու համար, ինքը վոչ մի հասկացողութիւն չուներ: Նա քաջաբար դիմացավ յերկար բանտարկութեան և վճռապես հրաժարվում եր ժանդարմական հետաքննութեան ժամանակ վորեւե ցուցմունք տալուց:

Յերբ մենք «Իսկրային» հաղորդեցինք մայրերի գլխին յեկած փորձանքի մասին, այնտեղից մեզ առաջարկեցին, վոր տպարանն աչքի լուսի պես պահպանենք, հնարավորութեան չափով ընդհանուր աշխատանքները կրճատենք և արտասահմանի գրականութեան փոխադրութեան աշխատանքներն ուժեղացնենք: Արտասահմանից գրականութիւնն ստանալու գործը մենք կազմակերպեցինք Բաթումում՝ ֆրանսիական «Պաքե» շոգենավային ընկերութեան միջոցով: Յերբ Մարսելից դուրս եր գալիս շոգենավը, վորը մեզ համար պետք ե բերեր անլեզալ բեռ, Բազմում մենք տեղեկութիւն եյինք ստանում. մեզ հաղորդում եյին շոգենավի անունը և այն նշանախոսը (պա-

րու), վորով պիտի դիմեյինք շոգենավում գտնվող վորոշ անձնավորութեան:

Առաջին անգամ փոխադրված գրականութիւնն ստանալու համար ինչ ուղարկեցին Բաթում 1902 թ. մարտի սկզբներին: Յերբ հասա Բաթում, աշակցութիւնն ստանալու համար դիմեցի այն ժամանակ հայտնի մարքսիստ Նիկոլայ (Կարլ) Սեմյոնովիչ Չխեյիձեյին, վորը մեծ կասկած հայտնեց մեր կազմակերպած գործի հաջողութեան նկատմամբ և շատացավ միայն նրանով, վոր «Պաքե» ընկերութեան գրասենյակի ծառայողներից մեկի անունը ինչ հայտնեց. ինչ ուրիշ յեղ չէր մնում, յեթե վոչ՝ դիմել մի վտանգավոր միջոցի. «Իսկրայի» արտասահմանյան գրականութիւնն ստանալուց անկութիւնը չափազանց մեծ եր:

Չխեյիձեյի ասած ծառայողին ճարեցի, նրան դուրս կանչեցի ավել և ուղղակի հայտնեցի Բազմից իմ գալու նպատակը: Այն շոգենավը, վորի վրա պետք ե լիներ մեր բեռը, կանգնած՝ եր հենց այդտեղ՝ նավակայանում: «Պաքեյի» գրասենյակի ծառայողը կարող եր անարգել շոգենավը մտնել: Իմանալու համար, թե արդոք շոգենավում բեռ կա այս-ինչ անձի անունով (ծանրոցն ուղարկվում եր շոգենավի գլխավոր խոհարարի անունով, վորին ուղղված եր մեզ հաղորդված նշանախոսը) — այդ ծառայութեան համար նա ինձանից ստացավ 10 ռուբ.՝ պայմանով, վոր յեթե ամբողջ ծրարն ստանամ, նրան տամ 15 ռուբ. ևս:

Այսպես, մենք պայմանավորվեցինք, վոր յերբ գիշերը շոգենավը հեռանա և կանգնի պայմանավորված հեռավորութեան վրա, յես յերկու մաքսանդանգ-նավավարների հետ պիտի նավակով գաղտագողի մոտենայի շոգենավին ավել հանդիպակաց կողմից, և նավակից տրված հայտնի նշանով գլխավոր խոհարարը պետք ե ծրարները ծովը նետեր: Գրականութիւնը ծրարված եր հատուկ մոմաթղթի մեջ, վոր անթափանց ե ջրի համար:

Այդ նույն գիշերը յես հաջողութեամբ յերկու փութ գրականութիւնն ստացա: Յերկու նավավարների ու «Պաքե» ընկերութեան ծառայողի հետ, հաջող մաքսանդանգութիւնից հետո, հավաքվեցինք մի գինետուն, վորտեղ իրար յերգվեցինք՝ հետագայում ել իրար «բարեկամ» մնալ:

Այդ յեղանակով մենք արտասահմանից շատ անգամ ենք գրականութիւնն ստացել և Բաթումում վոչ մի անգամ խոչընդոտի չենք հանդիպել: Միայն նորերս եր, վոր յես՝ այդ դեպքի մասին պատմելով, իմացա պատահաբար, վոր Մարսելից մեզ համար գրականութիւնն ուղարկողը յեղել ե Պյոտր Սմիդովիչը: Յերկուսով մի կուշտ ծիծաղեցինք, հիշելով մեր պատահական աշխատակցութիւնը, դեռ չճանաչելով այն ժամանակ իրար: Մեզ ուղարկված գրականութիւնը բաղկացած եր «Իսկրայի», «Ջարիայի» համարներից և «Իսկրայի» ու «Ջարիայի» գրուպաների առանձին հրատարակութիւններից:

Արտասահմանից գրականութիւնն ստանալով, մեր տպարանի գործը թեթեւացավ, բայց և այնպես տպարանի աշխատանքն անընդհատ շարունակվում եր, տպում եյինք ռուսերեն և վրացերեն գրքույկներ:

1902 թվականի սկզբներին բանվորական շարժումը Բազմում ընդունեց ավելի լայն և ըստ իր ուղղութեան և ծրագրի միանգամայն վորոշ չափեր: Այդպիսով Բազմի կազմակերպութիւնն աճում և ամրանում եր: Մեր խմբից միքանի ընկերներ, վորոնց թվում և յես, Բազմի կոմիտեյի անդամ

եյին՝ կոմիտեյի սկզբնավորութեան որից. նրանք, աշխատելով կազմակերպութեան և խմբակների մեջ, ունենալով միջանի ազդեցություն յեկույթներ, հեշտութեամբ կարող եյին տեղիք տալ մեզ հետեւելու՝ գիշերային աշխատանքի համար տպարան գնալիս: Սակայն ուրիշ վոչ մի հնարավորութիւն չկար ամբողջովին տպարանական գործին նվիրվելու կամ կազմակերպութեան մեջ աշխատելու, առանց վորեւէ առնչութիւն ունենալու տպարանի հետ, ըստ վորում մարդի պակասութիւնն ունեյինք, և դրա համար դժվար եր այդ յերկու աշխատանքներն իրարից զատել:

Ինկատի առնելով աշխատանքների մեջ այդ դժվարութիւնները, մենք հարց դրինք, վոր տպարանի և կուսակցական կոմիտեյի աշխատանքների համար յեղած ուժերը վերջնապէս բաշխվեն: Այդ միևնույն միջոցին եր, վոր արտասահմանից առաջարկվեց քննութեան առնել տպարանը Բագվից Ռուսաստանի կենտրոնը տեղափոխելու հարցը: Այդ առաջարկութեան մեջ վորոշակի մատնացուցց եր արվում, վոր կուսակցութեան համագումարից հետո, վոր այն ժամանակ նախապատրաստվում եր, ավելի նպատակահարմար կլինէր տպարանը փոխադրել Ռուսաստանի արդյունաբերական շրջանի քաղաքներից մեկը, վոր ավելի հարմար և դյուրին լինի թե կենտրոնին և թե ծայրերին: Այդ առաջարկութեան, հասկանալի չե, մենք համաձայնեցինք. վճռվեց՝ միջանի նախնական աշխատանքներից հետո՝ տպարանը Բագվում լիկվիդացիայի յենթարկել և տեղափոխել Ռուսաստան: Նշված եյին Վոլգայի վրա՝ Սամարա և Սարատով, իսկ կենտրոնում՝ Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքները: Մոսկվայի մասին վոչվորքի կողմից խոսք չեղավ, միանգամայն անհնար համարելով տպարանն այդ քաղաքում հաստատել:

1902 թվ. Բագվի կոմիտեն վճռեց «մայովկան» (մայիսի մեկը) տոնել քաղաքի փողոցներում, դուրս գալով փողոց ազդու ցույցով: Մենք ուժեղ կերպով պատրաստվում եյինք այդ յեկույթի համար. պատրաստեցինք մեծ քանակութեամբ կարմիր դրոշակներ՝ համապատասխան լոկուզներով, կանխորեն մեր տպարանում տպեցինք մայիսյան թերթիկներ Բագվի կոմիտեյի անունով և այլն:

Դեռ մինչև «մայովկան»՝ մարտի 14-ին, Բագվի կոմիտեյի անդամների մեծ մասը ձերբակալվեց: Կոմիտեյի անդամներից ազատ եյին մնացել յերկու հոգի՝ հանգուցյալ Բողդան Կնունյանցը և յես: Ինձ փրկել եր տպարանի գիշերային աշխատանքը: «Մայովկայի» բոլոր նախապատրաստական աշխատանքները մնում եյին մեզ վրա: Բագվի կոմիտեյի մի մասի կործանումից հետո՝ Բագվի տպարանի Ռուսաստանի կենտրոնը տեղափոխելու հարցը ավելի սուր կերպարանք ընդունեց: Այլրի յակդբին յես ընկ. Կեցխովելու և մեր տպարանի յերկու գրաշարի հետ—ընկ. ընկ. Բոլիվաձե և Յուլաձե—սկսեցինք տպարանը լիկվիդացիայի յենթարկել: Տառերը (մինչև 15 փութ) դարսեցինք, մի-մի փթանոց փաթեթներ շինեցինք: Այդ փաթեթները յես տանում եյի յերկաթուղու ռայոնը և այնտեղ հանձնում մեկին (մեքենավարի ոգնական), վորի հետ ծանոթ եյի վաղուց, յերբ ծառայում եյի յերկաթուղում, և վորի հետ դեռ կապ եյի պահպանում: Այդ ծրարները նա շոգեկառքով տանում եր Հաջի-Կաբուլ կայարանը, վոր շատ մոտ ե Բագվին, և այնտեղ թաղցնում մեր մի հուսալի ընկերով մոտ, վոր պահեստապետ եր: Մենք ենան մենք պնդացրինք մի ահագին արկղի մեջ, տարանք «Նադեժդա»

շոգենավային-փոխադրական ընկերութեան նավակայքը և պահ տվինք ընկերութեան: Այն ժամանակվա որենքներով պահ տված ապրանքը կարող եր ամիսներով մնալ փոխադրող ընկերութեան պահեստում: Ընկերութեանը հետո պիտի փոխադրեր մեր հանձնած ապրանքը ըստ մեր ցուցմունքների:

Բագվի կազմակերպութեանը «մայովկան» տոնեց մայիսի 1-ից հետո հանդիպող առաջին կիրակի որը՝ նոր տոմարով, այն ե՝ ապրիլի 22-ին: Յուլցը շատ ազդու դուրս յեկավ: Դա Բագվի բանվորների առաջին հրապարակային յեկույթն եր, վոր ահագին տպավորութիւն արավ, դատելով այն ժամանակվա կառավարական հաղորդագրութիւնների հիման վրա:

Ռուսաստանի մյուս քաղաքները նույնպէս շատ ջերմ արձագանգ տվին այդ ցույցին. սակայն այդ հաջող յեկույթի հետեւեցը յեղավ Բագվի կազմակերպութեան համարյա կատարյալ կործանումը. մեզանից 86 մարդ եր ձերբակալված: Մի խոսքով՝ Բագվի կազմակերպութեան ամբողջ գոլին ու ակտիվը ձերբակալված եր: Ինձ և հանգուցյալ ընկ. Կնունյանցին (Ռադին) ձերբակալեցին փողոցում՝ Կնունյանցի բնակարանի մոտ. ցույցից հետո գնում եյինք, վոր «Իսկրային» մի ուրախառիթ թղթակցութիւն գրեցինք: Մենք այդ թղթակցութիւնն, այնուամենայնիվ, գրեցինք «Իսկրային», միայն թե բանտում: Մինչև յերեք շաբթը մենք բոլորս ազատ արձակվեցինք: Ընդհանրապէս այդ ցույցը և ավելի ևս բազմաթիվ ազդեցիկ ու հանրածանոթ ընկերների ձերբակալութիւնը բարձրացրին սոցիալ-դեմոկրատիայի ազդեցութիւնը Բագվի մասսաների վրա: Մեր ազդեցութիւնը շարունակ մեծանում եր, և մենք ծավալեցինք յեռանդակ մի գործունեութիւն: Ամառը դուրս եյինք գալիս նավթահանքերի սահմանից և դիմում դեպի շրջակայքի դաշտերը՝ խմբերով ու միտինգներով. գործը յեռում եր՝ բառիս բուն իմաստով:

Յերբ ընկ. Կեցխովելին թերթերից իմանում ե Բագվի կազմակերպութեան կործանման մասին, շատ անհանգստանում ե. ոգոստոսին նա վերագրում ե Բագու, Նա հաղորդեց, վոր Ռուսաստանի վոչ մի քաղաքում տպարանի համար վոչ մի հարմար տեղ չի գտել: Նա գրեց «Իսկրային», վոր տպարանի համար միակ հարմար տեղը մնում ե դարձյալ Բագուն, և վոր մենք պետք ե մնաք Բագվում: Մենք այդ ժամանակ ել վորոշում ենք՝ տպարանը թողնել Բագու, միայն թե վարձել ավելի կոնսպիրատիվ բնակարան և կազմակերպել վոչ այն սկզբունքներով, ինչպիսի սկզբունքներով կազմակերպված եր Ալի-Բաբայի տան տպարանը:

Յերբ վճռվեց, վոր տպարանը պետք ե մնա Բագվում, ընկ. Կեցխովելին սկսեց բնակարան վորոնել: Վերջապէս Չադրովայա փողոցի վրա յերեք սենյակից բաղկացած բնակարան ձորեցինք: Ընկ. Կեցխովելին պայմանավորվեց տնայտեր Ջիբրալիլի հետ, հայտնելով, վոր մտադիր ե արհեստանոց բաց անել սովարաթղթից զանազան իրեր պատրաստելու համար, խոստանալով յեթե գործը լավ գնա, Ջիբրալիլին ընկերացնել ձեռնարկութեան: Ջիբրալիլը հոժարութեամբ ընդունեց առաջարկութիւնը, և դրանից հետո, ըստ արեւելյան սովորութեան, սկսվեցին փոխադարձ հյուրասիրութիւնները. նրանք շուտով յեղբայրացան: Յեթե Արեւելքում առհասարակ մեկը, և մանավանդ մահմեդականը, մեկի հետ բարեկամանում կամ յեղբայրանում ե, դա արդեն հաստատ յերաշխիք ե, վոր նա չի մատնի, չի դավաճանի իրան: Այդպիսի մարդ եր նաև Ջիբրալիլը, վորը և գործով ապացուցեց:



Կեցխովելին ինձ և ընկ. Բոլկովաձեյին Զիբրայիլի հետ ծանոթացրեց և մեզ նրան ներկայացրեց, ինչպես իր աշխատավորներին:

Մեքենան, վոր ամառը փոխադրված եր Պետրովսկի կրկին վերադարձրին Բագու: Մենք յերկու գիշերում փոխադրեցինք Զիբրայիլի տունը և սարքեցինք: Տպարանը սարքավորելուց հետո սկսեցինք տառերը Հաջի-Կարուլից փոխադրել քաղաք: Փոխադրութունը հանձնարարված եր նույն այն ընկերոջ (Վիկտոր Բակրաձե), վորի միջոցով ուղարկել էինք Հաջի-Կարուլ պահելու: Բակրաձեն ապրանքային շոգեկառքի մեքենավարի ոգնական եր. նա իր ուսերն անում եր Բագու-Հաջի-Կարուլ կայարանների միջև՝ շաբաթվա մեջ յերեք ուր, այնպես վոր 15 փութ տառը քաղաք փոխադրելու համար մի ամսից ավելի ժամանակ եր հարկավոր, յեթե Բակրաձեն ամեն անգամ մի փթից ավելի չբերեր, ինչպես մենք նրան պատվիրել էինք: Բակրաձեն տառերը բերում եր իր բնակարանը, իսկ յես այնտեղից գիշերը կողմնակի ճանապարհներով ուղարկում էյի տպարան: Այդպիսի դանդաղությամբ և զգուշությամբ մոտ 10 փութ տառ փոխադրվեց: Ընկ. Բակրաձեն, վորոտրված այդպիսի հաջողությամբ և մանավանդ հույսը դնելով իր բացառիկ ֆիզիկական ուժի վրա, վոր նրան հնար եր տալիս՝ առանց ուժերը լարելու 5-6 փթանոց հակը բարձրացնելու, վճռեց միանգամից վերջացնել մնացած տառերի փոխադրութունը. նա պահեստից վերցրեց մնացած բոլոր ծրարները, վորոնք իրար հետ թողնվ կապած էին: Ընկ. Բակրաձեն իր վրա բնավ ուշադրութուն չեր դարձնում: 6 փութ ծանրութունը, վոր փոքր ծավալ ունեւր, հեշտությամբ տանում եր: Այստեղ ահա մի փորձանք պատահեց: Յերբ նա կայարանի մոտով անցնում եր դեպո, վորտեղ կանգնած եր իր շոգեկառքը՝ պատրաստ գնացք տանելու, թողը կտրվում ե, կապոցներն ընկնում են և տառերը թափվում: Յերբ ընկ. Բակրաձեն շշկված, սկսում ե տառերը շուտ-շուտ հավաքել, նա դեպոյի և յերթևեկության սպասավորության բանվորների ուշադրութունը իր վրա յե հրավիրում: Բակրաձեյի ասելով՝ ամեն բան լավ կվերջանար, յեթե չլինեւր դեպոյի պետի ոգնականը՝ նախկին մեքենավար Ռեզենկաշիֆը, վորն իսկույն հասկանում ե, թե ընկ. Բակրաձեն ինչ ծրարներ ե տանում, և այդ մասին հաղորդում ե կայարանի ժանդարմին: Բակրաձեն և նրա մեքենավար Ծիկլաուրին ձերբակալվում են մինչև գործի պարզվելը, իսկ նրանց դնացքն ուղարկում են ուրիշ շոգեկառքով:

Յերբ իմանում էյի, թե ապրանքային վոր շոգեկառքով պիտի վերադառնա Բակրաձեն՝ ըստ սահմանված յերթևեկի ժամացուցակի, յես հանդիպում էյի նրան Բագու-կայարանի շոգեկառքի կայանում և նրանից անմիջապես ընդունում էյի ծրարը: Այսպես եր նաև այս դեպքում, վոր նկարագրում եմ, սակայն Բակրաձեյի և Ծիկլաուրի փոխարեն՝ նրանց դնացքի հետ յեկավ ուրիշ բերեաղա, վորին նույնպես լավ ծանոթ էյի, վորովհետեւ ինքս մի ժամանակ աշխատում էյի քարշի սպասավորության մեջ: Գնացքի հետ յեկող մեքենավարն ու իր ոգնականը ինձ հաղորդեցին այն բոլորը, ինչ վոր գիտեյին Բակրաձեյի ձերբակալության մասին:

Յես իսկույն գնացի Կեցխովելու մոտ և նրան հաղորդեցի յեղելությունը: Անհրաժեշտ եր նրա հետ միասին վճռել այն հարցերը, վորոնք կապված էին տառերի ձերբակալության հետևանքների հետ: Առաջ ու առաջ անհրաժեշտ եր Բակրաձեյի բնակարանը մաքրել, ապա անհրաժեշտ եր

Կեցխովելուն հեռացնել մեր շտաբի կայանից, վոր նույնպես յերկաթուղու շրջանումն եր: Այնտեղ մենք հաճախ հանդիպում էյինք միքանի ընկերների հետ, և վորովհետեւ յես, վորպես կոմիտեյի անդամ, դեռ աշխատում էյի կազմակերպության մեջ, և շատ ժամանակ չեր, վոր բանտից դուրս էյի յեկել, դրա համար ել ինձ հետևում էյին: Այդ բնակարանը պատկանում եր յերկու յերկաթուղային մեքենավարների՝ Յեվսե Գեորգորեանիին և Գեորգորի Բակրաձեյին: Այդ միջոցին Կեցխովելին Գեորգորեանի բնակարանումն եր:

Յերբ յես նրան բոլորը պատմեցի և առաջարկեցի նրան, վոր անմիջապես հեռանա և գնա մեր կոնսպիրատիվ բնակարանը, վորտեղ տպարանն եր, և վորի տեղը գիտեյինք միայն մենք և մեկ ել մեր ընկեր գրաշար Բովան Բոլկովաձեն, նա վճռապես դրժեց գնալ, հայտնելով, վոր յեթե խուզարկության համար գան, ինքը պիտի հայտնվի, պիտի ասե, վոր ինքը Կեցխովելին ե, և ինչ ուզում ե լինի՝ պիտի անմեղ դուրս բերի Վիկտոր Բակրաձեյին:

— Յես տանիլ չեմ կարող, յեթե նրան ձերբակալեն իմ պատճառով, իսկ յես մնամ ազատ,— հայտարարեց նա:

Իմ բոլոր առարկությունները ընկ. Կեցխովելու վրա ազդեցութուն չարին: Գնահատելով նրա վարմունքը անցյալի տեսակետով և հետագայում մեր բոլոր քաջածնների տեսակետով, անկարելի յե դրա համար արդարանալու հիմք գտնել, սակայն հոգեբանորեն նա, ով գիտեր ընկ. Կեցխովելու քնավորութունը և նրա հոգեկան ընդհանուր վիճակը այդ մոմենտում, կհասկանա, թե ինչու նա իր մեջ բավականաչափ ուժ չգտավ ծածկվելու և չձերբակալվելու համար: Կեցխովելին իր բոլոր արարքների և վարմունքների մեջ, հասկանալի յե, ամենից վեր եր համարում գործի շահը: Բայց այն ընկերին, յերբ նրա աչքի առաջ բացվում եր մեր գործի կործանման պատկերը, նա այդ հանգամանքով այնպես եր բռնված, վոր ամբողջովին անձնատուր յեղավ իր զգացումներին: Այդ կողմից նա մի բացառիկ մարդ եր: Կոփված դաստիարակության և հեղափոխական պայքարի դժնդակ պայմաններում՝ նա միևնույն ժամանակ տիպար եր հանդիսանում սիրառատ և փափկասիրտ ընկերոջ: Յերբ լսում ե, վոր Վիկտոր Բակրաձեն ձերբակալված ե, և վոր դրա հետ կապված կարող են ձերբակալել մեր լավ ընկերներից շատ շատերին, վորոնք մեր անլիզալ ձեռնարկումների ժամանակ մեզ անգնահատելի ոգնութուն են ցույց տվել, նա սկսում ե դառնապես արտասվել և վոչ մի կերպ չեր ուզում բնակարանից հեռանալ, վոր տեղ ամեն ընկեր կարող էյին ժանդարմները գալ՝ նախ՝ վորովհետեւ այդ բնակարանը գտնվում եր կասկածի տակ, անկասկած, և յերկրորդ, վորովհետեւ այդ բնակարանում ապրում եր Գեորգորի Բակրաձեն՝ տառերի հետ ձերբակալված Վիկտոր Բակրաձեյի ազգանվանակիցը:

Յերբ իմ պատճառաբանություններն անցան ապարդյուն, մենք ուղղակի սկսեցինք քննության առնել, թե հետո ինչ ե մնում մեզ անել: Կեցխովելին ինձ առաջարկեց, վոր յես անմիջապես զբաղվեմ Վիկտոր Բակրաձեյի բնակարանը մաքրելու գործով, ըստ վորում մենք գիտեյինք, վոր այնտեղ վորոշ քանակությամբ տառ կա, վոր դեռ չենք ստացել: Բացի դրանից՝ նա ինձ հանձնարարեց նույն գիշերը ձարել Իվան Բոլկովաձեյին և նրա հետ միասին ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները՝ մեքենաները

և տպագրական բոլոր պարագաներն ու նյութերն ազատելու համար, միա-
ժամանակ ցուցումներ տվա՞վ, թե ինչպես պետք է բացատրենք դործի
հանգամանքը տանտիրոջ աշխատանքում, յեթե նա հակառակի և թույլ չտա
տանից դուրս բերել մեքենաները և մնացած գույքը: Այդ բոլոր ցուցումներն
ու հանձնարարություններն այն մոմենտին ինձ ավելի ևս զարմացրին նրա
համար, վոր Լադո Կեցխովելին հայտարարեց, վոր ինքը բնավ և բնավ
չպիտի հեռանա այն բնակարանից, վորտեղ նա մնում էր, և վոր ինքը
հաստատ վճռել է՝ իրան ձեռքակալել տալով, ազատել բազմաթիվ ընկեր-
ներին, և իր վճիռը անխախտ է: Վոր նա իր վարմունքով մի չափազանց
մեծ սխալ գործեց, այդ նա ինքը խոստովանեց այդ խոսակցությունից
հետո, յերրորդ օրը, յերբ մենք միասին մեկ ել աչք բաց արինք Բայիլի
բանտում: Բայց, կրկնում եմ, այն մոմենտին նրա վիճակն այնպես էր,
վոր այլապես վարվել չէր կարող: Մեր կուսակցության պատմության
առաջին շրջանում, յերբ մեզանից ամեն մեկը դեռ շատ տարված էր ուսման-
տիզմով և կազմակերպական ու այլ փորձ քիչ ունեւր, նման դեպքեր հալա-
նորեն պատահում էին նաև ուրիշ տեղեր:

Յես դիմեցի մոտիկ գործարանը (Կասպյան մեքենագործական), վոր-
տեղ մենք ունեւինք մի հուսալի խմբակ՝ ընկ. բանվոր-հայերից կազմված:
Յես նրանց հայտնեցի մեր անելիքը—պետք է գնանք, մաքրենք Վիկտոր-
Բակրաձեյի բնակարանը: Անհարմար երջիմ գնալը Բակրաձեյի բնակարանը,
վորովհետև ինձ շատերն այնտեղ ճանաչում էին: Ժանդարմների կողմից
հարցուփորձ յեղած դեպքում՝ ինձ ճանաչողները կարող են հաստատել, վոր
յես այդ բնակարանից ինչ-ինչ բաներ եմ դուրս տարել: Իմ վերև հիշած
բանվորները հոժարությամբ ձեռք զարկին այդ գործին: Նրանցից յերկուսը
սթափ դռնապանին ճարպկությամբ քաշ տվին մոտիկ գինետունը, իսկ մնա-
ցած ընկերները՝ քրքրելով և խուզարկելով Բակրաձեյի բնակարանը, այն-
տեղից դուրս հանեցին ամեն բան, վոր կարող էր նրան մատնել:

Համոզվելով, վոր Բակրաձեյի բնակարանն արդեն մաքրված է, յես
գնացի վորոններու իվան Բուկվաձեյին, սակայն բանից դուրս յեկավ, վոր
նա գնացել է մեր հին բնակարանը, վորտեղ գտնվում էր Կեցխովելին:
Յերբ յես վերադառնում եյի այն տունը, վորտեղ գտնվում էր այդ բնա-
կարանը, տեսա, վոր տունը շրջապատված է փոստիկաններով և հետաքրք-
րելիքներ մեծ ամբոխով՝ յերկաթուղու շրջանի հասարակությունից: Ներս
վորովհետև: Հասկացա, վոր տունը խուզարկում են, բայց և այնպես, չնայելով
այդտեղ կանգնած իմ ծանոթ ընկերների հորդորներին, յես անդուսպ կեր-
պով դիմեցի մեր բնակարանը, ներս մտա. հիբավի, խուզարկում էին մեր
բնակարանը, այդտեղ էին Կեցխովելին և իվան Բուկվաձեյին:

Կեցխովելին տեսնելով ինձ, չկարողացավ իր դժգոհությունը զսպել և
հենց այդտեղ սկսեց ինձ վրացերեն հանդիմանել, վոր յես վերադառնալով
բնակարանը, նույն հիմարությունն եմ արել, ինչ հիմարություն վոր ինքն
է արել, չհեռանալով այդ բնակարանից: Ժանդարմական ուսումնասիր պարոն
Վալտերը, վոր վրացերեն լավ հասկանում էր, հենց այդտեղ դիմեց ինձ և
իր գոհունակությունը հայտնեց այն առթիվ, վոր յես իմ վրտովս եմ յեկել իր
մոտ, ազատելով նրան Բայիլի իմ հեռու բնակարանը գնալու գիշերային յեր-
կար անհաճո ճանապարհորդությունից:

Այդպիսով ծողակի մեջ էյինք յերեքս—և մենք էյինք մեզ ծողակի
մեջ ձգողը,—միայն մենք յերեքս գիտեյինք մեր գաղտնի տպարանի տեղը:
Մեր կործանումով կործանվում էր նաև մեր ամբողջ գործը:

Ինչքան անհասկանալի յէ, այժմյան տեսակետով դատելով, մեր վար-
մունքը, վոր ձեռք չառանք բոլոր միջոցները՝ մեզ ազատելու համար, նույն-
քան անհասկանալի յեր ժանդարմական պետ Պորոշինի և ուսումնասիր Վալ-
տերի վարմունքը, վորոնք շատացան միմիայն Կեցխովելու ձեռքակալու-
թյամբ: Սկզբում արձանագրությունը կազմված էր իմ և Կեցխովելու ձեռ-
քակալության համար, իսկ Բուկվաձեյին նրանք առհասարակ ձեռք չէյին
տալիս, ըստ վորում նրա փաստաթղթերից յերևում էր, վոր նա Թիֆլիսից
միայն միջանի օր դրանից առաջ էր յեկել, այլ և նկատի առնելով նրա
ազնվական ծագումը, հնարավոր չէյին գտնում՝ առանց վորևէ փաստաշա-
նի՝ նրան ձեռքակալել:

Յերկար խորհրդակցությունից հետո, վոր տեղի ունեցավ պոլկովնիկի
և ուսումնասիրի միջև, մեզ ուղղակի հայտնեցին, վոր իրանց հետ տանում են
միայն Կեցխովելուն, վորին նրանք վաղուց է վորոնում են՝ համաձայն վոս-
տիկանությունից դեպարտամենտի առաջադրություն: Նրանք շատ ուրախացել
էին այդպիսի մի վորս ճանկելով:

Ուղարկվելու ժամանակ Կեցխովելու գրպանից հանեցին յերեք ան-
ձնագիր ու միքանի անլեզալ բրոշյուրներ: Այդ անձնագրից մեկի մեջ
կար մեր կոնսպիրատիվ բնակարանի հասցեն: Յերբ Կեցխովելին տեսավ
այդ, նա հնար գտավ ինձ շնջալու, վոր յես ու իվան Բուկվաձեյն հենց
նույն գիշերը ձեռք առնենք հնարավոր միջոցները՝ տպագրական մեքենա-
ներն այդ բնակարանից դուրս հանելու:

Արդեն գիշերվա ժամը յերկուսն էր: Յես ու իվան Բուկվաձեյն գնա-
ցինք մեր ընկ. Սագորովի մոտ, վոր պահում էր մեր արտասահմանյան
հասցեները, ծածկագիրը (բանալին) և Բաթումի մեր այն ընկերների հաս-
ցեները, վորոնց միջոցով արտասահմանից գրականություն էյինք ստանում:
Վորովհետև այդ օրերն սպասվում էր արտասահմանից դարձյալ գրականու-
թյուն, մենք այդ բոլորի մասին պետք է նախազգուշացնեյինք ընկ. Սա-
գորովին, ըստ վորում նա մեկն էր պաշտոնական հասցեատերերից:

Ընկ. Սագորովն ուղեւի գերատեսչության պահեստների կառավարիչն
էր ու պաշտոնական գերբ ունեւր: Վորովհետև վոչ յես, վոչ ել ընկ. Բուկ-
վաձեյն վստահ չէյինք, վոր մեզ չեն ձեռքակալելու այն բնակարանում, ուր
գնում էյինք մեքենայի համար, ընկ. Սագորովին բոլոր հարկավոր կար-
գադրություններն արինք և խնդրեցինք, վոր մեր կուսակցական ընկերնե-
րին զգուշացնեն, շուրջացնեն հատկապես Լ. Բ. Կրասնինին, վորն այն ժամա-
նակ Բայիլի երկկտրակայանի կառավարիչն էր. նա յեր մեր անլեզալ ձեռ-
նարկության համար դրամական միջոցներ հայթայթում:

Վերադառնալով մեր կոնսպիրատիվ բնակարանը, յես ու ընկ. Բուկվա-
ձեյն սկսեցինք տպագրական մեքենան քակել և արկղների մեջ ամրացնել:
Մեր գործը մի շատ վտանգավոր գործ էր. կամ այն է՝ մեզ պիտի հաջողվեր
ամեն բան դուրս տանել, կամ թե չէ ժանդարմները հանկարծ մեզ վրա
պիտի թափվին և տեղն ու տեղը ձեռքակալեն: Մեր մտքովն անգամ չէր
անցնում՝ աշխատել խուսափել ձեռքակալությունից:

Առավոտյան ժամը 8-ի մոտ ամեն բան պատրաստ էր դուրս տանելու համար: Մոտ հիսուն ութը յեր հարկավոր մեր բեռը նավամատույց տանելու և «Նաղեժդա» ընկերության գրասենյակին պահ տալու համար. իսկ մեր գրպաններում յերեք ութը յեղ չկար: Յես դիմեցի Լ. Բ. Կրասինին. մտա ուղղակի ննջարանը և զարթեցրի. նրա զարմացած հայացքին իբրև պատասխան մեկեն ասացի, վոր Գեցխովին ձերբակալված է, և փող է հարկավոր տպարանն ազատելու համար: Լ. Բ. Կրասինը իրան հատուկ վճռակա-նությամբ՝ միջանի կարևոր հարցեր տվավ, պարզ պատկերացրեց գործի գրությունը և հենց այդտեղ 60 ուրբ. տվավ ինձ: Վարձած սայլի հետ վերադարձա Չադրովայա փողոցը:

Ջիրբայիլը՝ մեր տան տերը, տանն էր: Նրա զարմացած հարցերին, թե ինչ կնշանակե այս բոլորը, և վորտեղ է այս բոլոր գույքի տերը՝ իր բարեկամ Դավիթը (Կեցխովին),—մենք պատասխանեցինք, վոր նրան դժբախտություն է պատահել, կինը մեռել է, և գիշերը Թիֆլիս է գնացել, հանձնարարելով մեզ, վոր ամեն բան կարճ ժամանակում լիկվիդացիայի յենթարկենք: «Նա ուղարկել է ձեզ իր վողջույնները և ինչան բարեկամություն և յերախտագիտություն՝ ձեզ է թողնում իր բոլոր տնային աման-համանը և մի գուլգ նոր կալույթ», ավելացրինք մենք:

Սկզբում մեր այս բոլոր ասածներին Ջիրբայիլը հավատ ընծայեց. ցավակցություն հայտնեց, վոր Դավիթը Թիֆլիս է գնացել, առանց իրան ասյլի վրա դնենք, նա բոլորովին անսպասելի սկսեց բողբոջել և ասաց, վոր առանց իր բարեկամի թեկուղ հենց մի գրավոր ծանուցման՝ մեզ չի կարող վստահել նրա գույքը, թեև դեռ, վոր մենք նրա աշխատակիցներն ենք: Մենք ուրիշ յեղ չուներինք. մեզ մնում էր միայն նրան առաջարկել, վոր կգնանք հեռագրատուն և Կեցխովինուց նրա անունով հեռագրական կարգա-գրություն կբերենք: Նա դրան համաձայնեց: Այն ժամանակ յես գնացի հեռագրատուն, դիմեցի իմ ընկեր Ալեքսանդր Չոնիային, վորը Բագվի պոստ-հեռագրատան հեռագրային բաժանմունքի կառավարիչն էր. նա շուտ մի հեռագիր-պատասխան սարքեց Ջիրբայիլի անունով «վշտահար» Դավիթի անունից: Հեռագիր, ինչպես վոր հեռագիրը լինում է, համարով, լեռնի վրա, ամեն բան տեղն ու կարգին:

Հեռագիրը ձեռքիս՝ վերադարձա Չադրովայա փողոցը: Ամեն բան առաջվա դրություն մեջ էր: Ջիրբայիլը հեռագիրն առավ, միջանի անգամ շուտ ու մոտ տվավ ձեռքում և ապա հայտնեց, վոր, այնուամենայնիվ, մեզ չի հավատում... «Արտաքուստ դուք լավ մարդ եք, բայց գործով, ով գիտե, գուցե դուք սրիկաներ, խաբեբաներ եք և ուզում եք իմ բարեկամին թալանել»: Մենք սկսեցինք վրդովված պնդել դրա հակառակը, սակայն վոչ մի առարկություն Ջիրբայիլի վրա չեր ազդում: Մենք պնդում և տաքանում էինք, և, պարզ է, ամբողջ գիշերն անցկացնելով անքուն և ամեն բոլոր սպասելով ժանդարմների գալստյան, մենք չափից դուրս վրդովվում էինք: հուզվում ու տաքանում: Թերևս այս բոլորը պատճառ յեղած լինի Ջիրբայիլի կասկածների, վոր ընդհանրապես մի հասկացող և աշխարհ տեսած մարդ էր: Ջիրբայիլը վոչ միայն տան տեր էր, այլև ավագ դռնապանը այն թաղի, վորտեղ ինքն էր ապրում:

Յերբ նա կտրականապես հայտնեց, վոր Դավիթի իրերը մեզ չպիտի

տա, մենք սայլն արձակեցինք և մնացինք Ջիրբայիլի մոտ, վոր նրան համոզենք: Նա մեզ միջանի անգամ առաջարկեց գնալ տուն ու միջանի ուրից հետո գալ, իսկ մինչ այդ կամ Դավիթն ինքը կգա, կամ համակ կգրի իրան: Մեզ, ինչպես կասկածելի մարդկանց, նույնիսկ ներս չթողեց, վոր մեր վարձած բնակարանում գիշերենք, իսկ մենք դեռ համառությամբ պնդում էինք, և մեր այդ համառությունը Ջիրբայիլին համբերությունից հանեց: Նա իր մարդկանցից մեկին ուղարկեց վոստիկանի յետևից: Նա թուրքերեն ասաց. «Թաղային վոստիկանին ասա, վոր ինձ մոտ յերկու կասկածելի մարդիկ են յեկել, վորոնց, իմ կարծիքով, հարկավոր է ձերբակալել»:

Մեզ հանդիպած անաշտություն պատճառով ջղայնացել էինք. այստեղ սկսեցինք Ջիրբայիլին հայհոյել, հանդիմանել, անվանելով նրան գող, թալանչի և անխիղճ մարդ, վոր բարեկամին ու «յեղորդ» տված խոսքին դրժում է:

Մտեղծված դրությունից դուրս գալու ուրիշ վոչ մի միջոց չունենալով՝ մենք վճռեցինք Ջիրբայիլին պարզապես հայտնել, թե բանն ինչու է: Մենք նրան փողոցից կանչեցինք սենյակը և հայտնեցինք, վոր Կեցխովին ձերբակալված է, վոր մտադրություն է յեղել վոչ թե արհեստանոց բաց անելու, այլ անխիղճ տպարան, վորտեղ պետք է տպվեյին կառավարության և ցարին հակառակ գրքեր, և վոր շուտով հանկարծ այստեղ պետք է թափվին ժանդարմներ, վորովհետև Կեցխովինը ձերբակալության ժամանակ վերցրել են նրա անձնագիրը, վորի մեջ գրված է յեղել բնակարանի հասցեն, և վոր Ջիրբայիլն իր վարմունքով վոչ միայն մեր բոլորիս, այլ և իր իսկ անձի կորստյան պատճառ է դառնում: Յեթե մեզ ձերբակալեն, մենք կասենք, վոր դու մեզ հետ ընկեր ես յեղել, և այն ժամանակ լավագույն դեպքում դու կդատապարտվես տասը տարվա տաժանակիր աշխատանքի, ու քո բոլոր տները հարքունիս կգրավվեն. իսկ մենք վաղուց է, վոր աշխատում ենք կառավարության հակառակ և չենք վախենում վոչ տաժանակիր աշխատանքից, վոչ նույնիսկ մահից:

Այս խոսքերի վրա Ջիրբայիլը բոլորովին փոխվեց, սկսեց դողալ՝ հա-րությունից արդյոք, թե յերկուդից՝ չգիտեմ: Սաստիկ հուզված՝ նա մեզ առաջարկեց, վոր մեկ-մեկ բացատրենք, թե բանն ինչու է: Այստեղ մենք բո-լորովին պարզ ու անկեղծ նրան հասկացրինք, թե ինչպիսի վտանգ է սպառ-նում նրան մեր ձերբակալության ու տպարանի կործանումը: Տեսնելով, թե ինչպիսի սոսկալի պատմության մեջ է ընկել, այժմ ինքն սկսեց վողբա-կան խոսքերով հարցեր տալ. «Ասացեք, յեղբայրներ, կամ արդյոք փրկու-թյան մի վորևէ միջոց»: Մենք պատասխանեցինք, վոր միակ միջոցն է՝ մեր վարձած բնակարանից դուրս հանել մեքենան և տպարանին պատկանյալ բոլոր առարկաները: Նա հանկարծ դուրս վաղեց. շտապել էր, ինչպես մենք հետո իմացանք, իմաց տալու վոստիկանին, վոր դուր տեղը հիմարաբար վրդովել է նրա հանգիստը: Նա քիչ հանգստացած վերադարձավ մեզ մոտ: Ջիրբայիլը հավատացած էր, վոր մեր ասածները միանգամայն ճշմարիտ են:

Վորովհետև մեր հաշվով ժանդարմներն իրանց յերկար չպիտի սպասել տային, առաջարկեցինք Ջիրբայիլին, վոր մեզ չպահի. շուտ թույլ տա, վոր արդեն իր տանենք:

Ի մեծ զարմանս մեր, նա կտրականապես մերժեց այդ արկղները մեզ տալ, հայտնելով, վոր մեզ արկղներով կարող են բռնել փողոցում, և այն

ժամանակ ամեն բան կորած է, և վոր ավելի լավ է, վոր ինքն իր սայլերով այդ արկղներն ուղարկե մոտիկ գյուղ, վորտեղ ինքը մի փոքրիկ այգի ունի. այնտեղ նա արկղները կթագցնի ու կպահի, մինչև վոր մենք նրանից կպահանջենք: Նա յերդվեց աղնիվ խոսքով և իր հավատով, վոր մեզ չի խաբիլ, չի մատնիլ և յեթե ժանդարմները գան խուզարկելու մեր բնակարանը, ինքը գիտի, թե ինչպիսի ցուցմունքներ հարկավոր է տալ:

Նրա առաջարկությունը մեզ համար ավելի ընդունելի յեղավ, մենք համաձայնեցինք, վճարելով նրան ծախսերի և մեքենայի պահպանության համար 50 ռուբ.: Նա իսկույն մեր ներկայությունը կարգադրեց, վոր արաբները լծեն և արկղները բեռնեն:

Ջիբրայիլին մնաս-բարև ասելուց հետո՝ յես ու ընկ. Բուլվաձեն մտանք մոտիկ մի ճաղարան ճաշելու և թե այդ բոլոր մեր կրածներն ինքիս սթափվելու: Վճռեցինք, վոր Բուլվաձեն նույն յերեկոյան թիֆլիս գնա և ընկերներին զգուշացնի մեր կործանումի մասին, իսկ յես վճռեցի անցնել անլեզալ վիճակի և շարունակել աշխատանքը Բագվի կազմակերպության մեջ: Ճաղարանում իրար մնաս-բարև ասացինք: Բուլվաձեն յերեկոյան մեկնեց թիֆլիս, իսկ յես գիշերվա մոտ ժամը 10-ին ձերբակալվեցի յերկաթուղու շրջանում, յերբ անցնում էյի Բալասանսկայա փողոցով:

Սեպտեմբերի 4-ի առավոտյան, զարթնելով Բայիլի բանտում, վոր դեռ մինչև այդ ինձ լավ ծանոթ էր, յես իմ պատուհանի դեմուղեմ, բանտի շենքի մի ուրիշ թևում, նկատեցի կեցիկություն գլուխը և սկսեցի նրան բարձրաձայն վողջունել, վորին իբրև պատասխան ստացա նրա հայհոյանքներն մի ամբողջ տարափ: Այստեղ հենց, չնայելով բանտի վերակացուներին և նախագլուղացուներին, յես համառոտ բացատրեցի նրան գիշերը տեղի ունեցած դեպքերը: Նա սաստիկ դոհ մնաց, յերբ լսեց մեքենայի մասին և վստահ էր, վոր Ջիբրայիլն իր տված խոսքի տերը կլինի:

Բացի կեցիկությունց և ինձանից, ձերբակալված էյին նաև Վիկտոր և Դմիտրի Բակրաձենները, իսկ մի ուրից հետո յեւ բանտ բերին նաև Դրիգորի Սագարովին:

Բագվի բանտում մեզ յերկու շաբաթ պահելուց հետո՝ թիֆլիսի դատական պալատի դատախազի առաջադրության համաձայն, փոխադրեցին թիֆլիս և բանտարկեցին Մետեխի բանտի մենավորական խցերում: Դեռ Բագու յեղած ժամանակ մենք բոլորս յեղել էյինք Բագվի ժանդարման բաժնում քննության համար:

Այն միջոցին, յերբ ինձ հարցաքննում էր ռոտմիստր Կարպովը, ներս բերին նրա կաբինետը յերկու պայուսակով արտասահմանյան գրականություն: Մեկ պայուսակի մեջ «Իսկրայի» համարներն էյին, մյուսի մեջ՝ «Զարիայի» համարները և Լենինի «Что делать?» գրքույկը: Կարպովը, հրավիրելով իմ ուղադրությունն այդ պայուսակների վրա, ասաց.

— Հրճվեցեք, պարոն Յենուկիձե: Սրանք ձեր իրերն են:

Միջանի ըոպայից հետո Կարպովին դուրս կանչեց ժանդարմական վարչության պետը: Դուրս գնալիս նա այդտեղ կանգնած ժանդարմին հրամայեց.

— Հսկիր սրան:

Յերբ յես և ժանդարմը մենակ մնացինք, նրանից թույլտվություն խնդրեցի գրքերը նայելու, վորոնք թափված էյին բաց պայուսակներում:

Նա ինձ թույլ տվավ, միայն ասաց, վոր շուտ անեմ, վերջացնեմ: Յես ձեռքս առա «Իսկրայի» № 22 և «Что делать?» գրքույկը: Կազմակերպության մեջ ամենքս շատ մեծ անհամբերությունով սպասում էյինք այդ համարին, վորովհետև այդ համարում տպագրված էր Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ծրագրի նախագիծը: Դեռ ավելի մեծ անհամբերությունով սպասում էյինք «Что делать?» գրքույկին, վոր այնքան աղմուկ էր հանել: Յես հարցրի ժանդարմին, վորի դեմքն ինձ համակրելի յերևաց. «Զի՞ կարելի արդյոք, վոր յես այս յերկու բանը վերցնեմ»: Նա սկզբում կտրուկ մերժեց, իսկ հետո բացատրեց, վոր յեթե դրանք ինձ մոտ գտնեն, ավելի վատ կլինի: Յես նրան ասացի, վոր արդեն յես ձերբակալված եմ, խուզարկված, ըստ յերևույթին նոր խուզարկություն ել չի լինիլ, այնպես վոր քիչ հավանականություն կա, վոր այդ գրքերն ինձ մոտ գտնեն, իսկ յեթե գտնեն — տալիս եմ աղնիվ խոսք, կասեմ, վոր յես եմ թուցրել անհնկատելի կերպով: Հայտնապես յերևում էր, վոր իմ դրությունը և իմ անկեղծ աղաչանքը նրա վրա ազդեցին, և նա քթի տակ ասաց.

— Ե, լավ, վերցրեք, միայն ինչ եմ ասում... զգուշ:

Այդ դեպքից հետո՝ յերկրորդ թե յերրորդ որը մեզ թիֆլիս ուղարկեցին. ճանապարհին ինձ հաջողվեց թե «Իսկրայն» և թե գրքույկը մաս-մաս թագցնել և անկողնուստ բերել-հասցնել մինչև իսկ բանտը:

Այսպիսի վախճան ունեցավ առաջին շրջանը մեր անլեզալ տպարանների աշխատանքների, վորոնք տարվում էյին Վլադիմիր կեցիկություն անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ,

Մեր ձերբակալությունից և Ջիբրայիլի տան անաջող և ապարդյուն խուզարկությունից հետո Բագվի ամբողջ վոստիկանությունը վոտի հանվեց, վոր գտնի տպարանը և այն մարդկանց, վորոնք մասնակից էյին մեր անլեզալ աշխատանքներին՝ արտասահմանյան գրականության փոխադրության գործում: Այդ բոլոր վորոնումները վոչ մի արդյունք չունեցան:

Մետեխի բանտում չորս ամիս նստելուց հետո, մեզ հետ ձերբակալված յերկու Բակրաձենները և Դրիգորի Սագարովին ազատ արձակվեցին: Բանտում մնացինք յես և ընկ. կեցիկություն: Հարցուփորձերի ժամանակ պարզվեց, վոր թիֆլիսի ժանդարմական վարչությունը լավ իրազեկ է յեղել Բագվում մեր տարած աշխատանքներին, սակայն նրանք մեր դեմ ուղղակի փաստաթղթեր չունեցին, բացի իմ ձեռքով գրված յերկու ծածկագիր նամակներից՝ ուղղված «Իսկրային», վորոնք բռնված էյին: Կեցիկություն և ինձ մեղադրում էյին 151 և 152 հոդվածների հիման վրա: Ժանդարմական ռոտմիստր Ռուկնիչը հաճախ մեզ ցույց էր տալիս, իբր թե իրանց ձեռքով բռնված, անանուն նամակներ՝ մեզ ուղղված, վորոնց մեջ գրված էր լինում, վոր մեր տպարանը գտնված է արդեն վոստիկանության ձեռքով, և բազմաթիվ ընկերներ ձերբակալված են, վորոնց անուններն առաջ էյին բերում այդ նամակները: Մենք հենց առաջին անգամից գլխի ընկանք այդ բոլոր սատանայությունները և են սկզբից վճռեցինք և պինդ կանգնեցինք — հարցուփորձի ժամանակ չտալ և վոչ մի ցուցմունք:

Մետեխի բանտի ռեժիմը շատ խիստ էր: 1902 և 1903 թվականներին էր, յերբ Կովկասի գլխավոր կառավարչապետն իշխան Գուլիցինն էր, մի

մարդ, վոր առանձին իմն վայրագությունն եր հայտնաբերում քաղաքական բանտարկյալների նկատմամբ: Չնայելով այդ խստություններին, այնուամենայնիվ բանտարկյալները հնար եյին գտնում ամեն տեսակ միջոցներով միմյանց հետ հարաբերվելու և նույնիսկ միմյանց փոքրիկ տոմսակներ, յերբեմն նույնիսկ գրքերից հանած ամբողջ թերթեր հասցնելու:

Այն ժամանակ Մետեխի բանտում բազմաթիվ ընկերներ եյին նստած, վորոնք կուսակցության մեջ հետադաշու շահնավոր դիրք ունեցան: Վրաստանի աչքի ընկնող գործողների մեծամասնությունն այն ժամանակ ձերբակալված եր: Լենինի «Что делать?» գրքուկը և «Իսկրայի» 22-րդ համարը, վոր մեզ հետ բերել եյինք Բագվից, Մետեխում մեր բանտային կյանքի մեջ մի ամբողջ դարագլուխ ստեղծեցին: Իմ սենյակի (կամերա) վերեւ կար մի շատ մեծ սենյակ, այդտեղ հավաքված եյին 16 ընկերներ, վորոնց գործերի քննությունը՝ վերջացել եր, և վորոնք սպասում եյին աքսորի՝ Արեւելյան Սիբիր: Նրանց աքսորը միջանի ամսով ուշանում եր, և այդ միջանի ամիսների ընթացքում նրանք, ստանալով այնպիսի գրական սնունդ, ինչպիսին և «Что делать?»-ը և «Իսկրայի» 22-րդ համարը, վորը պարունակում եր կուսակցության ծրագրի նախագիծը, իրանց սենյակը մի կարգին դարձրեց դարձրին այդ հարցերն ուսումնասիրելու համար: Այդ հարցերի շուրջը, յեղած նրանց կարծիքները և ծագած տարաձայնությունները հաղորդվում եյին մյուս բոլոր ընկերներին, վորոնք նստած եյին մենավոր խցերում: Բանավեճն սկսվեց վերոհիշյալ ընկերների խմբի և ընկ. Կեցխովելու միջև, վորը միջանի սենյակով ինձանից հեռու յեր նստած:

Մենք, բազմաթիվներս, վճռապես կանգնած եյինք «Что делать?» գրքուկի տեսակետի վրա, և մեզ հարց ընկերների ահագին մեծամասնությունը, նույնիսկ շատերն այն ընկերներից, վորոնք հետադաշու յեղան վրացական մենշևիզմի պարագլուխները:

Ընկ. Կեցխովելին իր յետանդով և անդուլ ջանքով կենդանությունն տվավ ամբողջ բանտին: Նա մեծագույն վարպետն եր նույնիսկ կարցերենում բանտարկված ընկերներին տոմսակներ հանձնելու միջոցներ և յեղանակներ գտնելու մեջ: Սահմանված «կանոններն ու կարգերը» նա բանտում շարունակ խախտում եր. նա բանտային վարչության ընտելացրել եր շատ անգամ իր յեղույթներին վերաբերվել միանգամայն տարբեր յեղանակով: Տաժանակիր աշխատանքի դատապարտված բանտարկյալների հետ նույնպես ընկ. Կեցխովելին լավ հարաբերությունն եր հաստատել այնպես, վոր յերբ նա գրել խավոր բաղով անցնում եր զրոսանքի յեկեղեցու փոքրիկ բակը, վորտեղ նրան հատկապես տանում եյին զրոսանքի, քրեյական բանտարկյալները, թե բակում յեղածները և թե սենյակներում յեղածները՝ պատուհաններից, բոլորը բարձրաձայն փողշունում եյին նրան: Բարձր իշխանությունը միշտ հրամանագրում եր՝ սանձահարել բանտարկյալ Կեցխովելուն, բայց բանտային վարչությունը սովորաբար անդոր եր մի բան անելու:

Կեցխովելու սենյակի պատուհանները բացվում եյին կուր գետի վրա, վորի հաղիպակաց ափում գտնվում եր մի փոքրիկ ծխախոտագործարան: Յե՛վ ահա ընկ. Կեցխովելին հնար և գտնում դանազան նշաններով հաղորդակցություն հաստատել այդ գործարանի բանվորներին հետ, և ճաշվա դադարի ժամանակ կամ յերեկոյանները՝ աշխատանքից հետո, բանվորներին

մեծամեծ խմբեր յերկար կանգնում եյին բանտի դեմուդեմ և Կեցխովելու նշաններին իրանց նշաններով պատասխանում: Շատ անգամ բանը հասնում եր այնտեղ, վոր բանտից հեռախոսով խմաց եյին տալիս քաղաքամասի մոտիկ վոստիկանության, վոր բանվորներին ցրեն:

Դատական պալատի դատախազը, վորն այս բոլորին լավ տեղյակ եր, մտածեց Կեցխովելու ուշադրությունն ուրիշ դատուհանների վրա դարձնել, և նրա համար բերավ միջանի մատիտ և համարագրած տետրակներ, խնդրելով նրան, վոր իր անցյալ կյանքի հիշողությունները գրի առնի, այլ և շարադրի իր հայացքները զանազան տեսական հարցերի մասին:

Ընկ. Կեցխովելին առաջին տետրակը լցրեց բոլոր իշխանավորների, զրանց թվում նաև դատական պալատի դատախազի, թունոտ ծաղրանկարներով, իսկ մնացած թուղթն ու մատիտները ճարպկորեն բաժանեց բոլոր կամերաների մեջ: Դատախազի հետևյալ այցի ժամանակ Կեցխովելին նրան հրամցրեց իր աշխատանքը, և դատախազը, չնայելով իր կատարյալ չափավորության, կատաղեց, ըստ վորում Կեցխովելին նրան պարզապես հիմարացրել եր:

Վարչությունը վճռեց Կեցխովելու նկատմամբ կիրառել բացառիկ ուժի մի, սակայն ամեն մի այդպիսի փորձ տեղիք եր տալիս բոլոր բանտարկյալների կողմից սաստիկազույն բողոքի: Բանտի դրսի բոլոր պատուհանները տախտակով ծածկվեցին միջանի անգամ, սակայն մենք շարունակ ջարդոտում եյինք տախտակները, զրա համար յենթարկվելով ամեն տեսակ զրկանքների:

1903 թվականի ամառվա սկզբին Բագվից մեզ տեղեկություններ հասան, վոր մեր տպարանը հաջողությամբ ստացված ե Զիրբայիլից և մեր ընկերների իսկ ձեռքով շատ լավ դրված ու սարքավորված: Տպարանի և ընկերների ձեռքակալության մասին ժանդարմների հաղորդած բոլոր լուրերը դուրս յեկան սուտ և շինծու: Այս վերջին տեղեկությունները մեզ նոր յեռանդ տվին՝ մեր բանտային աշխատանքների և պարագլուխների համար, իսկ ընկ. Կեցխովելու վրա դրսից ստացված բոլոր այդպիսի լուրերն այնպես եյին ազդում, վոր նա բոլորովին դուրս եր գալիս ամեն մի կանոնի, հրահանգի հպատակությունից, և իր հարաբերություններն ընկերների հետ՝ կրկնապատկում եր, վողեկորելով նրանց:

Յերբ բարձր իշխանությունը համոզվեց, վոր բանտային վարչությունն անգոր ե սանձահարելու Կեցխովելուն, իսկ նրան բանտից տեղափոխել ուրիշ տեղ՝ սիրտ չեր անում, մտածեց ավելի հասարակ և դաժան մի միջոցի դիմել: Վճռված եր՝ խմացնել ու կաշառել մի պահակի. այդ պահակը 1903 թվականի ոգոստոսի 17-ին Կեցխովելուն՝ մի անգամ նախազգուշացնելուց հետո գնդակահարում և տեղն ու տեղն սպանում ե այն մոմենտին, յերբ նա իր պատուհանի վանդակի յետեից բանակցում եր մյուս ընկերներին հետ:

Այսպիսի վախճան ունեցավ Կովկասում մարքսիզմի բնագավառում յերիտասարդ աշխատողների ամենից աչքի ընկնողի, կուսակցության բոլոր անկեղալ ձեռնարկումների լավագույն կազմակերպողի և Բագվի անկեղալ տպարանների հիմնադրի կյանքը, վորոնք (տպարանները) հետո դարձան մեր կուսակցության ամենից գլխավոր և կենտրոնական տպարանները:

Կենտրոնական անլեզալ տպարանների աշխատանքների յերկրորդ շրջանն սկսվում է այն ժամանակ, յերբ յես ու կեցխովելին նստած եյինք Մետեխի բանտում: Այդ գործի գլխավոր կազմակերպողն էր այս անգամ Տրիֆոն Յենուկիձեն, կամ, ինչպես նրան անվանում էյին կազմակերպութան մեջ, «ընկ. Սեմյոնը»: 1899 թվականից ընկ. Սեմյոնը անդամ էր Բագվի մեր խմբակներին. նա յե յեղել Սաբունչիի շրջանում «Վոտան» գործարանի խմբակի կազմակերպողը: 1900 թվականի կեսերին նա ստիպված յեղավ Բագվից հեռանալ Յեկատերինոսկով, վորտեղ Բրյանսկ գործարանում սկսում է աշխատել, վորպես փականագործ: Մեր ձերբակալությունից հետո՝ ընկերների կանչելով՝ նա վերադարձավ Բագու և սկսեց վերականգնել այն գործը, վորը կանգ էր առել Կեցխովելու և իր գործակիցների ձերբակալության հետևանքով:

Գործի արտաքին ղեկավարությունը, նույնպես բոլոր անհրաժեշտ միջոցների և նյութերի հայթայթման գործն իր վրա յե վերցնում ընկ. Լ. Բ. Կրասինը, վորն այդ ժամանակ անգամ էր Ռ. Ս.-Գ. Բ. Կ. յերկրորդ համագումար հրավիրելու. համար աշխատող կոմիսսիայի, իսկ հետո յեկ անգամ յեղավ կուսակցութան ԿԿ ռուսական գրուպպայի:

Տպարանների վերականգնման և անդրագույն կազմակերպման գործում ընկ. Սեմյոնի մերձավորագույն ոգնականներն էյին այն ընկերները, վորոնք առաջ աշխատելիս են յեղել մեզ մոտ՝ Լադո Դումբաձե, Իվան Բուկվաձե, Միլվեստր Տոգրիա և ուրիշները: Այդ ընկերների ոգնությամբ ընկ. Սեմյոնի աջովում է ամբողջ գործը ղեկ ավելի ամուր հիմքերի վրա: Զիրբայից մեր մեքենան յետ ստանալու գործն իր վրա յե վերցնում Մ. Ս. Բաղդատյանը: Ընկերներից քչերին միայն հայտնի յե, թե Բաղդատյանը իր ժամանակ ինչպիսի ծառայություններ է արել մեր կազմակերպությանը: Բաղդատյանը ճարպկությամբ և խելքով կատարեց իր վրա վերցրած պարտականությունը. նա մեքենան հասցրեց պայմանավորված տեղը: Մենք ընկ. Կեցխովելու հետ բանտումն էյինք և այնտեղ իմացանք, վոր մեր տպարանը դարձյալ սկսել է կատարել կուսակցութան իսկրայական կազմակերպությունների պատվերներն ու հրահանգները: Այս բոլորը տեղի յեր ունենում գեռ մինչև կուսակցութան II համագումարը:

Տպարանը հիմնված էր լայն սկզբունքների վրա, միանգամայն ապահովված էր միջոցներով, նյութերով և թղթի կողմից: Աշխատանքն առաջ էր գնում մեծ թափով:

1903 թվի սկզբներին բանվորական շարժումը Ռուսաստանում հասավ լայն չափերի. նախապատրաստվում էյին Ռուսաստանի հարավում և Բագվում ամառային հոշակավոր գործադուլները: Գրականության պահանջն այնքան էր մեծացել, վոր մտադրվեցինք այդ տպարանն ընդարձակել, ձեռք բերել վ դարձյալ մի մեքենա՝ ճորը և կատարելագործվածը:

Կուսակցութան II համագումարից հետո մեծ քանակությամբ կուսակցական անլեզալ գրականություն հրատարակելու պահանջը դարձավ կենսական: Ընկ. Կրասինը կոոպտացիայով յեղավ Կ. Կ. ռուսական գրուպպայի անդամ. նրա վրա պարտականություն դրվեց՝ միջոցներ ձարել կուսակցութան անլեզալ ձեռնարկությունների համար: Այդ դժվարին, այն ժամանակվա պայմաններում, խնդիրը Լ. Բ. Կրասինը փայլուն կերպով գլուխ բերավ մինչև Լոնդոնում կայացած կուսակցութան համագումարը (V). նյութա-

կան միջոցներ հայթայթելու հոգը ծանրացած էր ընկ. Կրասինի վրա (մականունը՝ Նիկիտիչ):

Նոր մեքենա ձեռք բերելը հանձնվեց ընկ. Սեմյոնին, վորն այդ խնդիրը գլուխ հանեց Ովանեսայանցի՝ մի փոքր լեզալ տպարանի տիրոջ միջոցով: Սեմյոն Յենուկիձեն, ձեռքին ունենալով Գեորգի, Միխայիլիչ Լեժավայի անունով անձնագիր, ապրում էր լեզալ, իրան ձեացնելով «Ելեկտրիչեսկայա սիլա» ընկերության ծառայող: Այդ ընկերության գիրեկտորներից մեկն էր ընկ. Կրասինը: Ընկ. Սեմյոնը հայտնում է Ովանեսայանցին, վոր իրեն հանձնարարված է «Ելեկտրիչեսկայա սիլա» ընկերության պետքերի համար մի տպարան կազմակերպել, դրա համար էլ նա Ովանեսայանցի հետ վորոշ գործարքի մեջ է մտնում՝ արտասահմանում մեքենա և Պետերբուրգում Լեմանից տառեր և ուրիշ նյութեր գնելու համար: Յեվ ահա, տպարանատեր Ովանեսայանցը՝ վորոշ կոմիսսիոնական վճարով ձեռք է զարկում այդ գործին: Բոլորովին նոր մեքենան ձեռք է բերվում Լայպցիգում 2,100 ռուբլով (արագատիպ): Միջին արագությամբ աշխատելիս նա տալիս էր մի ժամում 1200 որինակից ավելի տպած գրելու թղթի թերթի կրկնակի մեծությամբ: Սակայն յերբ մեքենան ստացվում է Բագու, տպարանատեր Ովանեսայանցի աչքերը նրա յետևից գնում են, և նրա ձեռնարկու միտքը մեկեն վճռում է իր բավական հնացած տպարանը նորել այդ մեքենայով, իսկ Սեմյոնի վրա սաղացնել իր հին մեքենաներից մեկը: Յեվ ահա, յերբ Սեմյոնը գալիս է մեքենան ստանալու, Ովանեսայանցն ասում է նրան.

— Յեթե ուզում յես, վերցրու այս հին մեքենան. յես նորը քեզ չեմ տալ:

Սեմյոնը տեսնելով մանր «խոզայիչիկի» համառությունն ու վճռակա-նությունը, չի ուզում նրա հետ վիճաբանություն սկսել ու միայն ասում է, թե ինքը կմտածե և յերկու որից հետո կմտնե վերջնական պատասխան տալու:

Պարզ յերևում էր, վոր չպիտի աջովել տպարանատիրոջը համոզել: Մեքենան ստացվել էր նրա առևտրական տան հասցեյով, իսկ իր տպարանը նորելու նրա ցանկությունն անսահման էր: Մեքենան, տեղավորված յերեք խոշոր արկղների մեջ, գտնվում էր պահեստում: Պահեստի փեղկերը բացվում էյին մի լայն փողոցի վրա, վոր գիշերային ժամերին ամայի յեր լինում: Պահեստը գտնվում էր Տելեֆոնայա փողոցից վոչ հեռու, իսկ Ովանեսայանցի տպարանից հեռու յեր: Սեմյոնը վճռում է մի հանդուգն ու վտանգավոր քայլ անել:

Վորովհետև նոր տպարանի համար կոնսպիրատիվ բնակարանն արդեն ձարված էր, ուստի և նա, Սեմյոնը՝ ընկերների հետ գիշերը ջարդում է պահեստը, մեքենան հանում է ու տանում Պերվայա Պարալլելնայա փողոց № 11, վորտեղ մեր գլխավոր անլեզալ տպարանը գոյություն ունեցավ մինչև 1906 թվականի հունվարը, յերբ տպարանն արդեն լիկվիդացիայի յենթարկվեց:

Պահեստը ջարդելու և արկղները սայլերի վրա բարձելու ժամանակ մեր ընկերները, վորոնց գլխավորն էր Սեմյոնը, գործում էյին այնքան համարձակ և վճռական, վոր իրանց կողքին պոստում կանգնած գործող վոյի մտքով անգամ բնավ չեր կարող անցնել, վոր այս աշխատողներն ապրանքի իսկական տերերը չեն: Յերբ ամենածանր արկղը բարձում էյին սայլի վրա, ընկերներից մեկը, կարծեմ Ստուբուկան, կանչեց գործողություն.

— Ոգնիր, զեմլյակ (համերկրացի)։— Նա յիլ հոժարությամբ ոգնեց։ Յերբ տպարանատեր Ուփանեսյանցն իմացավ, վոր մեքենան հափշտակել են, կատաղեց և Սեմյոնին սպառնաց, վոր պիտի սպանե նրան, սակայն պատասխան ստանալով նույնպիսի սպառնալիք, ստիպված յեղավ լռել։ Վերջիվերջո Սեմյոնի և Սարգիս Ուփանեսյանցի մեջ գործը վերջացավ կատաղան տան միջոցով եյինք կատարում բոլոր հարկավոր նյութերի գնումները։ Այն տունը, վորտեղ մեքենան տեղավորեցինք, տիպիկ թրքական տուն էր՝ իր առանձին փողբիկ բակով, բարձր պատով շրջապատված։ Շենքը բաղկացած էր յերեք մեծ սենյակից, ասիական յերկու խոհանոցից և փոքրիկ թոնրատնից։ Մի «աչք», վոր դեպի փողոց դուռ ուներ, հարմարեցված էր խանութի համար։ այդտեղ մենք ընդունում էինք տպարանի համար գնած զանազան նյութեր և հանձնում էինք գրականություն։ Մենք ստիպված էյինք այդ տունն ամբողջովին վարձելու, այլապես անկարելի կլիներ այդ տեղ ապահով զգալ, ըստ վորում մեզ համար ամեն մի հարևանություն վտանգավոր էր։

Տպարանն այդ շենքը տեղավորելու ժամանակները յես բանտից ազատ արձակվեցի և աքսորվեցի մի դուռ, վորտեղ դանդաղ էյի վոստիկանության հայտնի հսկողության տակ։ Միքանի ժամանակից հետո ուզեցին ինձ նորից ձերբակալել, ըստ վորում դատավճիռ էր կայացած ինձ համար, վոր Արևելյան Սիրիք աքսորեն։ Ինձ այդ մասին նախազգուշացրին, և յես փախուստ տվի։ Յերբ յես անլեզալ վերադարձա Բագու, կաղմակերպությունն ինձ առաջարկեց, վոր սկսեմ դարձյալ աշխատել տպարանում։ Յերբ կատարել տպարանի անդրագույն սարքավորման գործը։ Այդ տեղի յեր ունենում 1903 թ. աշնան մոտերը, կուսակցական համագումարից հետո։ Այդ տպարանը միանգամայն բացառիկ խնդիրներ ուներ կատարելու, ուստի սկզբունքների վրա՝ ուժիմի, կոնսպիրացիայի և ներքին կարգ ու կանոնի կողմից։ Են սկզբից վճռվեց կազմել վորոշ կադր այն աշխատավորներից, վորոնք կանխորեն համաձայնություն կտան յենթարկվելու այն բոլոր կանոններին ու կարգերին, վոր կսահմանվեն տպարանի աշխատանքների համար։ Աշխատանքների շտառը սկզբներում բաղկացած էր ութ հոգուց, վորում կատարյալ թափով, ըստ վորում սարքավորման վրա շատ ժամանակ էր գնում։ Հենց սկզբից տպարանական կյանքի մեջ սկսեց կիրառվել այն կազմակերպական ուժիմը, վորն ավելի քան յերկու տարվա ընթացքում այլևս չէր խախտվում։ Յես հետո կատարեմ, թե ինչու ենք կայանում այդ ուժիմը, իսկ այժմ ուզում եմ նկարագրել ձեզ տպարանի մեծությունն ու դասավորությունը։

Ինչպես արդեն ասացի, մեքենան բոլորովին նորն էր, իր բոլոր հարմարություններով և մինչև անգամ գլանակներ թափելու (ձուլելու) կադանով։ Շուտով մենք ձեռք բերինք նաև ստերեոտիպ մեքենա (ստանոկ), թուղթ կտրելու և հավաքել-կազմելու մեքենաներ, մի խոսքով՝ տպարանը սարքավորված էր տեխնիկայի բոլոր կանոնների համաձայն։ Տունը վարձեցինք ամբողջ տարով։ Մնում էր միայն խաղաղ մի մթնոլորտ

ստեղծել մեր շուրջը խաղաղ ապրող հարևանների միջև՝ մեր բակի սահմաններում։ Փողոցը բավական ամայի յեր, բայց մեր տան դեմուդեմ թրքական խանութներ կային, վորտեղ շարունակ խմբվում էյին թուրքեր, և ամեն մի կողմնակի մարդ, վնչ մուսուլմանական տարագով, վոր անցնում էր այդ փողոցով, իր վրա ուշադրություն էր գրավում։ Այդ ուայոնը գտնվում էր քաղաքի ծայրում, վորտեղ բնակվում էյին բացառապես մուսուլմաններ։ Տունը պաշտոնապես վարձել էր ընկ. Սեմյոնը և այնտեղ սկսեց ապրել մոր ու յեղբոր հետ։ Մայրն ու յեղբայրը կարծեցյալ էյին, սակայն բոլոր փաստաթղթերը՝ տան այդ յերեք բնակիչների գրանցման համար, կարգին էյին և որինական։ Սեմյոնը յերբեմն իր «մոր» հետ կառքով քաղաք էր գնում։ Վերադարձին սովորաբար մտնում էր «մոր» հետ մեր տան մոտի թրքական խանութները և զանազան գնումներ էր անում։ Նա այդ միջոցին առանձին իմն հոգատարություն էր հայտնաբերում իր «մոր» նկատմամբ վորով և վայելում էր ծերունի մուսուլմանների բարեհաճ վերաբերմունքն ու համակրանքը, վորոնք այդպիսի սովորույթները շատ են հարգում։ Այդ բոլոր հնարքներով ընկ. Սեմյոնին աջովից մեր տան շուրջն ստեղծել բարի դրացիական հարաբերություններ։ Այս ժամանակաշրջանում, վոր յես նկարագրում եմ, հայերի ու մուսուլմանների հարաբերությունները շատ սրվել էյին, վորին քիչ չէր նպաստում կառավարության քաղաքականությունը։ Մուսուլմանների հարաբերությունները վրացիների նկատմամբ միշտ լավ են յեղել, իսկ այդ ժամանակաշրջանում առանձնապես ընդգծվում էյին այդ հարաբերությունները։ Մեր շրջապատի բոլոր հարևանները գիտեյին, վոր Սեմյոնն ու իր ընտանիքը վրացիներ են։ Մենք, ֆնացած ընկերներս՝ թվով յոթը հոգի, վոր աշխատում էյինք տպարանում, իրավունք չունեյինք բացարձակապես վոչվորի աչքին յերևալու։ շրջապատի մարդկանց համար մենք բնավ գոյություն չունեյինք։ Այդ տան հասցեն վոչվոր չգիտեր։ Առաջին որերը չգիտեր նույնիսկ Լ. Բ. Կրասինը, միակը, վոր կապ էր պահպանում ընկ. Սեմյոնի հետ ամեն տեսակ հարաբերությունների համար։

Տպարանն սկսեց աշխատել 1903 թ. նոյեմբերի մեկից։ Առաջին անգամ տպվեց առանձին թերթով (ռուսերեն) «Ծանուցում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության II համագումարի մասին» հոգվածը («Իսկրայից»), վորն ուղարկված էր մեզ՝ փողբիկ թերթիկներին վրա լուսանկարած։

Ընկերները կարող են նկատել, վոր այդ տպարանը հենց սկզբից սպասավորում էր կարծես թե նոր «Իսկրային» (մենչիկինների ձեռքնանցած «Իսկրային»)։ Պետք է ասեմ, վոր այդ մոմենտին հասունացել էր արդեն կուսակցության այն յերկփեղկումը, վոր նշմարվում էր II համագումարի ժամանակ։ Ինչպես ձեզ հայտնի յե, մինչև 1905 թվականի գարունը՝ «Իսկրան» համարվում էր կուսակցության կենտրոնական որգանը, և տպարանը կատարում էր վոչ միայն նոր իսկրայական ուղղության պատվերները, այլ ամեն բան տպագրվում էր կուսակցության կենտրոնական կոմիտեյի առանձին ցուցմունքներով, վոր մեզ հաղորդում էյին նրա անդամները՝ հենց այն անդամները, վորոնք հետագայում պատկանում էյին բայըլիկների ֆրակցիային։ Իրանք էյին՝ հանգուցյալ ընկեր Դլեբով (Նոսկով)՝ ընտրված կի անգամ կուսակցության II համագումարում, և Լ. Բ. Կրասինը — անգամ կի երեսական գրուպպայի։

Սակայն մենք շուտով համոզվեցինք, վոր տպարանն այլևս չի կարող ֆնալ այն պայմաններում, վորպիսի պայմաններում ստիպված եյինք աշխատել: Այդ պայմանները հետևյալներն եյին. սենյակներից մեկը մենք հատկացրել եյինք մեքենայի և տառերի դարակավոր պահարանների համար: Այդ մի սենյակում կենտրոնացած եր տպագրության, ծախս-կազմելու, առաքման յենթակա գրականությունը ծրարելու ու փաթաթելու ամբողջ գործը: Խուզարկության դեպքում ամբողջ գործը միահետ պիտի կործանվեր:

Տպարանում աշխատողներն ամեն միջոց գործ եյին դնում, վոր կողմնակի մարդկանց կամ տան պատահանների մոտով պատահաբար անցնող վոստիկանական ծառայողի կամ շալիկի ուշադրությունն իրանց վրա չգրավեն: Մեզանից վոչվոր իրավունք չունեի աչքի յերևալու այն սենյակներում, վորոնք դեպի փողոց եյին նայում: Յերեկները մեր բոլոր իրերն ու անկողինները հավաքում եյինք այն սենյակը, վորտեղ մեքենան եր: Բոլոր սենյակները, բացի մեքենայից, առավոտյան ժամը 8-ից մինչև գիշերվա ժամը 11-ը այնպիսի տեսք ու կահավորություն ունեյին, վոր առանց յերկուց կրելու կարելի յեր ամեն մի կողմնակի մարդ ներս տանել: Իսկ մեր սենյակը, վորտեղ աշխատում եյինք, հասկանալի յի, անմատչելի յեր: Յեթե մեկը ցանկանար այդ սենյակը մտնել, Սեմյոնը կամ նրա «մայրը» հայտնում եյին, վոր դա կանանց սենյակ ե: Մուսուլմանների համար այդպիսի մի հայտարարություն բավական եր, և նրանք այլևս չեյին փորձիլ սենյակը մտնելու: Ռուս վոստիկաններից և պաշտոնյաներից շատերը, վորոնք յերկար ապրել են Բագու և գիտեն այդ սովորությունները, նույնպես պահանջում և հարգում եյին դրանց: Բայց յեթե գային խուզարկելու համար, այդպիսի մի հայտարարություն, պարզ ե, մեզ չպիտի փրկեր: Չանգով աղդանշան տալը մեզանում լավ եր դրված: Մերոնք փողոցից առանձին տեսակ եյին զանգահարում, և մենք այդ գիտեյինք: «Ոտարի» զանգահարության ժամանակ վայրկենապես կանգնեցնում եյինք աշխատանքը և ականջ եյինք դնում իմանալու համար, թե ով ե յեկողը: Դուռն ոտարների համար բաց եր անում բացառապես ընկ. Սեմյոնը, կամ, յեթե նա տանը չի լինում, նրա «մայրը», «քույրը», «յեղբայրը», այսինքն այն մարդիկ, վորոնք գրանցման եյին յենթարկված և համարվում եյին այդ տան պաշտոնական ապրողները: Չանգահարողներն ու այցելողները լինում եյին՝ ջրկիրը, ամեն յերեք օրը մեկ՝ աղբակիրը, զանգահարում եյին շատ անգամ բանջարավաճառները, մրգավաճառները, փերեզակաերը, լրագրավաճառը: Մի անգամ Սեմյոնի այցելության յեկավ մեր թաղային վոստիկանը, ծանոթացավ Սեմյոնի հետ և իր ծառայություններն առաջարկեց, յեթե կարիք լինի, ըստ վորում նա բոլոր մուսուլմաններին համարում եր գող ու ավազակ: Տոներ շնորհավորելու համար գալիս եյին գործողությունը, վիճակագրության համար յերկու անգամ մտել են բաղադային վարչության գործակալները և այլն: Մենք նման բոլոր այցելությունները հաշիվ եյինք առնում և դրանց համար ունեյինք մշակած վորոշ կանոններ, վոր ամենայն խստությամբ գործադրում եյինք կյանքի մեջ:

Մի այցելություն մեզ սաստիկ վախեցրեց և մեզ ստիպեց մի անգամ ընդմիջող վճռել՝ տպարանի մեքենաների բաժանմունքի ու բանվորների մասին համար մի ավելի հուսալի ու ապահով շնք ձարելու հարցը: Մի առավոտ, Նովրուզ-բայրամի տոնին, վորն այդ տարին գուգադիպել եր մեր ա-

վետման տոնին, Սեմյոնի մոտ ե գալիս տան տերը՝ մի պատվավոր մուսուլման, իր հետ բերելով, իբրև ընծա, մի գեղեցիկ վոչխար՝ ներկած ու նախշած գլխով ու յեղջուրներով՝ և հայտնում ե Սեմյոնին, վոր վճռել ե Մեկկա գնալ և դրա համար ել տունը ծախում ե իր հեռավոր ազգականին, վորն իր յեղբայրների հետ միքանի ժամից հետո պիտի գան նայելու տունն ու բակը: Սեմյոնի համար այդ հայտարարությունը մի հարված եր. նա հանկարծ շփթվեց ու տխրեց, բայց այդ բոլոր հուզմունքները այցելուին բացատրեց նրանով, վոր պիտի բաժանվի այնպիսի մի հարգելի ու պատվավոր տան տիրոջից, ինչպիսին նա յե՝ իր տան տերը: Տան տերը հուզված եր, տեսնելով Սեմյոնի կողմից այդպիսի ուշադիր վերաբերմունք, և հենց այստեղ սկսեց Սեմյոնին հանգստացնել, ասելով վոր նոր տնատերն ել մի շատ լավ և պատվավոր մարդ ե, նա հաջի յի, յեղի ե Մեկկա և այլն: Մեկկա ուխտ գնալը և հաջի կոչվելը մեր տան տիրոջ ամենաբուռն բաղձանքն եր: Սեմյոնի այն հարցին, թե արդյոք նոր տնատերը չի պահանջիլ իրանից տունը դատարկել, նա պատասխանեց, թե իմ տունս գնողը տնիւր շատ ունի, և ընդհակառակ, նա ինձանից ուզում եր իմանալ, թե արդյոք քո «գյուրջի» տնվորը չի՞ դուրս գալ տանից:

Այցելուներին սպասելու համար՝ մենք բոլորս անցանք այն սենյակը, վորտեղ դրված եր մեքենան, փակեցինք դուռն ու փեղկերը, վորոնք նայում եյին դեպի բակի կողմի վերանդան, և սպասեցինք այցելության վախճանին: Յերեկվա ժամը մեկի մոտ մի վեց մարդ—պատկառելի ծերունիներ յեկան տունը նայելու: Մենք շնչներս բռնած՝ լսում եյինք ամեն մի խոսքը: Սեմյոնը նրանց առաջնորդում եր ամեն տեղ, ցույց տալով բոլոր սենյակներն ու բակը: Յերբ անցնում եյին մեր դռան մոտով, Սեմյոնը հայտնեց, վոր այս սենյակն իր մոր և քրոջ սենյակն ե, և յեթե հաջին ցանկանում ե նայել նաև այդ սենյակը, այն ժամանակ խնդրում ե հյուրերին ժամանակ տալ իրան, վոր կանանց մի ուրիշ սենյակ տեղափոխի: Ծերունիները միաձայն բողբոջեցին դրա դեմ և շտապ հեռացան, չցանկանալով նայել նույնիսկ խոհանոցը, վորն ընդհանրապես տան՝ կանանց բաժանմունքի մասն եր համարվում: Այցելուները գնացին, բարեկամաբար հրաժեշտ տալով Սեմյոնին: Հյուրերի մեկնելուց հետո մենք դուրս վազեցինք մեր փոքրիկ բակը և յերկար խաղում եյինք մեր վոչխարի հետ, շոյելով և փաղաքելով նրան: Նոր տնատերը հետևյալ օրը Սեմյոնի համար ընծա ուղարկեց մի աքլոր, հավ և մի մատուցարան հրաշալի փլավ: Այդպիսով մենք մի ամբողջ տնտեսություն ունեցանք: Աքլորը մեր բակի համար հարմար չեր. նա թռչում անցնում եր հարևանների բակերը և այնտեղ կատաղի կռվի յեր բռնվում ուրիշ աքլորների հետ: Նրան կամ քշում կամ բռնում ու զրացի տան կտրից մեր բակն եյին գցում՝ հայհոյելով: Մեր աքլորի բռնած վարքագիծը կարող եր բարդությունների պատճառ դառնալ հարեվանների հետ, և դրա համար նրա վիզը կտրեցինք. վոչխարն ու հավը ֆնացին մինչև ամառը:

Տունը վաճառվելուց և նոր տնատիրոջ անսպասելի այցելությունից հետո մեր առաջ ավելի սուր կերպով ծառացավ տպարանն ըստ կարի ավելի ապահով մի տեղ տեղափոխելու հարցը, այն ե՝ վճռվեց տպարանը և տպարանի ամբողջ բանվորական մասը թագցնել խկապես Բնդաւաղայ մի տեղ: Մեր տան սահմաններում մի բան անելու վոչ մի հնարավորություն չկար,

ըստվորում տուներ մի հարկ եր, ներքնահարկ չունեն: Մեր տան խուլ կողմից՝ ուղղակի պատին կպած բավական մեծ մի գոմ կար՝ իր խոտանոցով: Գոմի մյուս կողմում փոքրիկ բակն եր, բարձր պարիսպներով շրջապատված: Այդ յերկայն գոմը իր մի ծայրով դուրս եր դալիս փողոց և վերջանում եր յերեք փոքրիկ սենյակներով: Այդ ժամանակ գոմում պահում եյին յերկու ձի: Գոմի մի մասը բռնված եր խոտով, իսկ գոմի ծայրը, վոր վերջանում եր յեռանկյունաձև մի փոքրիկ հրապարակով և վորը կպած եր այն սենյակին, վորտեղ դրված եր մեքենան, դատարկ եր: Այդ գոմատիրոջ վորդին՝ յերիտասարդ Հասանը, Սեմյոնի հետ ծանոթ եր և յերեքսն նրա մոտ հյուր եր գնում: Սեմյոնը մի անգամ ինքը ցանկութուն հայտնեց գնալ նրա մոտ և նայել, թե ինչպես են լծում ձիերը, և ապա կառքով միասին պտտել քաղաքում: Հասանը հոգարութուն հայտնեց, և այդպիսով Սեմյոնին հաջողվեց հանգամանորեն դիտել գոմը, բակը և այն յերեք սենյակները, վորոնց մեջ ապրում եր մի ձիապան միայն: Գոմը յերկրորդ անգամ դիտելուց հետո պարզվեց, վոր նրա հատակը մոտավորապես յերկու արշին ցածր եր մեր բնակարանի հատակից: Հարցը քննադատության առնելով՝ գտանք, վոր ավելի ձեռնտու և հարմար ե գոմի դատարկ մասը վարձել կամ գնել և ոգտագործել մեր նպատակների համար: Յես գիշերը մեր տան կլուրից հետադոտեցի գոմի տեղադրութունը և յեկա այն յեղրակացության, վոր վերոհիշյալ մասը վարձելու դեպքում կարելի կլինի ստորերկրյա անցք փորել և այնտեղ տեղափոխել մեքենան և աշխատանքի համար անհրաժեշտ յեղած այլ պարագաները: Սեմյոնն սկսեց պարզել այդ տունը գնելու հարցը: Նախ նա Հասանին պատմեց, վոր իրան հարկավոր ե մի շենք պահեստի համար այն նյութերի, վորոնց նա պետք ե վերամշակել: Հասանին և ուրիշներին, պետք յեղած ժամանակ, Սեմյոնը պատմում եր, վոր մտադիր ե մի փոքրիկ արհեստանոց բաց անել իր բնակարանում, վորտեղ պիտի պատրաստե ածուխի ճրագներ աղեղնաձև լապտերների համար, և վոր այդ ապրանքային ինքնավարությունից: Մենք դիտմամբ տարածում եյինք այդպիսի լուրեր, վոր մեր շրջապատի հասարակությունն ուղադրութուն չդարձնե այն հանգամանքի վրա, վոր մենք շատ հաճախ արկղներով ապրանք ենք ստանում և ուղարկում: Թուղթ, ներկ, մուր և այլ նյութեր, նույնպես և պատրաստ գրականություն—այդ բոլորը բերում եյին մեզ մոտ սայլերով. սայլապանը միանգամայն մեր մարդն եր: Հոր հետ խոսելուց հետո Հասանը հայտնեց Սեմյոնին, վոր իր հայրը համաձայն ե ծախել ամբողջ գոմը՝ յերեք սենյակներով յերկու հազար ուրբու, միաժամանակ հայտնեց, վոր յեթե մենք համաձայնենք նրան՝ հորը վարձու տալ գոմի այն մասը, վորն այժմ նա բռնած եր փաստորեն, համաձայն ե մեզ տարեկան 150 ուրբ. վարձ վճարելու: Գոմը գնելու և տպարանն այնտեղ տեղափոխելու վճիռը կայացնելուց հետո մենք կենտրոնական կոմիտեյի ներկայացուցչի առաջ դրինք մեզ յերկու հազար ուրբուի հատկացնելու հարցը: Թեև կուսակցության յերկրորդ համագումարից հետո կուսակցական դրամարկղի միջոցներն սկսել եյին բավական աջող գանձվել, բայց և այնպես յերկու հազար ուրբուին շատ խոշոր գումար եր՝ միանվագ ծախսելու համար: Յերբ Սեմյոնը փորձեց ընկերների հետ այդ հարցի մասին խոսել՝ Լ. Բ. Կրասինի միջոցով, նրանցից շատերը բացասական վերաբերմունք հայտնաբերեցին այդ ձեռ-

նարկումի նկատմամբ: Սեմյոնը մեզ մոտ յեկավ դատարկաձեռն: Մենք խորհրդակցություն ունեցանք, վորտեղ վճովեց—ուղարկել ինձ գիշերը մի խումբ հին ընկերների մոտ և լրջորեն խոսել նրանց հետ տպարանի դրության մասին, վորի վրա արդեն ծախսված եր միքանի հազար ուրբու, և վորը մենք կարող եյինք կորցնել ամենաթեթև, մակերեսային մի խուզարկության ժամանակ: Յես գիշերը գնացի և պայմանական հասցեյով գտա ընկ. Քնկ. Կապերենկոյին, Յեկատերինա Կիցին, Ն. Մ. Ֆլերովին, Ի. Յե. Գուկովսկուն, Լ. Բ. Կրասինին: Կարծիքների փոխանակությունից հետո ընկ. Գուկովսկին վճապես հայտնեց, վոր տպարանի վրա արած ծախսերից հետո, ինկատի առնելով այդ ձեռնարկության հազարն շահակությունը, միանգամայն անթույլատրելի յե կանգ առնել այդպիսի մի գումարի առաջ: Նա առաջարկեց, յեթե կուսակցության դրամարկղում այժմ չգտնվի այդչին Բագվի քաղաքային վարչության դրամարկղից, վորտեղ հաշվապահ եր ընկ. Գուկովսկին: Այդ ժամանակ Բագվի քաղաքապետին եր հայտնի նախորդիկ Ա. Ի. Նովիկովը: Գուկովսկուն հաշվապահ եր հրավիրել Նովիկովը, վորը շատ մեծ հարգանքով և վստահությամբ եր վերաբերվում Գուկովսկուն և վերոհիշյալ բոլոր ընկերներին, թեև նրանք պատկանում եյին յերկու տարբեր ուղղություններին: Գուկովսկուն, հերավի, հաջողվեց ժամանակով վերցնել այդ փողը, վոր, կարծեմ, մի ամսից հետո վերադարձրեց ընկ. Կրասինը, վոր կուսակցության գլխավոր գանձապահն եր և բոլոր միջոցների հայթայթողը: Շուտով նոր տնակը (նախկին գոմը) գնեցինք՝ ապագա պահեստի վայելուչ անվան տակ: Գնելուց հետո գոմը մենք նորից խնամքով հետադոտեցինք. պարզվեց, վոր գոմի ծայրը խարի բաժանմունքից զատված եր հիմնավոր պատով, իսկ այդ մասի նախկին դռան տեղ քարե պատ եր շարված: Այդպիսով գոմի յեռանկյունաձև մասը, վոր անմիջականորեն կպած եր մեքենաների բանժանմունքին, բոլորովին դատարկ եր և կարծես թե լախտի բերմունքով կանխորեն նշանակված եր մեր անլիզալ ձեռնարկության համար: Գնման ձևականությունները կատարվի եյին ապրիլի ազգրներին, և մինչև ապրիլի վերջը մնում եր ինձ մշակել ստորերկրյա անցքի պլանը (նախագիծը) և կազմել անհրաժեշտ առարկաների և նյութերի ցուցակը, նոր շենքը սարքելու, սարքավորելու, ստորերկրյա անցք բաց անելու, և պատերի ծակուծուկերը ծածկելու համար, ըստվորում վճռված եր մեքենան քակել և ապա, մեր սենյակի պատը քանդելով, մեր սենյակից անմիջապես մաս-մաս փոխադրել կիսովին ստորերկրյա շենքը: Անհրաժեշտ նյութերը՝ աղյուս, կավ, տախտակ, յերկաթյա թուկ և այլն, հետզհետե ստանում եյինք քիչ-քիչ քանակություններով: Այդ բոլոր նյութերը կարգին դարսում եյինք մեր բակում: Ձեռք եյինք բերել փոքրիկ նիզ, թի ու այլ գործիքներ: Այդ ամբողջ ժամանակ տպարանի սովորական աշխատանքն առաջ եր գնում իր կարգով:

«Մայովկայից» առաջ Կ. Կ. միշտ շատ նյութեր եր ուղարկում: Այդ ժամանակ արդեն սկսված եր ուսույապոնական պատերազմը, և պատերազմի մասին անհետաձգելի բազմաթիվ թուղթիկներ եյին հարկավոր լինում: Կ. Կ. պատվիրել եր 200,000 որինակից ավելի մայիսյան թուղթիկներ միայն, վոր պետք ե ուղարկվելին կուսակցական գանազան կոմիտեներին: 1904 թվականի մայիսի մեկի համար թերթերը՝ Ռ. Ս. Գ. Կ. կենտրոնական կոմիտեյի

ռուսական գրուպպայի պատվերով, գրել եր Մաքսիմ Գորկին: Թերթիկը գրված եր կարճ, բայց չափազանց վառ ու ազդու: Մենք դրանից տպեցինք 200,000 որինակից ավելի՝ պապիրոսի բարակ թղթի վրա, դուրընթեռնելի և խոշոր հիանալի տառերով: Մենք վճռեցինք բոլոր անհետաձգելի գործերը վերջացնել մինչև մայիսի մեկը և ապա աշխատանքները մի շարքով դադարեցնել, ըստվորում մեր հաշվով մի շաբաթ ժամանակ եր հարկավոր տպարանը նոր շենքը փոխադրելու և սարքավորելու համար: Հին տոմարով մայիսի մեկին, յերբ Ռուսաստանի պրոլետարիատի մեծամասնությունը տոնում եր այդ ուրը, մենք վաղ-առավոտվանից սկսեցինք ճեղք բաց անել այն պատում, վոր մեր սենյակը բաժանում եր նոր շենքից: Անփորձ վորմնադիրներին համար բարոկկո պատը ճեղքելը շատ դժվար գործ եր, բայց և այնպես, շնորհիվ մեր յերիտասարդական յեռանդին ու տոկունության, կես-որվա մոտ պատը ծակել եյինք այն չափով, վոր կարողացանք մտնել մեր նոր միջին շենքը և առաջին անգամ աղատորեն հետադուրել ամեն կողմից: Գոմի այն մասի, վորը մենք պետք ե միացնեյինք մեր շենքի հետ, հատակը փխրուն հող եր: Մինչև յերեկոյան դեմ պատի ծակը լայնացրինք և մեքենան մաս-մաս փոխադրեցինք նոր շենքը, բացի թափանիվից, վորի տրամագիծը մի մետր եր և բաղկացած եր մի կտորից: Թափանիվը միառժամանակ մի կողմ թողեցինք: Սկսեցինք նոր շենքում մեքենան դնելու համար հիմքը շինել: Այդ բոլոր աշխատանքների ժամանակ իմ տեխնիկական կրթությունը և անցյալի գործնական աշխատանքներն առաջին անգամ պետք յեկան և ոգնեցին այդ հարկավոր և անհրաժեշտ գործը կատարելու համար: Յերեկոյան պատի ծակն արդեն ծածկված եր և ձեփած: Մեքենան և տպագրական ամբողջ գույքն այսպիսով մնաց ծածկված մեր պատի մյուս կողմում, բացի թափանիվից, վորը դուրս հանեցինք և զանազան բաներով ծածկեցինք: Դրանից հետո գլխավոր խնդիրն այն եր, վոր շենքի համար մի ապահով մուտք բաց անենք այնպես, վոր մեր տան լեզալ մասում խուզարկություն յեղած ժամանակ բոլորովին աննկատելի մնա: Այդ նպատակի համար մենք ոգտվեցինք մեր սենյակի յերկու վորմախորշերից (պատուհան) մեկով: Մինք սկսեցինք պատուհանի հատակը քանդել, մինչև վոր հասանք հիմքին, այսինքն կարծր հողին, վոր նախկին գոմի հատակի հետ նույն մակարդակի վրա յեր գտնվում: Պատուհանի հատակը միանգամայն բավական եր ազատ մուտքի համար: Մնում եր այնպես շինել, վոր մուտքի բոլոր հետքերը ծածկված լինեն: Դրա համար հաստ տախտակներից շինեցինք մի բլշակ (խուփ), մեկ կողմը ձեփեցինք և յերբ դնում եյինք պատուհանի տակը, ստացվում եր նախկին հատակը: Ապա այդ խուփը Լ. Բ. խորհրդով և նրա ցուցմունքով՝ մենք կցվածներով (շարնիրներ) այնպես հարմարեցրինք, վոր նա հեշտությամբ և ազատ բարձրանում և իջնում եր, ապա յերկար փորձերից հետո աջողվեց այնպես անել, վոր բռնում եր պատուհանի նախկին հատակի տեղը այնպես, վոր վերևից նայելով՝ անկարելի յեր նկատել, վոր դա շարժական հատակ ե: Սկզբներում պատուհանի հատակը բաց եր մնում: Ազատ անցնում եյինք նոր շենքը: Սակայն յերբ վորեն անձանութ մեկը, վոր իմանում եյինք զանգով, մեզ մոտ եր գալիս, վայրկենապես թաղնվում եյինք մեր տպարանի ընդհատակյա մասում, այնտեղից ծածկում եյինք պատուհանի հատակը, նեցուկ դնելով չափազանց ամուր մի յեռոտանի: Այս բոլորից հետո վճռեցինք մոտիկ կիրակի ուր թափանիվը ներս տանել, առանց վորի չեք կարե-

լի աշխատել: Դրա համար պետք յեղավ այս անգամ քանդել խոհանոցի պատը: Առավոտյան սկսեցինք գործը և, ի մեծ ուրախություն մեր, յերեկոյան արդեն ամեն բան հաջող վերջացած եր, իսկ հետևյալ առավոտվանից աշխատանքն սկսեց նորից յեռալ այս անգամ արդեն ապահով շինքում: Բոլոր կասկածելի տեղերն այնպես եյինք շինում և սարքում, վոր խուզարկության ժամանակ վոչ մի բան աչքի չընկնի: Մեր ընկերներից ամեն մեկը խուզարկու ժանդարմ եր դառել և անում եր այս կամ այն դիտողությունը: Մի խոսքով, արտաքուստ ամեն բան այնպես եր շինված, վոր մենք ինքներս, շատ քննաբար և մեծ բժախնդրությամբ վերաբերվելով բոլոր թերություններին կոնսպիրացիայի կողմից, հրճվում եյինք, տեսնելով մեր ձեռքի գործն ու մեր հնարագիտությունը: Մենակ ստորերկրյա շենքը և տպարանն այնտեղ սարքելը դեռ բավական չի ամբողջ գործը վտանգից ապահովելու համար: Հարկավոր եր աշխատանքի համար ներքին այնպիսի պայմաններ ստեղծել, մշակել այն անհրաժեշտ ուժերը, վոր առավելագույն յերաշխիք տար գործի ապահովության համար: Նախ կազմեցինք աշխատանքի ժամացուցակը: Բանվորական նորմալ որն սկսվում եր առավոտյան ժամը 7¹/₂-ից: Կես ժամ առաջ պետք եր լվացվել և անկողինները ներքնատուն տանել: Ժամը 8-ին սկսվում եր իսկական աշխատանքը: Ուղիղ ժամը 10-ին բլշակի զարկը մեզ թեյի յեր հրավիրում. թեյի համար հատկացված եր ուղիղ 15 րոպե: Թեյից հետո աշխատում եյինք մինչև ժամը 1-ը: Ժամը 1—2 դադար եր լինում ճաշի համար: Ժաշի ժամանակ լինում եր լրագրի իլուր ընթերցանություն: Ուղիղ ժամը 2-ին նորից իջնում եյինք տպարան և աշխատում մինչև ժամը 7¹/₂-ը. ընդունված կանոն եր՝ նախքան ներքնատունից դուրս գալը պետք ե տպարանը հավաքեյինք, մաքրեյինք ու ավելեյինք, տառերը մաքուր լվանայինք, մեքենաները սրբեյինք և յուղեյինք, մի խոսքով՝ ամեն բան այնպես պատրաստեյինք, վոր առավոտյան հնար լինեք անմիջապես գործի անցնելու: Սովորաբար յերեկոյան ժամը 8-ին բոլորս՝ մաքուր լվացված, նստում եյինք թեյի: Թեյից հետո անցնում եյինք այն սենյակը, վորտեղ առաջ տպարանն եր, իսկ այժմ տպարանի մուտքը: Այդ սենյակն այժմ մի հանգստավետ անկյուն եր դարձել: Ասֆալտի (սև կուպր) հատակն ամբողջովին ծածկված եր յերկու լավ գորգերով: Սենյակը վոչ մի կահավորություն չունեի, բացի յերկու ասիական թախտերից, վորոնց վրա նույնպես տարածված եյին գորգեր: Մեր աշխատանքների միջոցին յերեկոյան ժամերն ամենահաճելի և յերջանիկ ժամերն եյին: Զբաղումսերի ժամերն այստեղ ել կարգավորված եյին: Շաբաթվա ընթացքում չորս յերեկո ամեն մեկն զբաղվում եր իր ուզածով, այն ե՝ կարդում եյին, հանդարտ կիթառ ածում, դամա խաղում, զրուցում: Իսկ շաբաթվա մնացած յերեք յերեկոները նվիրված եյին միասին ընթերցանության կամ վորեն հարցի. վերլուծություն ու քննություն: «Ուտար» զանգահարություն յեղած դեպքում, սահմանված ուժերի համաձայն, մենք իսկույն առանց վորեն աղմուկի և իրար-անցման, իջնում եյինք ներքնատուն, այնտեղից ծածկում եյինք խուփը և սպասում ազդանշանին: Որվա և գիշերվա բոլոր ժամերին, մեր հեռախոսը հետո, բոլոր սենյակները պետք ե ունենային մաքուր հավաքած սենյակի տեսք, վոր վոչվոր չնկատե, վոր այդ սենյակներում լինում են նաև ուրիշ մարդիկ, բացի այդ տան պաշտոնապես ամբողջ ճանաչվածները: Յեվ այս բոլոր կանոններն ու կարգերը մենք կատարում եյինք չափազանց

խստությամբ և ամենայն ճշտապահությամբ յերկու և կես տարի անընդհատ՝ Մենք, ներքնատան աշխատողներս, սկզբներում հինգ հոգի էյինք, իսկ հետո յեղանք յոթը։ Քնում էյինք յերկու սենյակներում։ Յես ու յերեք ընկեր քնում էյինք ներքնատան կից սենյակում։ Քնածս ժամանակ յես շատ դգաստ էյի, զանգի առաջին ձայնին կարող էյի դարթնել անպայման, ուստի և պառկում էյի ներքնատան մուտքի մոտ։ Ինձ վրա պարտականություն էր դրված՝ անհրաժեշտության դեպքում արագ արթնացնել բոլոր ընկերներին, բաց անել ներքնատան մուտքը, լամպը վառել այնտեղ, ընդունել ընկերների անկողիններն ու այլ իրերը, վորից հետո նրանք ել իջնում էյին այնտեղ և մուտքը ներքևից փակում։ Զանգի նշանով մենք այդ գործողությունը շատ անգամ էյինք կատարում, յերբեմն ել ստուգելու ու փորձելու համար ինքներս էյինք խուճապ գցում։

Նախքան տպարանի խակական աշխատանքներին անցնելը՝ այստեղ համառոտակի պատմեմ ամբողջ գործի ներքին կազմակերպության մասին։ Ինչպես արդեն ասացի, արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը լինում էր ընկ. Սեմյոնի միջոցով։ Նա յեր հարաբերություն ունենում ընկ. Կրասինի հետ, վորի միջոցով ստանում էյինք տպագրության համար բոլոր պատվերները, նույնպես և գրականության առաքումների համար բոլոր հասցեները և ցուցմունքներ, թե վորտեղ ինչ գրականություն և ինչ քանակով պետք է ուղարկել։ Ընկերներից վոչվոք մեր տունը չեր այցելում և չպիտի յել այցելել, ընկերներից վոչվոք չգիտեր տպարանի հասցեն, բացի ընկ. Կրասինից։ Տպարանի գործավորներից, վորոնք բոլորն ել ապրում էյին այդ տանը անլիզալ, վոչվոք բացարձակապես իրավունք չունեին ցերեկը տանից հեռանալու։ Մենք ունեյինք մեկնումների համար ժամացուցակ, վորին խըստորեն հետևում էյինք. այդ ցուցակի համաձայն մեզանից ամեն մեկին յերկու շաբաթը մի անգամ թույլ էր տրվում տանից քաղաք դուրս գալու՝ յերթամբ 8—11-ը։ Թույլատրվում էր յերկուսին միասին դուրս գալու, և պարտադրաբար պետք է վերադառնային ժամը 11-ից վոչ ուշ։ Այդ ժամացուցակին հետևում էյինք ամենայն ճշտությամբ յերկու տարի անընդհատ, և մեզանից վոչվոքի մտքովս անգամ չեր անցնում այդ կանոնները խախտելու։ Ընկ. Սեմյոնը և մյուսները, վորոնք ճանաչված էյին այդ տան պաշտոնապես ապրողներ, զանազան գործերով տանից դուրս էյին գալիս ամեն մի ժամանակ, սակայն վոչվոքի թույլ չեր տրվում գիշերվա ժամը 12-ից ուշ վերադառնալ տուն։ Եթե մեկնումեկը ժամանակին չեր կարողանում վերադառնալ, նա այդ որն այլևս չեր վերադառնում։ Սեմյոնը բացառություն չեր կազմում։ Գիշերվա 12 ժամից հետո ամեն մի զանգահարություն, նաև մեր պայմանական զանգահարությունը, համարում էյինք «ոտար» և այդ ժամանակ գործադրում էյինք վերև հիշածս բոլոր նախադրուշական միջոցները։

Տպարանի համար թուղթ էր բերում հատուկ նշանակված մի մարդ, վորի պարտականությունն էր նաև պատրաստ գրականությունը բերել արկղի արհեստանոցը։ Այդ արհեստանոցում, վորտեղ իմ գծածներով ու ցուցմունքներով պատվիրում էյինք շինել արկղներ, մենք գրականությունը ծրարում էյինք, արկղների վրա հասցեները գրում և առաքման համար պատրաստ այդ արկղները հանձնում էյինք մի ուրիշ հատուկ մարդու, վորը կապեր ուներ յերկաթուղու գործակալների հետ, և վորը գրականությունը հանձնում

եր յերկաթուղուն «բեռնագիրը ներկայացնողի» հասցեով։ Բեռնագիրներն ու նրանց կրկնակները (դուրլիկատ) հանձնվում էյին Սեմյոնին, վորը հասցնում էր մեզ։ Մենք վերցնում էյինք այդ փաստաթղթերի ճիշտ պատճենները և ապա այդ դուրլիկատներն ուղարկում Ռ. Կ. Կ. Կ. Կ. տեխնիկական բյուրոյի ցույց տված հատուկ հասցեներով։ Այն ժամանակ տեխնիկական բյուրոյի անգամ էյին, իմիջի այլոց, ընկ. Գոլուբկովը, հանգուցյալ Լյուբիմովը (Մարկ) և ուրիշները։ Բեռնագիրներն ու գրականությունը յեթե ստացվում էյին, մեզ տեղեկություն էյին տալիս, վոր այս-ինչ բեռնագրով ապրանքն արդեն ստացված է։ Այդպիսով մենք իրազեկ էյինք՝ հասկնալ և արդյոք գրականությունն ըստ պատկանելույն, թե վոչ։ Գործն այնպես էր դրված, վոր այն մարդիկ, վորոնք մեզ համար թուղթ և այլ նյութեր էյին բերում և մեզանից տանում հատուկ հակերի մեջ ծրարած գրականությունը, չէյին իմանում, վոր մեզանից հատկապես գրականություն են տանում։ Արկղի արհեստանոցում անպայման չգիտեյին, թե վորտեղից է գալիս այդ գրականությունը։ Յերկաթուղով մեր ապրանք-առաքողը նույնպես չգիտեր բոլորովին, թե ինքն ինչ ապրանք ե ուղարկում, և յեթե գործը բացվեր, նա անպայման չեր կարող իմանալ, վոր այդ գրականությունը տեղական ծագում ունի։ Յեթե մեզ մոտ թուղթ կամ ուրիշ նյութեր էյին բերում, մենք այդ բոլորը դարսում էյինք դեպի փողոց նայող «աչքում» և հենց այդտեղից սայլի վրա էյինք բարձում արդեն պատրաստ և ծրարած գրականությունը, վոր դուրս էյինք բերում այդ շենքը՝ սայլը գալուց միքանի բոպե առաջ, և ուղարկում արկղի արհեստանոցը։ Նոր բերած թուղթն ու այլ նյութերը միքանի բոպեյից հետո արդեն ծածկարանում էյին լինում։ Այդպիսով, յերբ, ասենք՝ կես ժամից հետո, մեզ խուզարկելու համար մեզ վրա թափվեյին, այն ժամանակ ամբողջը տանը չէյին գտնիլ բնավ և վոչ մի հետք։

Այժմ դժվար է թվիլ այն բոլոր մանր նախադրուշությունները, վոր մենք մեծագույն ճշտությամբ կետ առ կետ կիրառում էյինք կյանքում, սակայն յես հավատացած եմ՝ այդ ուժիմի և գործի արտաքին ու ներքին կազմակերպության շնորհիվ էր, վոր մենք կարողացանք պահպանել իր արտադրողականությամբ վիթխարի այդ անլիզալ ձեռնարկությունը։ Տան ներսում, մանավանդ տան ստորերկրյա մասում, մենք միշտ բարեկամում էյինք ամեն բան, վոր կարող էր մեզ կոնսպիրացիայի կողմից ամենամեծ յերաշխիքը տալ, նույնպես և մեզ համար ստեղծել ավելի տանելի կացություն աշխատելու համար։ Ծածկարանի մուտքը կարճ ժամանակում մենք այնպես էյինք կատարելագործել, վոր յերբ գործանոցից դուրս էյինք գալիս և մտնում մեր բնակարանը, մեքենաբար, շնորհիվ պողպատի թուղթի վրա հարմարեցրած ճախարակին, վորմախորշի հատակը ծածկվում էր։ Մուտքը նորից բաց անելու համար հարկավոր էր յերկու վոտով կանգնել բացվող հատակի (բլախի) վրա և ներքև իջնել, և այդ ժամանակ ամբողջ հատակը սահուն կերպով իջնում էր անվանների (ոտիկ) վրա։ Մենք մեր մեջ հպարտանում էյինք մեր ձեռքի գործով և սաստիկ մեծ ցանկություն ունեյինք այդ բոլորը ցույց տալ մեր դրսի ընկերներին, սակայն մեզ զսպում էյինք և մեր ցանկությունը չէյինք կատարում։ Միայն տեղի տալով ընկ. Սեմյոնի թախանձագին խնդրներին, թույլատրվեց ընկ. Կրասինին, վոր գիշերն այցելե տպարանը։ Նա չափազանց զարմացավ և թույլտվություն խնդրեց,

վոր կուսակցության II համագումարի ԿԿ անդամ Գլեբովին (հանգուցյալ Նոսկով) մեզ մոտ բերեց Յեվ հերավի, ընկ. Գլեբովը ընկ. Կրասինի հետ մի անգամ յեկավ մեզ մոտ. հանգուցյալ Գլեբովը չափազանց ապշած եր մնացել, տեսնելով ամբողջ գործի կազմակերպությունը. նրան առավելապես ապշեցնում եր ներքին կազմակերպությունը և կարգապահությունը, նույնպես և գործի տեխնիկան: Հիշում եմ՝ մենք նրա առաջը դրինք միջանի տեսակ գրքերից յերկ-յերկու որինակ՝ մեր և արտասահմանի «Իսկրայի» տպագրած. նա վոչ մի կերպ չեք կարողանում տարբերել, թե վոչն է մեզանում տպագրվածը և վորն՝ արտասահմանում: Դա բացատրվում է նրանով, վոր մենք մեր տպարանի տառերը պատվիրել էինք հատկապես Լեմանի Պետերբուրգի ձուլարանում, ինչպես և «Իսկրայի» թե թերթի և թե գրքի տառերը: Մեր թուղթն ել «Իսկրայի» թղթիցն եր: Հատուկ մեր տպարանի համար այդ թուղթը պատվիրում եր ընկ. Կրասինը իր ծանոթ Լոժի մի ֆաբրիկանտի: Իսկ ինչ վերաբերում է տպագրական գործի տեխնիկային, պետք է ասեմ, վոր մեզանում, բացի ինձանից, աշխատող բոլոր ընկերները բարձր վորակի տեր գրաշարներ և տպագրիչներ էին: Ընկ. Գլեբովը՝ հեռանալով, Կ.Կ. կողմից մեզ շնորհակալություն հայտնեց և մեր տպարանն անվանեց «Համառուսաստանյան հնոց», վորը ջերմություն է հաղորդում ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատին:

Տպարանի գոյություն ամբողջ ժամանակ, մոտ յերկու ու կես տարի, մեզ այցելել են ընդամենը միքանի ընկերներ, վորոնք յեղել են Ռ. Ս. Դ. Բ. Կ. ԿԿ անդամ կամ գործակալ: Իմիջի ալոց մեզ մոտ յեղել են՝ հանգուցյալ ընկ. Կարտաշևը, Ի. Ի. Բիրիկովը, Պոստալովսկին (Վադիմ), Կադերենկոն և Յեկատերինա Կիցը: Տպարանի գոյության յերկրորդ տարվա վերջին մենք ընկ. Վ. Ս. Ստարկովին, վոր հայտնի ինժեներ եր, հատուկ հրավիրեցինք տպարան. նրան ներս տարանք մեր բնակարանը և առաջարկեցինք, վոր ստորերկրյա ծածկարանի մուտքը գտնե: Նա սկսեց խնամքով նայել ու դիտել բոլոր սենյակները, թխկացնել բոլոր պատերը և իր կարծիքով կասկածելի բոլոր տեղերը, բայց և այնպես նրան չաջողվեց գտնել մուտքը: Ստարկովին ինքը խոստովանեց, վոր պարտված է. ի տրիտուր նրա այդ խոստովանություն՝ մենք նրան ներս տարանք մեր ծածկարանը, և նա մեր ծածկարանի կազմությունը այնքան եր հիացած, վոր առաջարկեց, թե մեզանում մամուլի ազատություն հայտարարելուց հետո այս ամբողջ ձեռնարկությունը պետք է թողնել այս նույն դրություն մեջ, և ցույց տալ հասարակության այս բոլոր կառուցումները մեծագին տոմսակներով. կուսակցությունը շատ մեծ յեկամուտ կունենա:

Աշխատանքների ժամանակ ծածկարանի ողջ շատ խեղդուկ եր լինում միշտ, վորովհետև այդ նկուղը միանգամայն զուրկ եր քամահարությունից (վենտիլյացիայից): 1901 թ. ամառը մենք ձեռնարկեցինք մի փոքրիկ ծակ բաց արինք: Չնայելով դրան, ամառն անտանելի տոթ եր լինում և շնորհիվ Բագվի շոգերին, մինչև անգամ տպարանի մեքենայի զլանակները կակղում էին, և մենք սովորաբար հուլիս ամսին տպելու գործը կանգնեցնում էինք, այդ ամսին մայրեր և ստերեոտիպներ էինք պատրաստում և տպագրություն համար ավելի շատ նյութ էինք շարում: Այդ ամսին եր ընկերներ մի մասն արձակուրդ գնում:

Չնայելով վերոհիշյալ նախադրություններին, այնուամենայնիվ մենք չեյինք կարող հավատացած լինել, վոր խուզարկության ժամանակ մեզ չեն հայտնաբերել: Վճոված եր՝ մեզ ձերբակալելու դեպքում՝ զինյալ ընդգրկմադրություն ցույց տալ վոստիկաններին: Մենք բոլորս զինված էինք ատրճանակներով, և մեր վճիռը մենք անշուշտ իկատար կածեյինք, յեթե առիթը ներկայանար: Խելացի՜ յեր վճիռը—դա այլ խնդիր է:

Բայց այն ժամանակ այլ վճիռ չեյինք կարող ընդունել: Հետո, չնայելով վոր մեր ներքին հարաբերությունները միանգամայն ընկերական էին և բարեկամական, ամենքն էլ միակերպ շատ ծանրաբեռնված էին գործերով և սրտանում էին հավասարապես՝ ամսական 25 ռուբ., ճաշում, ապրում էին միասին,—մի խոսքով իրար մեջ վոչ մի տարբերություն չեյին լինում, սակայն մարդը մնում և դարձյալ մարդ: Ընկերներից վոմանց ծանր եր գալիս խիստ ուժեղ, աշխատանքի պայմանները. դրանք սկսում էին ջղայնանալ և հաճախ, պատահում եր, դատարկ պատճառներով սկսում էին վիճել ու կովիլ իրար հետ: Յես, վորպես նրանց ավագ ընկերը և ամենից պատրաստվածը, տեսականի մտքով, նույնպես և նրանց հետ հավասար չափով գործի դժվարությունները տանող, վայելում էյի, անկասկած, նրանց մեջ հարգանք և ընդունված էյի նրանց կողմից: Յեվ ահա յես ինձ պարտավոր էյի համարում՝ ամեն կերպ վայելչացնել մեր փոքրիկ հասարակության կյանքը մեր սակավաթիվ յերեկոյան ազատ ժամերի ընթացքում: Յես կազմակերպում էյի միասին ընթերցանություն, միքանի ընկերների հետ պարապում էյի զանազան առարկաներից, իսկ ամենից շատ նրանց պատմում էյի պատմությունից ընդհանրապես և սոցիալիզմի պատմությունից մասնավորապես. առանձնապես մենք շատ ժամանակ էյինք նվիրում զանազան վերացական առարկաների, ինչպես, որինակ, աստղագիտությունն է: Աստղագիտությունը շատ էյինք տարվում: Յես դեռ այն ժամանակ քիչ տեղեկություններ ունեյի այդ առարկայից. և մենք, բացի աստղադարդ յերկնքի մասին ընդհանրապես դրույցներ ունենալուց, հաճախ՝ ամառային գիշերները դուրս էյինք գալիս մեր փոքրիկ բակը, պառկում էյինք գետնին և դիտում Բագվի մշտապես ջինջ յերկնքը, իսկ յես այդ միջոցին պատմում էյի նրանց մեր բակից տեսանելի համաստեղությունների մասին:

Ընկերներիս շրջանում ունեցած իմ այդ գիրքի շնորհիվ ինձ միշտ աջողվում եր նրանց մեջ յեղած ամեն տեսակ ընհարումներն ու վեճերը հարթել, և, ասում եմ առանց ավելորդ համեստության, այդ խոստովանում էյին միաձայն նաև իրանք՝ ընկերները, յեթե մեզ աջողվել է մեր պայմաններում պահել սերտ բարեկամություն և սեր դեպի գործը, մեծ մասով այդ յեղել է իմ բնավորության շնորհիվ:

Յեթե ընկերներից մեկն այլևս չեք ուզում մեզ մոտ աշխատել, համարելով աշխատանքը ծանր կամ վոչ համապատասխան իր տրամադրություններին, մենք նրան արձակում էյինք, տալով նրան ամեն անհրաժեշտ բան:

Ըստ ֆրակցիոնական տրամադրությունների մեզանում գերակշռում էյին բայլշևիկները, կային նաև միքանի մենշևիկներ: Մեր մեջ տեղի ունեցող տարաձայնությունները բնավ չեյին անդրադառնում գործի վրա. իսկ կուսակցության յերրորդ համագումարից հետո, յերբ պաշտոնապես տեղի ունեցավ բայլշևիկների և մենշևիկների միջև յերկիւղեղում, տպարանն ամբողջովին անցավ Ռ. Ս. Դ. Բ. Կ. բայլշևիկների Կ. Կ. տրամադրության տակ:

Սկզբից մինչև լիկվիդացիան՝ տպարանում աշխատել են հետևյալ ընկերները. Իվան Բուկլաձեն, Վլադիմիր Դուբրաձեն, Սիրվեստր Տոդրիան, Կարաման Զաչին, Իվան Ստուբոլան և յես: Իսկ տպարանից յեկել-անցել են շատերը. ահա դրանց անունները. ընկ. Սեմյոն Յեռուկիձեն, նրա «մայր» Յելիզավետան, նրա «քույր» Լիդա Զնեկաձեն, Վլաս Մգելաձեն (Տրիա՝ հայտնի մենշևիկ), Վերա Ոսիպովնա Կորսակ—մենշևիկ, ընկ. Գերշուկովիչ՝ ուղարկված ժնեից, Մակար Գոգուաձեն՝ իր կնոջ՝ Մարիա Գոգուաձեյի հետ, Վասիլիյ Սուցաշվիլի, վոր հետո մահացավ Թիֆլիսի ցույցերի ժամանակ, ընկ. Սուվարյանց և Կատո Միկաձեն:

Այդ բոլոր ընկերների մասին յես կցանկանայի շատ լավ-լավ բաներ գրել, վորովհետև դրանք իրանց անձնվիրությունը կուսակցության մեծ ծառայություն են արել վոչ միայն այն ժամանակ, այլև հետագայում, մինչև այսօր ել մնալով կուսակցության շարքերում: Սակայն յես հույս ունեմ, վոր այս խնդրին կդառնամ մի ուրիշ անգամ, յեթե յերբեքից հաջողվի գրել առնել իմ հիշողությունները՝ կուսակցական աշխատանքների մասին ընդհանրապես:

Այստեղ պետք է հիշեմ, վոր այն ժամանակ կուսակցության կենտրոնական տպարանի հետ միաժամանակ Բագվում գոյություն ունեւ մեր անլեզու տպարանի ֆիլիալ բաժանմունքը, վորտեղ գրված եր ընկ. Կեցխովիլու ձեռք բերած մեր նախկին մեքենան: Այդ բաժանմունքում աշխատում էին վերև թված ընկերներից մի քանիսները: Այդ բաժանմունքում տպագրվում եր գլխավորապես վրացերեն և հայերեն գրականություն. Ռ. Ս. Գ. Կ. Կովկասյան Միություն համար: Այդ բաժանմունքը մենք չուտով լիկվիդացիայի յենթարկեցինք. տպարանը հանձնեցինք Թիֆլիսի կազմակերպության, վորտեղ նա գոյություն ունեւ մինչև 1906 թվականը և կործանության մատնվեց այդ թվականի աշնան: Յեւ այդպիսով, դժբախտաբար, Հաջողվեց պահպանել ընկ. Կեցխովիլու մեքենան:

Այժմ դառնանք մեր կենտրոնական տպարանի աշխատանքների հարցին: Ինչպես մշտական գործ, տպարանում տպվում եր «Իսկրան», վորպես կուսակցության կենտրոնական որգան: «Իսկրան» տպում ելինք՝ սկսած 53-րդ համարից մինչև 64-րդը, 10.000 ա կան որինակ: Կուսակցության՝ Ռուսաստանի բոլոր կոմիտեներին ուղարկվում եր այդ թերթը բավականաչափ քանակությամբ: Մեր տպած առաջին գրքերից մեկն եր Լենինի «К деревенской бедноте» բրոշյուրը, նույնպես և նրա հայտնի «Что делать?» գրքը: Երկր, Մարքսի ու Ենգելսի «Կոմունիստական մանիֆեստը», (ռուս.) և Կառլ Մարքսի «Երկուրտի ծրագիրը» (ռուս.): «Երկուրտի ծրագիրը» 100 որինակ տպագրել էինք հատուկ լավ թղթի վրա, ինքներս կարել, կտրել մեր արհեստանոցում: Մի որինակ մեր մակագրությամբ (ներքին շապկի վրա) նվեր ուղարկեցինք Կարլ Կառլ Մարքսին, վորը, ինչպես մեզ հաղորդեցին, հիացած եր մնացել, վոր իր յերկը մեր կուսակցության անլեզու տպարանում տպագրվել է և այդպիսի կատարելություն: Նա հուզվել եր, տեսնելով մեր կողմից ուշադիր վերաբերմունք: Մնացած որինակները (100-ից) ընկ. Կրասինը իվաճառ հանեց անլեզու կերպով, լրբերալ և մեր կուսակցության կեսհամակրող հասարակության մեջ, և այդ միջոցով մի կարգին գումար ձեռք բերավ: Բոլոր գրքերը, դրանց թվում նաև «Երկուրտի ծրագիրը», մենք տպում էինք 5—10.000-ական որինակ. մի քանի բրոշյուրների տիրաժը հաս-

նում եր 15 հազարի: Այս կամ այն պատվերի վերաբերյալ բոլոր ցուցմունքները մենք ստանում էինք Կ. Կ. տեխնիկական բյուրոյից: Մանավանդ մեծ քանակով էինք տպում թուղթիկները և «Իսկրայից» հանած առանձին հոդվածները, վորոնք վերաբերում էին ռուս-յապոնական պատերազմին: Հիշում եմ Պարվուսի մի հոդվածը՝ «Պատերազմը և հեղափոխությունը», նույնպես և ընկ. Տրոցկու գրած բազմաթիվ հոդվածներն ու թուղթիկները: Յեղել են բազմաթիվ հոդվածներ՝ ընտրական սխտեմի, Սահմանադիր ժողովի և ուրիշ շատ ու շատ հարցերի վերաբերյալ: Գործ միշտ շատ էլինք ունեւում, և մենք հաճախ, մանավանդ վերջին ամիսները, աշխատում էինք որբեր շարունակ 14 և նույնիսկ 16 ժամ որական: Գարունը մեզ հաճախ դուրս եր հրավիրում, բայց մենք, այնուամենայնիվ, վոչ մի տեղ չէինք հեռանում և մեր բոլոր ժամանակը գլխավորապես «սպանում էինք» աշխատանքի վրա: Ահագին բավականություն էինք զգում, վոր կուսակցական ամբողջ գրականությունը նախ և առաջ մեզ մոտ եր գալիս, այն ել բնագիրներով: Մենք կտրված էինք կուսակցական կենդանի աշխատանքից մասսաների մեջ, սակայն տեղյակ էինք կուսակցական գրական արտադրություններին: Այդպիսի մի դպրոց ապարդյուն չանցավ մեզանից շատերի համար, և հետագայում, մի անգամ ընդմիջտ, մեզանից ամեն մեկին ոգնեւ է վորոշելու իր տեղն այն ժամանակ դեռ միասնական Ռ. Ս. Գ. Կ. այս կամ այն ֆրակցիայում:

Թերթիկներն ու թուղթիկները մենք տպում էինք պապիրոսի բարակ թղթի վրա: Բրոշյուրները նույնպես տպում էինք թեթև թղթի վրա, ընդամին կարում էինք, ավելորդ լուսանցքները կտրում և այդպիսով ուղարկելի գրականության ծանրությունը հասցնում էինք նվազագույն չափի: Գրականությունը հենց տպարանում էինք տեսակավորում, բաշխում ըստ հասցեների, կշռում և ճիշտ նշանակում, թե վորտեղ ինչ գրականություն և ինչքան (կշիռը) և ուղարկվում: Դժբախտաբար, կենտրոնական տպարանում նր տպված գրականության ցանկն անկարող եմ հիշողությամբ այստեղ առաջ բերել, սակայն հիշում եմ ճիշտ կշիռն այն գրականության, վոր զանազան կոմիտեներ մեզանից ստացել են: Մեր ձեռքով ուղարկված է կուսակցության զանազան կոմիտեների հասցեյով, միայն զուտ կշիռը հաշված, ընդամենը 548 փուլ: Յեթե ինկատի առնենք, վոր ամբողջ գրականությունը տպագրվում եր շատ թեթև թղթի վրա, այն ժամանակ կտեսնենք, վոր դա մի ահագին քանակություն է: Յես լավ հիշում եմ, վոր տպարանը լիկվիդացիայի յենթարկելուց դեռ շատ առաջ, մենք տպել էինք միլիոն որինակից ավելի, և այդ դեպքը մինչև անգամ տոնեցինք մի փոքրիկ կերուխումով: Այդ 548 փուլ գրականությունից տեղ է հասել 416 փուլ, կորցրել ենք 32 փուլ: Պոլտավայում ու Յելիսավետոգրադում մենք կորցրինք մոտ 10 փուլ, իսկ մնացած 20 փուլը կորցրել ենք Սամարայում հետևյալ պարագաներով:

Պոլտավայի և Յելիսավետոգրադի անաջողություններից հետո Բագվի վրա մեծ ուշադրություն էին դարձնում և, յերկաթուղային գործակալների տեղեկություններին նայած, բեռների առաքումների հսկողությունը խնամքով եր կատարվում: Մենք գրականություն ուղարկելու համար դիմեցինք ուրիշ միջոցի և ուժեղացրինք նավագնացության ժամանակաշրջանում՝ Հաշտարխանի վրայով Վոլգայի ուղղությամբ առաքումները: Մենք դեռ մինչև

այդ ուսումնասիրում էյինք, թե Բագրից յերկաթուղով և ծովով ինչ ապրանքներ են ուղարկվում և ինչպիսի ծրարներով: Մենք սկսեցինք Վոլգայով ուղարկել գրականություն յերկու փթանոց հակերով (արկղների մեջ): Այն ժամանակ զանազան առևտրական տներ մեծ քանակություններով՝ գուղրոն (մի տեսակ կուպր—խալժղան) էյին ուղարկում Ռուսաստան: Այդ ապրանքն ուղարկվում էր արկղներով կամ տակառներով: Մենք մեր արհեստանոցում պատվիրեցինք կրկին (կրկնակ) արկղներ: Ներսի արկղի մեջ մենք դարսում էյինք գրականություն և ապա այդ արկղը դնում մեծ արկղի մեջ և վերջինս լցնում գուղրոնով: Արկղի վրա դնում էյինք համապատասխան մակագիրները՝ գուղրոնի տեսակի ու համարի վերաբերյալ. այս արկղներն ուղարկում էյինք Սամարա, Սարատով և ուրիշ քաղաքներ՝ բեռնագիրը ներկայացնողի հասցեյով: Գործը լավ եր գնում, բայց 1905 թ. հուլիսին, յերբ շոգենավի տրյուկից հանում էյին հակերը, վերան մեքենայի շղթայից դուրս են պրծնում և ներքև թափվում միջանի արկղներ, վորոնցից մեկը ջարդուփշուր և լինում: Ջարդված արկղներից գուղրոնը դուրս և թափվում, ըստվորում տաքության բարձր աստիճանին նա հալվում և և սովորաբար հեղուկ վիճակ և ընդունում, և գուղրոնի հետ միասին սկսում և դուրս սողալ նաև գրականությունը, վորովհետև ներսի արկղն ել ջարդվել եր: Հասկանալի յե, բոր հակերը բաց են անում, և ի մեծ ցավ մեր՝ մեծ քանակությամբ գրականություն (մոտ 20 փութ) կորստյան և մատնվում: Այդ ամբողջ տեսարանին ներկա յե լինում մեր ընկերը, վորը յեկած և լինում գրականությունն ստանալու, և հասարակության մեջ կանգնած՝ սպասում եր, վոր շոգենավի բեռը թափեն: Այդ դեպքի մասին մեզ հաղորդում են, և մենք Բագրից այլևս «գուղրոն» չէյինք ուղարկում:

«Պրավիտելստվեննիյ վեստնիկ» պաշտոնական լրագրում լույս տեսավ մի հոդված՝ սոցիալ-դեմոկրատական անլիզալ գրականության ներմուծման մասին: Թերթն ապացուցանում եր, վոր գրականությունն արտասահմանից գալիս և Բագու Պարսկաստանով և այլն: Յեվ վոչվորի մտքով անգամ չեք անցնում, վոր այդպիսի քանակությամբ և, վոր գլխավորն ե, այդպիսի վորակով (լավ տպագրված) գրականություն կարելի յե տպագրել Բագրի անլիզալ պայմաններում:

8 փութ գրականությունը մենք կորստից ազատեցինք հետևյալ ձևով: Այդ գրականությունը մենք ուղարկեցինք՝ Յելիսավետգրադ, յերբ դրանից առաջ այնտեղ ուղարկած մեր գրականության կորստից հետո անցել եր մոտ յերեք ամիս, իսկ բեռնագիրները՝ Մինսկ, յեթե հիշողությունս ինձ չի դավաճանում, ընկ: Ադամովիչի անունով: Մենք սովորաբար այդպես ել անում էյինք. գրականությունն ուղարկում էյինք մեկ քաղաք, իսկ այդ գրականությունն ստանալու համար բեռնագիրները՝ մի ուրիշ քաղաք: Գրականությունն ու բեռնագիրներն ուղարկելուց հետո՝ յերկրորդ որը տեխնիկական բյուրոյից հեռագիր ստացանք, վոր ընկ: Ադամովիչը ձերբակալված և, և նրա հասցեյով վոչինչ չպետք և ուղարկել: Արդեն ուշ եր, բայց մենք շատ էյինք ուզում ժանդարմներից վրեժ հանել Յելիսավետգրադում մեր կորցրած գրականության համար: Մենք ձեռք բերինք Բագրի կայարանի բազմի բաժանմունքի ծառայողից միջանի հին բլանկներ: Այդ բլանկները, իհարկե, ուրիշ համարներ ունեյին: Բոլոր բլանկներն առաջ տպագրվում էյին Պետ-

րոգրադի պետական տպարանում*, և շատ դժվար եր կեղծել: Մինսկ ուղարկած բեռնագիրների համարները մեզ հայտնի էյին: Յես այս անգամ գործ դրի իմ ամբողջ գծագրական հատությունը: Մանր և հոգեմաշ աշխատանքի միջոցով ինձ աջողվեց, համարյա մի ամբողջ գիշեր նստելուց հետո, հին բլանկների համարները փոխել և Մինսկ ուղարկած բեռնագիրներին համարները դնել: Գործը կատարված եր հիանալի: Մենք մեր ընկերներից մեկին այդ փաստաթղթերով անհապաղ ուղարկում ենք Յելիսավետգրադ, վորտեղ նա առանց վորևե խոչընդոտի ստանում և մեր ուղարկած ապրանքը: Տեխնիկական բյուրոյից և Յելիսավետգրադի մեր ընկերներից հետո իմացանք, թե ինչպես Մինսկ ուղարկած մեր բեռնագիրներն ընկնում են ժանդարմների ձեռքը, և ինչքան են ցավում նրանք, յերբ գալիս յեն Յելիսավետգրադ այդ թղթերով ապրանքն ստանալու, բայց տեղը վոչինչ չեն գտնում, և համեմատելով մեր կեղծած բեռնագիրները իսկականների հետ, մնում են չափազանց զարմացած. դրա պատճառով Բագրի ապրանքային կայարանը քննության և յենթարկվում: Յերկաթուղու ծառայող մեր ընկեր Նեստոր Մամուլայիլին, վորն այդ կողմից մեզ համար մեծ ծառայություններ եր անում, քիչ տուժեց այդ դեպքերի հետևանքով: Բայց և շուտով նրա «իրավունքները» վերականգնեցին, իբրև ամբասիր աշխատավորի:

Տպարանի աշխատող ընկերների ներքին փոխադարձ հարաբերությունները թեև միշտ մնում էյին բարեկամական, սակայն մեր կուսակցության կյանքի վորոշ մոմենտներում յենթարկվում էյին զգալի յերբերումների: Հիշում եմ, յերբ «Իսկրայի» խմբագրությունից ընկ. Լենինը հեռացավ, և յերբ նա սկսեց «Վպերյոդ» թերթը հրատարակել, թե ինչպես սրվեցին մեզանում հարաբերությունները: Այն միջոցներում սկսեցին լույս տեսնել մի շարք բանակավական հոդվածներ մեկ կողմից՝ «Իսկրայում», մյուս կողմից՝ «Վպերյոդ» թերթում: Այդ հոդվածները վերաբերում էյին կազմակերպական և տակտիկական հարցերի: Առանձնապես լավ հիշում եմ, թե ինչպես մենք տաքացած վիճաբանում էյինք ղինյալ ապստամբության և իշխանությունը ձեռք բերելու մասին լույս տեսած հոդվածների աթիվ, յերբ Պլեխանովի և Լենինի միջև բռնկվել եր բանակով: Մեր ընկերների մեծամասնությունը Լենինի կողմն եր: Այն ժամանակ դեռ չկային բայլշևիկներ և մենշևիկներ, բայց մեր ընկերների մեծամասնության համակրանքը հին «Իսկրայի» կողմն եր: Մեղանում մեծամեծ վիճեր յեղան գապոնյան պատմությունից հետո: Չնայելով այն տարաձայնություններին, վոր ծագում էյին մեզանում, մենք միշտ կարողանում էյինք մեր վեճերը հարթել, զգալով, վոր չափազանց մեծ պատասխանատվություն ունենք կուսակցության առաջ. սակայն կուսակցության III համագումարի ժամանակները, յերբ «Պրոլետարի»-ն հայտարարվեց բայլշևիկների կենտրոնական որգան, տպարանում մնացին միայն բայլշևիկական հոսանքի կողմնակիցները:

Կուսակցությունն աճել եր, գրականության կարիքը չափազանց մեծացել այնպես, վոր չնայելով մեր տպարանի արտադրողականության և գրականության չափազանց աջող տարածման՝ ամբողջ Ռուսաստանում, այնուամենայնիվ մենք անկարող էյինք հագեցնել կուսակցության՝ տպագրական խոսքի ծարավը: Գրականության կարիքը սաստիկ զգալի յերբ գրել-

* Экспедиция заготовления государственных бумаг.

խաղաղապետ Մոսկվայի և Պետրոգրադի արդյունաբերական շրջաններում: Մեր կուսակցության Կ. Կ. ինկատի առնելով այն հանգամանքը, վոր մեր տպարանը կտրված է այդ արդյունաբերական կենտրոններից և բայլշեիկական ոչախներից, հարց դրեց՝ միջոցներ ձեռք առնելու և Մոսկվայում տպարան հիմնելու մասին, այդ բանի համար ոգտվելով մեր ընկերների փորձերից: Ընկ. Սեմյոնը կանչվեց Մոսկվա. նրան հանձնարարվեց այդ քաղաքում տպարան կազմակերպելու գործը: Այդ ժամանակ Լեոնիդ Բորիսովիչ Կրասինը աշխատում էր նույնպես Մոսկվայում: Սեմյոնը Մոսկվա յեկավ, վորպես կովկասյան ապրանքների առևտրական: Նա վարձեց խանութ, այնտեղ դարսեց բրինձ, չամիչ և կովկասյան այլ և այլ ապրանքներ, տպարանը հաստատվեց խանութի կողքին, Լեոնայա փողոցի վրա, ստորերկրի մի շենքում: Բազմի մեր տպարանից այնտեղ ուղարկվեցին ընկ. ընկ. Սիլվեստր Տոգերիան և Գեորգի Ստուբոլան: Իմիջի ալոց, վորպես խանութի սպասուհի-գործավոր, աշխատում էր նաև ընկ. Իկրիանիստովան (այժմ Համկիսի անդամ) «Տրուբա» Մակդիրով: Նա միայն 1922 թվականին իմացավ, վոր այնտեղ, վորտեղ ինքն աշխատելիս է յեղել 1905 թվականին խանութում, իբրև սպասուհի, անլեզու տպարան է յեղել: Այդ հանգամանքը մի ավելորդ անգամ ապացուցանում է, թե վորքան բարձր է յեղել մեր ընկերների գաղտնապահությունը: Լեոնայա փողոցի տպարանն աշխատում էր շատ հաջող. նա սկսեց ամեն տեսակ ընթացիկ գրականություն մատակարարել կենտրոնական արդյունաբերական շրջանին, վորով շատ թեթևացավ Բազմի կենտրոնական տպարանի գործը: Լեոնայա փողոցի տպարանն արժանի յե, վոր նրա մասին պատմեն և գրեն այն ընկերները, վորոնք անմիջապես աշխատել են այնտեղ. այդ իմ խնդրի սահմաններից դուրս է:

1905 թվականի ամառվա ամիսներին, յերբ Մոսկվայի տպարանն արդեն սկսել էր գործել, Բազմի տպարանը թեթևացել էր իր առօրյա և անհետաձգելի պատվերներից: Բազմի տպարանի պատվերները շտապ գործի ընդլայնում էին, և այդ ժամանակից սկսած՝ մեր աշխատանքների մեջ չէր նկատվում այն փութկոտությունն ու տենդային գործունեությունը, վոր կար նախընթաց տարիներում: Մենք սկսեցինք տպագրել բացառապես գրքույկներ և առանձին ժողովածուներ: Հունվարի 9-ին հաջորդող դեպքերը, վորոնք հետո գործը տարան հասցրին 1905 թվականի հոկտեմբերյան ազատություններին, չեյին կարող չանդրադառնալ մեր տպարանում սահմանված ներքին ռեժիմի վրա: Բանվորական արձակ ու ազատ շարժման աճման համընթաց մեր ընկերները շարունակ ավելի ու ավելի հաճախ եյին սկսում խոսել այն մասին, վոր ժամանակ է արդեն այդ խիստ ծածկարանից դուրս գալ ու սկսել աշխատել մասսաների մեջ: Մի խոսքով՝ մոտալուտ ազատությունները» և բանվորական շարժման աճումը բովանդակ Ռուսաստանում՝ մեր խիստ կոնսպիրատիվ միջավայրն եյին մտցնում այն, վոր ժամանակակից լեզվով կոչվում է կազմալուծում: Որեցոր ավելի և ավելի յեր դժվարանում գտվել ընկերների բնական ձգտումը՝ դուրս գալ ազատ, մյուս կողմից ել տպարանի աշխատողներից շատերը գիտակցում էյին, վոր մեր տպարանը կուսակցության համար արդեն այնքան ել անհրաժեշտ չէ, ինչպես առաջ: Հավատացած եյին, վոր կուսակցությունն այժմ շատ լեզու հնարավորություններ ունի և կարող է բավարարել տպագրական խոսքի հարաճուն պահանջը: Բայց և այնպես, շնորհիվ ընկերների արդեն անցած դպրոցին ու բարձր

կարգապահություն, մեր տպարանում արտաքին ունեքին ռեժիմի խախտման և վոչ մի դեպք տեղի չունեցավ: 1905 թ. հոկտեմբերի 17-ի հրովարտակից հետո կուսակցությունն սկզբներում հիրավի ստացավ մեծագույն չափով հնարավորություն ամեն տեսակ գրականություն հրատարակելու, նույնպես և պարբերական հրատարակություններ ունենալու, և պատվերների հոսանքը դեպի մեր անլեզու տպարանը մեկեն պակսեց ու հասավ նվազագույն չափերի: Մեր առաջ ծագացավ այն հարցը. կամ աշխատանքներն ու աշխատողների շտապը կրճատել, կամ ժամանակավորապես փակել տպարանը: Մյուս կողմից մեղանում յերկյուղ ծագեց, վոր մեր շուրջն ստեղծված նոր պայմաններում ավելի հեշտ է ամբողջ գործը կործանել: Մենք բնազդորեն գիտակցում էյինք, վոր անլեզու տպարանը կարող է մեղ դեռ հարկավոր գալ: Յես լավ հիշում եմ հոկտեմբերյան դեպքերի առթիվ հայտնաբերած մեր անլեզու խմբակի հրճվանքը, սակայն լավ հիշում եմ և այն, վոր յերբ մենք սկսում էյինք այդ դեպքերը գնահատման յենթարկել, ամենքը, չգիտեմ՝ ինչու, գալիս եյին նույն յեղրակացություն, այն է՝ վոր այդ «ազատությունները» հաստատ չեն, վոր մենք, թերևս, նորից ստիպված պիտի լինենք մշտնել ծածկարան և այնտեղ աշխատել, ինչպես մի տարի առաջ: Մենք ինքներս չկարողացանք վճռել մեր տպարանի բախտը, իսկ այդ ժամանակ Բազմի մի կողմից այդ գործի համար լիազորված ընկեր չկար: Վճռվեց՝ ինձ ուղարկել Պետերբուրգ Կ. Կ. առաջ հարցերը պարզելու համար: Նոյեմբերին հասնում եմ Պետերբուրգ: Յես գնացի Ռ. Ս. Դ. Բ. Կ. բայլշեիկներին Կի խորհրդակցություն: Խորհրդակցությունը կայացավ ինժեներ Բրուսնի բնակարանում: Այդ խորհրդակցության ժամանակ յես տեսա ընկ. Լենինին առաջին անգամ: Յես չափազանց շփոթված եյի, յերբ ընկ. Լենինն ինձ գիմավորեց այս խոսքերով. «Ա, ընկեր Ավելն է սա ել»:

Նա մեկեն գործի անցավ ու սկսեց հարցեր տալ հարավային Ռուսաստանի, Կովկասի գործերի դրություն, մեր կազմակերպությունների տրամադրությունների մասին. հարցնում էր մասնավորապես, թե ինչպես են զգում իրանց այն ընկերները, վորոնք աշխատում են տպարանում. և արդյոք նրանք չեն ձգտում դուրս գալ ազատ: Յես այստեղ նրան և ներկա ընկերներին՝ Կրասինին, Բոգդանովին, Պոստալովսկուն՝ համառոտ հաղորդեցի, թե ինչ է կատարվում Բազմի և ինձ հայտնի ուրիշ տեղերում, մասնավորապես պատմեցի նաև մեր տպարանի և ընկերների տրամադրությունների մասին: Հենց այստեղ, ել յես հանձնեցի նրանց մեր վճիռը, վոր մենք ավելի հոժարություն կհամաձայնեյինք մնալ նույն անլեզու պայմաններում, նույնիսկ ժամանակավորապես վոչինչ չանելով, քան թե ձեռք դարկել լիկվիդացիայի յենթարկելու մի գործ, վոր գլուխ է բերված այնքան դժվարություններով և վոր փորձված է իր գաղտնապահությունը ամեն կողմից: Յես լավ հիշում եմ, վոր ընկ. Լենինը հենց այստեղ սկսեց ծաղրել այն ընկերներին, վորոնք, նրա եմ, վոր ընկ. Լենինը հենց այստեղ սկսեց ծաղրել այն ընկերներին, վորոնք, նրա եմ, խոսքով, տարվելով վիճակներից «ազատությունն ապահովված կլինի այն չափով, վոր, համեմայն դեպս, մասուլի ազատությունն ապահովված կլինի այն չափով, վոր մենք այլևս ստիպված չենք լինիլ ստորերկրյա նկուղներում մարդկանց թաղելու»՝ պատերի մեջ: Բայց և այնպես Կի անդամների ձայների մեծամասնությունը վճռվեց՝ Բազմի մեր կենտրոնական տպարանը լիկվիդացիայի յենթարկել, իսկ աշխատավորների բնակազմը (կադր) պահել ամբողջովին և տեղափոխել Պետերբուրգ՝ աշխատելու մեծ լեզու տպարանում, վորը բայլ-

շեկները մտադիր եյին բաց անել. այդ գործավորներին հետագայում, յեթե անհրաժեշտ լինի, ասում եյին այնտեղ, մենք նորից կհրավիրենք անլեզալ պայմաններում աշխատելու, և նրանք իրանց փորձով կարող կլինեն նորից այդ գործը գլուխ բերել: Այնտեղ ել վճովեց՝ մեքենան ուղարկել Պետերբուրգ: Մինչև բայրախիկների յենթադրյալ լեզալ տպարանը բաց անելը վճովեց մեքենան դնել Լիտվայի պրոսպեկտի վրա գտնվող տպարանում, վորտեղ տպվում եր Բոնչ-Բրուկսիչի և Պ. Պ. Ռումյանցևի ձեռքով հրատարակվող «Վեստնիկը»: Այդ ժամանակաշրջանում մեր կուսակցութան Կենտրոնական Կոմիտեյի և մենչեիկների կազմակերպական կոմիտեյի (այդպես եր կոչվում նրանց ԿԿ) միջև տեղի եյին ունենում բանակցութուններ՝ միութեան և ընդհանուր կենտրոն ստեղծելու համար: Ընկ. Լենինն ինձ հետ խոսեց, իմիջի ալոց, նաև այդ խնդրի վրա, և նա այսպես արտահայտվեց. «Մենք մենչեիկներին առաջարկում ենք միանալ հավասար իրավունքով, բայց նրանք ուզում են ընդհանուր կենտրոնի մեջ իրանց շատ կողմնակիցներ մտցնեն: Դուք լինչպես եք կարծում, համաձայնե՞ք դրան, թե՞ չե՞ք»: Յես, ի հարկե, պատասխանեցի, վոր վոչ մի դեպքում: Ընկ. Լենինն սկսեց ծիծաղել և ասաց, թե լավ ասացիր, և իմ այդ խոսքի վրա դարձրեց ընկ. Բոգդանովի և մյուսների ուղադրութունը, իբր ասա, տեսե՞ք, ինչ են ասում կովկասյան ընկերները: Դրանից յես հետևեցրի, վոր Բոգդանովը ու մյուսները տրամադիր եյին ընդհանուր կենտրոն գնալ. բայրախիկների ձայների ավելի պակաս քանակով:

Պետերբուրգում միառժամանակ մնալուց հետո ձևակերպված վորոշում ստացա տպարանը լիկվիդացիայի յենթարկելու մասին, նույնպես և անհրաժեշտ միջոցներ՝ այդ լիկվիդացիայի համար. ընդամեն ինձ պատվիրվեց փողի մի մասն ստանալ Մոսկվայի բայրախիկական «Վալերյոզ» թերթի խմբագրութունից, այն ե՛ ընկ. Գոլուբկովից: Յես Մոսկվայի ընկերներին իմիջի ալոց պատմեցի, վոր գնում եմ Բագու մեր անլիզալ տպարանը լիկվիդացիայի յենթարկելու: Հիշում եմ՝ հանգուցյալ ընկ. Մարատը (Շանցեր) տհաճութեամբ վերաբերվեց այդ գործին: Յես Բագու մեկնեցի դեկտեմբերի 6-ին, այն ե՛ Մոսկվայի զինյալ ապստամբութեան նախորդակին: Ամբողջ Մոսկվան յեռում եր այն ժամանակ. զգում եյիր, վոր դեպքերը հասունանում են: Յես, ինչպես և մյուս ընկերները, միանգամայն ազատ շրջում եյինք քաղաքում, զինված, գլխավորապես մաուզերներով, ազատ գնում եյինք փամփուշտ և Պետրովսկի պուրակում մարդվում եյինք հրաձգութեան մեջ: Մ. Գորկու բնակարանում, այժմ խորհուրդների 4-րդ տանը, մեր ռազմիկ կազմակերպութեան խորհրդակցութունն եր, վորտեղ պետք ե լիներ ձեռքի ռումբերի նոր տեսակների ցուցահանութուն: Մ. Ֆ. Անդրեյևան (Մ. Գորկու կինը) հոժարութեամբ թույլ տվավ, վոր այդ ցուցադրութունն իր բնակարանում լինի՝ միայն մի անհրաժեշտ պայմանով, վոր այդ ցուցադրութունը լինի Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու բացակայութեամբ, վորովհետև նա վախենում եր՝ ռումբերը պայթեն. չեր ուզում իր ամուսնու կյանքը փտանգի յենթարկել: Մենք, իհարկե, վոչ մի պայթումից յերկյուղ չունեյինք, ըստվորում ցուցադրում եյինք դատարկ ռումբեր՝ առանց լցնելու: Համաձայնեցինք, իհարկե:

Յես հասա Բագու վերջին գնացքով, ըստվորում արդեն հայտարարված եր ամբողջ Ռուսաստանում յերկաթուղային գործադուլ: Գալուս նախ-

ընթաց որը սե-հարյուրակայիններն սպանել եյին Պյոտր Մոնտինին, վոր բան-վոր-բայրախիկներից աչքի ընկնողներից մեկն եր: Բագվի բայրախիկների կոմիտեն վորոշեց վերթարի մի հուղարկավորութուն կազմել և Մոնտինի մարմինը Թիֆլիս փոխադրել: Հուղարկավորութան, պարզ ե, մասնակցում եյին նաև մենչեիկների և ես-երների կազմակերպութունները: Դեկտեմբերի 9-ին նշանակված եր բոլոր յերեք կազմակերպութունների կոմիտեների մեծ նիստը՝ հուղարկավորութան արարողութան հարցը քննութեան առնելու համար: Ընդհանուր գործադուլ եր հայտարարված վոչ միայն յերկաթուղիներում, այլև նավթահանքերում և Բագու քաղաքում: Այդ խորհրդակցութեան ժամանակ յես առաջին անգամ յերևացի իմ կովկասյան ընկերների աչքին, վորոնց յերեք տարուց ավելի չեյի տեսել: Նրանք շատ զարմացան, յերբ ինձ տեսան, ըստվորում նույնիսկ իմ ամենամոտ ընկերները չգիտեյին, վոր յես այդ բոլոր ժամանակ աշխատում եյի Բագվում: Յես նրանց հայտարարեցի, թե յեկել եմ Պետերբուրգից, ԿԿ-ից միջանի հանձնարարութուններ ունեյի Բագվի մեր կոմիտեյին հաղորդելու: Բայրախիկների ԿԿ-ից յես հուղարկավորութեան բոլոր յերեք կազմի մեջ մտա: Հիշում եմ, թե ինչպես գիշերը, ժամը 2-ի մոտ, մեզանում հարց ծագեց, վոր անհրաժեշտ ե Պյոտր Մոնտինի հուղարկավորութեան հետ կապված հարցերի առթիվ արտակարգ կոչ հրատարակել՝ ուղղված բոլոր բանվորներին և բնակիչներին: Պարզվեց, վոր անկարելի յե այդ կոչը տպագրել և հասցնել մինչև առավոտ, չնայելով վոր Բագվի կոմիտեյի ձեռքին եր այն ժամանակ քաղաքի իրական իշխանութունը: Ընկերները մնացել եյին չափազանց զարմացած, յերբ յես ընկ. Ալյոշա Զափարիձեյին առաջարկեցի, վոր կոչի ձեռագիրը տա ինձ, խոստանալով առավոտյան ժամը 4-ին միջանի հազար տպագրած որինակ հասցնել: Յես դիմեցի մեր անլեզալ տպարանը, արթնացրի ընկերներին, և կոչը 2 ժամից հետո արդեն տպագրված եր լավ թղթի վրա և լավ տառերով: Յես վերադարձա ժողովը, հետս բերելով թերթիկների մի կապոց: Այդ թերթիկները հենց այստեղ ուղարկվեցին ըստ շրջանների: Այդ գիշեր յես ընկ. Ալյոշային առաջին անգամ հաղորդեցի, վոր Կենտրոնական Կոմիտեյի գլխավոր տպարանը գտնվում ե Բագվում, և վոր յես այս վերջին տարիներն աշխատում եյի այնտեղ: Մոնտինի հուղարկավորութեան մասնակցում եյին բազմահազար ժողովուրդ: Հատուկ գնացք եյինք պատվիրել՝ դադաղ և ուղեկցող պատգամավորութունները Թիֆլիս տանելու համար: Յես նույնպես ուղեկցում եյի: Թիֆլիսի ընկերները մեզ դիմավորեցին սեմաֆորի մոտ կերոններով և Թիֆլիսի հազարավոր բանվորների յերգերով: Գնացքը կանգ առավ սեմաֆորի մոտ: Մոնտինի մարմինը տարանք նրա մոր բնակարանը, վորն այնտեղ մոտ եր: Բագվի պատգամավորութեան դիմավորող Թիֆլիսի բանվորների գլուխն եր մենչեիկների կողմից հեռուոր Ռամիշվիլին, իսկ բայրախիկներից Սակվարելիձեն, վոր դեռ այն ժամանակ բայրախիկ եր:

Թիֆլիսից վերադառնալով Բագու՝ յես ընկերներին հետ սկսեցի տպարանը լիկվիդացիայի յենթարկել: Բացի մեքենայից՝ մենք ունեյինք ահագին քանակութեամբ ամեն տեսակի տպագրական նյութեր, նույնպես և մինչև 60 փութ պատրաստի գրականութուն: Բոլոր նյութերն ու ամբողջ գույքը. բացի մեքենայից, մենք հաւձնեցինք բայրախիկների Բագվի Կոմիտեյին: Մեքենան քակեցինք և ծրարեցինք յերկու արկղերի մեջ: Այդ արկղում բոլոր ընկերներն ել աշխատում եյին ծուլորեն և անհոժար: Ինչ-

քան ել նրանք չձգտեցին դուրս գալ ծածկարանից արձակ ու ազատ մթնոլորտը, այնուամենայնիվ ցավ էլին զգում, վոր թողնում, հեռանում են իրանց սրտին արդեն հարազատ չեղած, վոր գլխավորն է, բունը և քանդում, քայքայում են այն ամենը, վոր քայլ առ քայլ ստեղծել և հաստատել էինք։ Մեր հարեանները, թուրքերը, առաջին անգամ տեսան և իմացան, թե ինչ է յեղել կատարվելիս իրենց կողքին։ Նրանք զարմացած որորում էին իրենց գլուխը և իրար քսիսում։ Մեր սենյակից ծածկարանը տանող մուտքը փակեցինք ու հողով ծածկեցինք, այնպես շինեցինք, ինչպես առաջ եր։ Այնտեղ մեքենայի հիմքի տակ, մենք թաղեցինք մի ձուլածո կապարյա տախտակ, թվականներով ու մեր ստորագրություններով։ Հավանորեն այդ տախտակն այժմ կարելի չե դուրս հանել այնտեղից։ Այսպես դուրս յեկավ արևի լույսը մեր մեքենան, վորը մոտ յերկու տարի լուսավորվում եր միայն արհեստական լուսով։ Ընկերներն արձակվեցին այն պայմանով, վոր կուսակցության առաջին պահանջով նրանք պարտավոր են գնալ Պետերբուրգ կամ մի ուրիշ տեղ, վորտեղ կասե կուսակցությունը։ Մեր ծածկարանի լիվիդացիան ու քայքայումը տեղի ունեցավ 1906 թվի հունվարի 19-ին, իսկ մեքենան բանի էլինք գցել 1903 թվի նոյեմբերի 1-ին. այդպիսով նա ծածկարանում աշխատել է յերկու տարի յերկու ամիս, իսկ այնտեղ դրված է յեղել ավելի առաջ։

Փետրվարի կեսերին յես գնացի Պետերբուրգ, ստացա մեքենան և սարքեցի նախ Լիտվյանի պրոսպեկտի վրա և հետո, յերբ բացվեց «Դելո» տպարանը (բայլճեկներն մեծ լեզալ տպարանը), մենք մեքենան տեղափոխեցինք այնտեղ։

Ստոլիպինի կարգադրությամբ «Դելո» տպարանը քարուքանդ լինելուց հետո մեր մեքենան և իշխան Մեղչերսկուց գնած մեքենան (Մեղչերսկին այդ մեքենայով տպագրում եր իր հոշակավոր «Դելո Նարոդա» թերթը, իսկ մենք տպագրում էինք «Վոլնա», «Ելո» և «Պետերբուրգսկոյե Ելո» թերթերը) փոխադրվեցին Բերեզինի նախկին տպարանը։ Այդ տպարանի կառավարիչն եր Ա. Ա. Բելյակովը, և ինձ թվում է, վոր այժմ նրա միջոցով կարելի չե գտնել Բագվի մեքենան, կամ «Բագինկան», ինչպես անվանում էին նրան լեզալ տպարաններում, և նվիրել, որինակ, հենց Մոսկվայի կամ Պետրոգրադի «Պրավդային» կամ պահել իբրև թանգարանի իր, ըստվորում նա արժանի չե այդպիսին լինելու։ Յեթե մեզանում յերբեկեցե կազմակերպվելու լինի անլեզալ տպագրական մամուլներ և ամեն տեսակ պարագաների թանգարան, կըստացվեր մի շատ հետաքրքրական դիտական պատկեր—ամենանախնական մամուլներից սկսած մինչև առաջնակարգ շրջադարձիկ մեքենաները։

1906 թվականին, I Պետական Դումայի ցրումից հետո, դեպքերն ընդունեցին այնպիսի ընթացք, վոր հարց ծագեց կուսակցական անլեզալ որդան հրատարակելու մասին։ Բագվի և Մոսկվայի անլեզալ տպարաններում աշխատողների կազմը ֆուում եր ամբողջովին։ Սկզբներում նրանց մեծամասնությունն աշխատում եր «Դելո» տպարանում, իսկ այդ տպարանն ալերվելուց հետո այդ նույն ընկերներին հանձնարարվեց, վոր Ֆինլանդիայի Վիբորգ քաղաքում կազմակերպեն «Սոցիալ-դեմոկրատ» թերթի տպագրության և հրատարակության գործը։ Այդ թերթը այն ժամանակվա մեր որդանն եր։ Այն ժամանակ Վլադիմիր Իլյինն ապրում եր Կուսկկալայում, վորտեղ ուղարկվում եր թերթը՝ սրբագրության համար։ Պարտք եմ համարում

նշելու, վոր բոլոր այն ընկերները, վորոնք մասնակցում էին իմ հիշատակած տպարանների աշխատանքներին, բոլոր ժամանակ ակտիվ մասնակցություն ունեցին կուսակցության աշխատանքների և վերջին ժամանակի հեղափոխական դեպքերի մեջ, և մինչև այժմ ել նրանցից շատերը կուսակցական կամ խորհրդային պատասխանատու պաշտոններ են կատարում։ 1906 թ. հունիսին, Կի վորոշմամբ, Պետերբուրգից յեկա Անդրեևիկա՝ այնտեղ աշխատելու համար։ Մինչև հոկտեմբեր ամիսը յես աշխատում էի Գուլթայիի նահանգի գյուղական կազմակերպությունների մեջ, իսկ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. այն ժամանակ միասնական համակովկասյան համագործարից հետո աշխատում էի Բագվի կազմակերպությունում։ Այսպիսով, Բագվում 1902 թվականին ձերբակալվելուց հետո, յես կրկին հնարավորություն ստացա վերադառնալու իմ սրտին սիրելի աշխատանքին՝ Բագվի պրոլետարիատի շրջանում։ Կուսակցության մեջ իմ հետագա աշխատանքը վերաբերում եր ուրիշ բնագավառի և անմիջական առնչություն չունեցի անլեզալ տպարանների հետ, ուստի և հարկավոր եմ համարում այստեղ վերջացնել անլեզալ տպարանների մասին իմ ունեցած հիշողությունները։



Faint, illegible text visible through the paper, likely bleed-through from the reverse side.



2



ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0179567

